



ԶՄԻԱԾԻՆ

1979

9.

440790



Լ Ձ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ժ... Ի Կ


1979



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ, ԻՍԹԱՆՊՈՒԼ,
1978, 233 էջ

Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Ծնորհք սրբազան պատրիարքը գովելի նախանձախնդրությամբ շարունակում է հարընտացնել մեր եկեղեցական մատենագրությունը և մանավանդ վարքագրական գրականությունը արժեքավոր և մնայուն սուրբ գրական ուսումնասիրություններով:

1974 թվականին սրբազան հեղինակը ընթերցողների սեղանի վրա դրեց «Ասագ շաբաթ» 208 էջից բաղկացած հոգեշունչ խորհրդածությունների և ուսումնասիրությունների գիրքը, որը գրախոսվեց «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի հոկտեմբերի համարում, էջ 18—23:

Սրբազան հեղինակի «Ասագ շաբաթ» ուսումնասիրությունը ամբողջացնում էր նրա «Մեծ պահքի կիրակիներու ոսկի շղթան» (1971) և «Գունագեղ կիրակիներ և Հոգեգալուստ» (1972) կրոնական մատենաշարը:

Ծնորհք արքեպ. Գալուստյանը 1977 թվականին հրատարակեց «Աստուածաշնչական սուրբեր», Հավատքի հերոսներ, ուսումնասիրությունը, որի երկրորդ հատորն է կազմում «Համաքրիստոնէական սուրբեր» գիրքը, իսկ երրորդ գիրքը կոչվելու է «Հայագի սուրբեր»:

«Աստուածաշնչական սուրբեր» ուսումնասիրությունը գրախոսվել է «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի օգոստոսի համարում, էջ 25—30: Սույն ուսումնասիրությունը

վերահրատարակվում է նաև «Էջմիածին» ամսագրում մաս առ մաս, 1977 թվականի է համարից սկսած:

«Համաքրիստոնէական սուրբեր» հատորը ընթերցողի սեղանին է դնում եկեղեցու կյանքի և գործունեության համար ընդհանրական արժեք և նշանակություն ունեցող, մեծավաստակ, առաքինի սրբերի ուսանելի կյանքն ու գործը: Հատորը բովանդակում է սրբազան հեղինակի բնութագրությամբ եկեղեցիի պարծանքներ և տալածիչներ հանդիսացող հայրապետներն ու մարտիրոսները, որոնց մասին հայ եկեղեցու ժամագիրքը հաստատում է.

«Զարսն պարտեցին,
Նեղութեանցն համբերեցին,
Լուսեղէն և անթառամ պսակացն
Արժանի եղեն»:

Գրախոսվող սույն հատորը բաղկանում է. «Ներածություն. Հալածանքներ, բովանդակալից մի մուտք»-ից (էջ 5—28), վեց գլուխներից և մի «չաւելում» բաժնից (էջ 29—227): Գրքի «Մուտք» բաժնում (էջ 5—10) սրբազան հեղինակը շեշտում է, որ «Աստուածաշնչական սուրբերու» մասին իր ուսումնասիրությունից հետո այժմ ձեռնարկել է ներկայացնելու նրանց «անմիջական շարունակությունը կազմող Քրիստոնէական եկեղեցիի սուրբերը, որոնք կտոնախմբվին Հայց. եկեղեցիի կողմէ»:

Հայ եկեղեցու տոնախմբած «Համաքրիս-

տոնակաճան սուրբեր» հանդիսացող հայրապետները ու վկաները ապրել և ստեղծագործել են մինչև Քաղկեդոնի ժողովը (451 թ.):

ՆԱԽԴՆԱԿ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԳԵՂԱՌԱՅԵՍՆՆԵՐ

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՍՈՒՐԲԵՐ

Ի ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՌԱՅԵՍՆՆԵՐ

1978

Այդ սրբերը ունեն «համաքրիստոնեական հանգամանք, քանի որ ընդունված են որպես սուրբ և կոռնվին հավասարապես պատմական ու առաքելական բոլոր հին եկեղեցիներեն... որոնք ունին իրենց ներկայացուցիչները ամուց մեջ» (էջ 5):

Ըստ մեր եկեղեցական օրացույցի, տ. Շնորհք սրբազան պատրիարք հոր հաշվումներով, համաքրիստոնեական սրբերը ավելի են, քան «երկու հարյուր անհատ կամ խմբական միջազգային վկաներ», որոնք «կուգան հին աշխարհի երեք երկրամասերեն. Ասիայեն, Աֆրիկեն և Եվրոպայեն»:

Համաքրիստոնեական 200 այդ սրբերը Աստուծո զաղափարի վրա իրենց մտածումներն ու զգացումները կենտրոնացրած սքանչելի անձնավորություններ են իրենց կյանքի բոլոր հանգրվաններում, իրենց հոգևոր ծառայության բոլոր բնագավառներում, որոնք Աստուծով լցված Նրա կենդանի ներկայությունը ամեն թույն ապրող ներշնչյալ հոգիներ են: Նրանց ապրած կյանքը կենդանի Ավետարան է:

Խոսելով «Համաքրիստոնեական սուրբեր»-ի մասին հեղինակը արդարորեն հաս-

տատում է, որ Հայց. առաքելական եկեղեցին նշելով այդ սրբերի տոներ, տված կլինի «գլխավոր փաստերեն մին իր ընդհանրականության» (էջ 6):

Սույն ուսումնասիրությունը գրելիս տ. Շնորհք սրբազանը օգտագործել է բավական հարուստ վարքագրական աղբյուրներ, ինչպիսիք են Գիրք որ կոչի Այսմատուրք, 1730, Կ. Պոլիս, 723 երկայունակ էջեր, ի տպարանի Գրիգոր դպիր Մարգուսանցիի (Տես Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800), Երևան, 1963, էջ 96): Երկրորդ՝ «Յայմատուրք» ըստ ընտրելագույն օրինակի, Տեր Իսրայելի, Կ. Պոլիս, 1834, ի տպարանի Պողոս Արապեան Ապուշեյցիի (Տես Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 679): Հեղինակը իր ուսումնասիրության ընթացքում օգտագործել է նաև այլ վարքագրական և վկայաբանական գործեր, հայերեն, հունարեն, անգլերեն լեզուներով (էջ 8—9):

Իր օգտագործած աղբյուրների մասին խոսելիս սրբազան հեղինակը նշում է նաև, որ «պրպտումի կարևոր աշխատանքներ կատարված ըլլալով հանդերձ՝ չենք նկատեր զայն քննական ուսումնասիրություն և ոչ ալ՝ վերլուծական երկասիրություն: Կատարվածը ուրիշ բան չէ եթե ոչ համադրյալ նոր կառուցում մը, շինանյութերը և քաղկացուցիչ տարրերը ընտրովի վերցնելով վերոհիշյալ աղբյուրներեն: Գործիս մասնահատկությունը, բացի բնականաբար նյութին մոտեցումի մեզի հատուկ կերպեն, որ կհետապնդե հիմնականը և հատկանշականը յուրաքանչյուր սուրբի կյանքին մեջ, դատավորման ու ներկայացման նոր ձևն է» (էջ 10):

Գրախոսվող գրքի 11—28 էջերը ներկայացնում են աշխատության «Ներածություն. Հալածանքներ» բաժինը: Գրքի մեջ «ներկայացված ավելի քան 200 սրբազան դեմքեր և հավատքի նահատակներ...» իրենց կյանքը կնքել են նահատակությամբ հալածանքների ընթացքում, հետևաբար սրբազան հեղինակը «Ներածություն» մասում հանգամանորեն և պատմական փաստերի վկայությամբ ներկայացնում է քրիստոնեական եկեղեցու ողջ պատմության մեջ հեթանոսների, հրեաների, քրիստոնեական աղանդավորների և քաղաքական իշխանությունների կողմից կատարված կատաղի հալածանքները, որոնց զոհ գնացել է համաքրիստոնեական սրբերի մեծագույն մասը՝ «մեծ հոգիներու, տաղանդավոր միտքերու, ինչպես նաև հասարակ հավատացյալներու կյանքի բոլոր ասպարեզներեն և ընկերային բոլոր խավերեն, որոնք եղան իրական հետևորդները Քրիստոսի, հերոս-

ները մեր սուրբ հավատքի և տարածիչները մեր կրոնքին ի սփյուռն աշխարհի, իրենց խոսքով, կյանքով ու արյունով, և ատով իսկ դարձան պարծանքները Մի, Հնդհան-րական, Առաքելական և սուրբ եկեղեցիին... Արժան է որ խոնարհվեք անոնց անմեղ հիշատակին առջև խոր հարգանքով, մեծ երախտիքով և անխառն սիրով» (Էջ 10—11):

Գրքի առաջին գլուխը՝ Եկեղեցական դեմքեր (Էջ 29—77), նվիրված է եկեղեցական մեծ գործիչների և առաջնորդների, այդ թվում՝ մեծամուն և վաստակաշատ պատրիարքների, հայրապետների, եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների, սարկավագների կյանքին և գործունեությանը:

Այս խմբի մեջ առաջինը հիշվում են անունները, կենսագրություններն ու մատենագրական վաստակը Ռեթեոս Աթենացու և Դիոնեսիոս Արիսպագացու, առաքելական Ա դարի եկեղեցական երկու այդ նշանավոր հայրերի կամ եպիսկոպոսների, որոնք մեր եկեղեցական տոնացույցում դասվել են ընդհանրական եկեղեցու «երկոտասան վարդապետաց» շարքը (Օրացույց, ս. Էջմիածին, 1979, էջ 128):

Այնուհետև սրբազան հեղինակը հաջորդ՝ 32—69 էջերի մեջ ներկայացնում է Կղեմես Հոռմի, Անտիոքի Ինգնատիոս, Զմյուռնիայի Պողոկարպոս հայրապետների, Լիոնի Երանոս կամ Իրենիոս եպիսկոպոսի, Գրիգոր Սբանդեղագործի, Կիպրիանոսի, Հակոբ Մծբնացու, Եփրեմ Խորիի Ասորու, Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, նրա եղբոր՝ Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացի Աստվածաբանի, Կյուրել Երուսաղեմացու, Եպիփան Կիպրացու, Հովհաննես Ոսկեբերանի, Կյուրել Ալեքսանդրացու կենսագրությունն ու մատենագրական վաստակը:

Գրքի Ա գլխի երկրորդ մասը (Էջ 70—78) նվիրված է նշանավոր քահանաների և սարկավագների կենսագրությանը:

«Ըզնավորությունը և վանականությունը» թեման կազմում է գրքի երկրորդ գլուխը (Էջ 78—86): Սրբազան հեղինակը ընդհանուր, բայց ամբողջական մի ակնարկի մեջ հանգամանորեն ներկայացնում է ընդհանրական եկեղեցու պատմության և գործունեության մեջ ծագումն ու դերը ըզնավորության և վանականության, «արդի ժամանակներու մեջ, ուր աշխարհայնությունը և բարքերու թուլությունը տիրապետող դարձած են», շեշտելով որ «հոգևոր կատարելության կարևոր ու կենսական շարժում մը եղավ ընդ-նավորությունը քրիստոնեական եկեղեցիի

պատմության մեջ» որպես «ժամանակին ամենեւնի տրամաբանական հոգևոր ուղին և բարոյապես ու ֆիզիկապես ամենեւնի առողջ կենցաղային դրությունը» (Էջ 78):

Այնուհետև մեզ ներկայացվում են մեծ ըզնավորների և անվանի անապատականների խստամբեր ու ուսանելի կյանքն ու գործունեությունը, որպես արտահայտությունը նրանց կենդանի հավատքին և քրիստոնեական սիրուն, այդ թվում Անտոն Ըզնավորի, Պողոս Թերապիդի ա-նապատականի, Մակարի, Նեղոս արեղայի, Հայր Արսենի, Սրապիոն անապատականի, Աթա Մարկոսի, Սիմեոն Սյունակեցու, Մարութ ըզնավորի և ուրիշների (Էջ 87—102):

Այս առթիվ սրբազանը վրդովմունքով և վշտով արձագանքում է, որ «այսօր հայկական և արևելյան վանականությունը բարոյապես և ամբողջացած մեծած է, թե իսկ անվանապես իր գոյությունը քաշկուռն հոս ու հոն: Վանքերը դարձած են կամ մշակութային հաստատություններ, որոն համար բացարձակ անհրաժեշտություն չկա կուսակրոնության, այսինքն կյանքի ամբողջական ողջակիզման, քանի որ աշխարհիկ մարդիկ ալ նույն պայմաններու տակ կրնան ընել նույն գործը և կամ՝ դարձած են ապաստարաններ հոգիե պարաված ծուլ մարդոց... որոնք լոկ պահպանությունը կրնեն վանական այդ հաստատության...» (Էջ 86):

«Համաքրիստոնեական սուրբեր» հատորի հաջորդ գլուխը նվիրվել է «պետական դեմքեր»-ի (Էջ 102—124), «որոնք իբրև թագավոր, իշխան, արքունի պաշտոնատար, զորավար և զինվոր բացառիկ ծառայություններ մատուցած են եկեղեցիին և կամ իրենց արյունը թափած են քրիստոնեական դատին համար» (Էջ 102):

Մինչև Դ դար եկեղեցու գոյության սպառնացող հալածանքներն ու բռնությունները չկարողացան ջլատել եկեղեցու ներույժ կյանքը: Եկեղեցին ապրում էր ներքին, հոգևոր, լիակատար կյանքով:

Դ դարում, սակայն, եկեղեցու արտաքին դրության մեջ ստեղծվեցին բարենպաստ պայմաններ: Կայսրության մեջ քրիստոնեությունը մյուս կրոնների կողքին գոյություն ունենալու և իր ազատ կյանքը տնօրինելու իրավունք է ստանում, և 313 թվականին Միլանիյի ծանոթ հրովարտական քրիստոնեությունը քաղաքացիական իրավունք է ստանում և պետական կրոն է հռչակվում և դառնում՝ հասարակության մեջ տիրապետող ուժ:

Ստեղծված այս նոր կացության մեջ եկեղեցին ամրապնդում է իր դիրքերը, կազմակերպում է իր նվիրապետական և ծիսապաշտական կարգը, վայելելով պետական

իշխանության հովանավորությունն ու պաշտպանությունը:

Այդ դարում է, որ եկեղեցին կարողանում է նաև կայսերական հրովարտակներով ծեռք բերել Տիեզերական ժողովներ գումարելու իրավունքը, եկեղեցական միություն հաստատելու հարցում, ուղղափառ հավատը պաշտպանելու, հերետիկոսները հալածելու և եկեղեցական կանոններ սահմանելու ուղղությամբ:

Տիեզերական ժողովները հրավիրում էին կայսրերը և նախագահում: Այդ ժողովներում սահմանված կանոնները պետական քաղաքացիական օրենքի ուժ և պարտավորություն էին ստանում, որպես պետական-քաղաքական օրենքի օրգանական մի մասը:

Տիեզերական ժողովների սահմանած կանոնների դեմ ըմբոստացողները համարվում էին ոչ միայն եկեղեցու հակառակորդները, այլ նաև պետության եկեղեցական քաղաքականության թշնամիները:

Դ դարից սկսած, ահա, ստեղծված այս նոր պայմաններում, եկեղեցին ու Տիեզերական ժողովները քրիստոնեական եկեղեցուն իրենց մատուցած մեծ ծառայությունների համար երախտագիտությամբ սրբերի կարգը էին դասում այն կայսրերին, որոնք պաշտպանում էին եկեղեցու դիրքերը, ուղղափառ դավանանքն ու սահմանած կանոնները: Եկեղեցին և պետությունը միասնական էին: Կայսրերի կատարած եկեղեցական գործունեությունը մեր շարականագիրքը բնութագրում է այսպես. «Որ զարդարեալ գեղապանմ վայելչությամբ սուրբ գեկեղեցի, պսակեցեր առաքելովք և մարգարէիք և հաստատեալ ամրացուցեր **սուրբ թագաւորօք**» (Ջալմբաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 57):

Առաջին կայսրը, որ սրբերի լուսապսակով է ներկայանում, դա Մեծն Կոստանդինոսն է: «Քիչերուն թերևս այնքան շատ պարտական է քրիստոնեական եկեղեցին, որքան Կոստանդինոս կայսր: Ան էր որ, ի վերջո, պաշտոնապես ազատեց եկեղեցին ավելի քան 250 տարիներ տևող հալածանքից մը, որ իր կայսր հռչակված օրերուն, 306-ին, հասած էր իր առտակազույն աստիճանին... Ոչ միայն ազատեց եկեղեցին հալածանքից, այլ նաև հովանավորեց զայն, տեղ ու պաշտպան կանգնեցավ անոր, և անպաշտոն կերպով գրեթե պետական կրոնի դիրքին բարձրացուց զայն» (էջ 102):

Մեծն Կոստանդինոս կայսրի օրով էր, որ գումարվում է Տիեզերական առաջին ժողովը Նիկիայում, 325 թվականին, մասնակ-

ցությամբ 318 հայրապետների, որոնք նգովում և դատապարտում են Արիոսի մոլորությունը: Կայսրը «եղավ ջերմ պաշտպանը և գործադիրը Նիկիո ժողովի որոշումներում... աքսորեց հակառակորդները... օժանդակեց մեծամեծ եկեղեցիներու շինության, որոնց գլուխը կենան Երուսաղեմի սուրբ Հարության, Համբարձման և Վերնաստան փառավոր տաճարները, ինչպես նաև Բեդեհեմի սուրբ Ծննդյան բազիլիկան» (104—105):

Մեր եկեղեցին Մեծն Կոստանդինոս կայսրի տոնը կատարում է հունիսի 26-ին, երեքշաբթի օրը, իր մոր՝ սուրբ Հեղինեի հետ (Օրացույց, 1979, ս. էջմիածին, էջ 83):

Երկրորդ կայսրը, որին մեծարում է եկեղեցին, դա «Մեծն Թեոդոս» կայսրն է (346—395), «որուն ևս շատ բան կպարտի ուղղափառ քրիստոնեությունը: Մեկը, որ գրեթե զնչեց հեթանոսության հետքերը, վերջ տվավ արիոսականության կայսրության սահմաններում մեջ և քրիստոնեությունը պաշտոնապես կայսրության կրոնը հռչակեց» (էջ 105): Մեծն Թեոդոսը 381 թվականին գումարում է երկրորդ Տիեզերական ժողովը Կ. Պոլսում, որին մասնակցում են 150 հայրապետներ, որոնք էլ նգովում են հոգեմարտ Կ. Պոլսի Մակեդոն պատրիարքի մոլորությունը:

Հայ եկեղեցին նրա հիշատակը կատարում է հունվարի 20-ին (Օրացույց, նույնը, էջ 21):

Պետական այլ բարձրաստիճան անձնավորությունների մեջ, որոնք պաշտպանել են քրիստոնեական դատը, դարձել են քրիստոնյա և իրենց մեծ նպաստը բերել՝ Քրիստոսի եկեղեցու հաղթանակի կամ նահատակվել եկեղեցու փառքի համար, վարքագրական գրականության մեջ, հիշվում են Ռամելաս հազարապետը, Փիլիպոս եպարքոսը, հայազգի «մալաթիացի ազնվական Պողեկոս գորապետը», Սարգիս գորավարը, Ադոկոսոս դուքսը, մի շարք գորականներ, այդ թվում Գևորգ գորավարը, Թեոդորոս Ստրատելատը և բազում զինվորներ: Տես այս մասին սույն գրքի մանրամասն տեղեկությունները, էջ 106—124:

«Կոյսեր» վերնագիրն է կրում «Համաքրիստոնեական տարբեր» գրքի չորրորդ գլուխը (էջ 125—140):

Հայ եկեղեցին առաջինը հանդիսացավ քրիստոնեական եկեղեցիների մեջ, որը տրվավ իր առաջին սրբունի կույս նահատակը Քրիստոսի փառքի համար: Նա Սանատրուկ արքայի դուստրն էր և ս. Թադեոս առաքյալի աշակերտը: Մեր շարականագիրքը ս. Սանդուխտին մեծարում է հետևյալ ձևով.

«Քն պարծի այսօր սուրբ եկեղեցի, ո՛վ վկայուիսի սուրբ Սանդուխտ» (Ծարական, նույնը, էջ 332):

Քրիստոնեական մյուս եկեղեցիները, որոնք «չունին ու Սանդուխտի տոնակատարությունը» (էջ 125), ունին սակայն 30 կույսերի հիշատակին նվիրված տոներ (Տես այս մասին նույն աշխատությունը, էջ 125—140), որոնց հիշատակը կատարում է ամեն տարի նաև մեր եկեղեցին:

«Համաքրիստոնեական սուրբեր» հատորի մեջ չեն մտել հայ եկեղեցու տոնախմբած հայրապետներից, վարդապետներից, թագավորներից, գորավարներից, կույսերից և այլ մարտիրոսներից որևէ մեկի անունը կյանքն ու նահատակության պատմությունը:

Տ. Շնորհք սրբազան պատրիարքը պատրաստում է մի այլ աշխատություն՝ նվիրված միայն հայ եկեղեցու սրբերին: Այդ հատորի վերնագիրն է **Հայագգի սուրբեր**, որը շուտով, հույս ունենք որ կհրատարակվի, լրացնելով սրբազան հեղինակի կրոնական մատենաշարը:

«Մարտիրոսներ» վերնագիրն է կրում «Համաքրիստոնեական սուրբեր» հատորի հիմնգործը գլուխը (էջ 141—158):

Այս վերնագրի տակ սրբազան հեղինակը համախմբել է մեր եկեղեցական Օրացույցի մեջ անցած համաքրիստոնեական այն բոլոր վկաները, հավատի նահատակները, որոնք «սու հասարակ սովորական հավատացյալներ են, որոնք իրենց արյունը թափած են վասն Քրիստոսի և այդ իսկ պատճառով արժանի եղած են տարեկան հիշատակության» (էջ 141):

Այս գլխի ներքո սրբազան հեղինակը մեզ ներկայացնում է Հոռմի, Կ. Պոլսի, Հունաստանի, Թեսալիայի, Գաղատիայի, Բյուրանիայի, Ափրիկեի, Պարսից, Անտիոքի, Միջագետքի, Կիլիկիայի, Երուսաղեմի, Կիպրոսի, Ալեքսանդրիայի, Եթովպիայի, Կեսարիայի, Սեբաստիայի, Պոնտոսի, Եփեսոսի եկեղեցիների այն քրիստոնյա մարտիրոսները, որոնք մեծ մասամբ նահատակվել են Ա.—Ե դարերի Քրիստոսի եկեղեցու համար (Տես այս մասին նաև **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1979, էջ 354—363):

Տ. Շնորհք սրբազանը գրքի այս գլխում մեզ ներկայացնում է հանգամանորեն 50 մարտիրոսների անունը, կյանքն ու նահատակության հետաքրքիր ու հերոսական պատմությունը:

Հայ եկեղեցին է միայն, որ տոնում է երեք Տիեզերական ժողովներին՝ Նիկիայի (325), Կ. Պոլսի (381) և Եփեսոսի (431) մասնակից հայրապետների և եկեղեցու մեծ վարդապետների հիշատակությունը:

Առաքելական է այն ավանդությունը, ըստ որի եկեղեցական կարևոր հարցեր քննվել և համապատասխան որոշումներ ընդունվել են Երուսաղեմում, Քրիստոսի Համբարձոմից և ս. Հոգու Գաղուստից հետո առաքելական ժողովներում (Տես այս մասին վկայությունը Գործք Առաքելոց-ի, գլ. ԺԵ):

Սրբազանը այս առթիվ նշում է, որ «քրիստոնեական եկեղեցին հետևելով Գործք Առաքելոցի մեջ տրված սքանչելի օրինակին» (գլ. ԺԵ) իր վիճելի մեծ խնդիրները փորձում է լուծել «եկեղեցիի առաջնորդող դեմքերու հավաքական խորհրդակցությամբ» (էջ 159):

Հայ եկեղեցին միշտ հավատարիմ մնացած է առաքելական այս ավանդության, Ա դարից մինչև այսօր:

Այս նպատակով, սրբազանը մասնավոր մի գլուխ է հատկացրել «Տիեզերական ժողովներ»-ի գումարման պատմության և դրանց կարևորության:

«Տիեզերական ժողովները, նշում է սրբազանը, գումարված են հարթելու համար այնպիսի խնդիրներ, որոնք կշահագործեն ընդհանրական եկեղեցին» (էջ 159):

Հույն կամ օրթոդոքս եկեղեցին ընդունում է յոթ «տիեզերական» ժողովներ, «բոլոր ալ գումարված Արևելքի մեջ, առ հասարակ Բյուզանդիոնի կամ անոր շրջակա քաղաքներու մեջ»:

Կաթոլիկ եկեղեցին ընդունում է 22 «Տիեզերական ժողովներ» բոլորն ալ գումարված Արևմուտքի մեջ (բացի 869—870 թվականի ժողովից, որը գումարված է Կ. Պոլսում):

Կաթոլիկ եկեղեցու ընդունած 22 «Տիեզերական» ժողովներին նախագահել են Հոռմի Պապերը, և այն «ժողովին մասնակցողները ընդհանրապես քաղկացած են Հոռմի ենթակա եպիսկոպոսներ: Հետևաբար կրնան նկատվիլ Հոռմեական եկեղեցիի «Տեղական ժողովներ», գրում է սրբազան հեղինակը, ամենայն իրավամբ և արդարությամբ, թեկուզ այդ ժողովներին մասնակցած լինեն նաև Արևելքից ոմանք «քաղաքական ակնկալություններով, կամ եղած են Հոռմի գերիշխանությունը ընդունած եպիսկոպոսներ, որոնք ամեն պարագային մասնակցած են իրենց անհատական հանգամանքով և ոչ որպես ներկայացուցիչներ, իրենց իրապես կամ անվանապես պատկանած եկեղեցիներում» (էջ 160):

Ինչպես նշվեց, հայ եկեղեցին և արևելյան առաքելական, պատմական, ազգային եզրիտական, եթովպական, ասորական և հնդկ մալաբար եկեղեցիները ընդունել են միայն երեք Տիեզերական ժողովներ, որոնց գումարման ժամանակ վերջնականապես

որոշվել, հատակացվել և բանաձևվել են եկեղեցու հավատո հանգանակները, աստվածաբանական, քրիստոսաբանական հարցերը:

Հայ եկեղեցին հավատարմությամբ պահպանել է արևելյան նախնական քրիստոնեության ժառանգությունը, ինչ ձևով որ այն կազմվել է առաքյալներին անմիջական հաջորդող դարերում:

Հայ եկեղեցու համար **տիեզերականության և հեղինակության** ուժ չունեն երեքից բացի մյուս «Տիեզերական» կոչվող ժողովները:

Ընդհանրական եկեղեցու դավանական միությունը խախտվեց Եփեսոսի ժողովից հետո, երբ հուզվեցին պատրիարքական Աթոռների գերագահության խնդիրները, և ճշմարիտ ավանդության հիմնակետը կազմող ընդհանուր եկեղեցու համաձայնությունը խանգարվեց, և ժողովները կորցրին իրենց հեղինակությունն ու տիեզերական հանգամանքը:

Այս մտածումներով առաջնորդված սրբազան հեղինակը պաշտպանում է հայ եկեղեցու ընդունած երեք Տիեզերական ժողովների գոյությունը և ներկայացնում է այդ ժողովներում քննության առնված ուղղափառ դավանության հարցերը և հերետիկոսների դատապարտությունը:

Առաջին Տիեզերական ժողովում, Նիկիայում, բանաձևվում և ընդունվում է «Հաստոյ Նիկիական հանգանակը», ուր շեշտվում էր «Աստուծո Որդին **հավիտենական, հավասարակից ու բնութենակից** ըլլալը Հոր Աստուծո» (էջ 161) և դատապարտվում էր Արիոսի մոլորությունը (էջ 250—336): Ժողովը 20 բարեկարգական կանոններ է սահմանում և ձգովում ու արքայում է Արիոսին:

Հայ եկեղեցու կողմից Նիկիայի ժողովին ներկա է լինում ա. Արիստակես հայրապետը, որը Հայաստան է բերում «Հաստոյ հանգանակը» և 20 գլուխ կանոններ, որոնց վրա ա. Գրիգոր Լուսավորիչը ավելացնում է «Իսկ մեք փառաւորեացուք» մաղթանքը և «սուր ինչ կանոն» իր թեմի «զգուշութեան և ժողովրդի լուսաւորութեան համար», ինչպես վկայում է Մովսես Խորենացին:

Հայ եկեղեցին Նիկիայի ժողովի գումարման և 318 հայրապետների հիշատակը կատարում է սեպտեմբերի 1-ին, շաբաթ օրը (Օրացույց, նույնը, էջ 108):

Տիեզերական երկրորդ ժողովը գումարվում է 381-ին Կ. Պոլսում: Ժողովի հիմնական նպատակը նույնն էր, «այսինքն, վերամիացնել կրոնական զանազան վեճերով պատակոված եկեղեցին» (էջ 162): Ժողովին ներկա են լինում 150 հայրապետներ: Սույն ժողովին ներկայացուցիչներ չու-

ներ Հռոմի եկեղեցին: Հայ եկեղեցին էլ չկարողացավ մասնակցել այդ ժողովին, Հայաստանում տիրող քաղաքական, տնտեսական ծանր պայմանների բերումով:

Ժողովը ձգովում և դատապարտում է Կ. Պոլսի «հոգեմարտ» Մակեդոն հույն պատրիարքի մոլորությունը: Ըստ այդ սխալ ուսմանքի «սուրբ Հոգին հավասար ու համագոյակից չէր համարվում Հորը և Որդիին» (էջ 162—163), այսինքն ուրացվում էր սուրբ Հոգու աստվածությունը:

Ժողովում բանաձևվում է «ավելի ընդարձակ և ընդհանրական «Հաստամբ» մը, հիմնված «Նիկիական հանգանակ»-ի վրա, հասկապես ընդլայնելով սուրբ Հոգիի վերաբերյալ մասը և ավելցնելով վերջամաս մը «Եկեղեցի, Մկրտություն, Ապաշխարություն, Մեղեղոց հարություն և Դատաստան» մասին (էջ 163):

Մեր եկեղեցին Կ. Պոլսի Տիեզերական ժողովի 150 հայրապետների հիշատակը կատարում է միշտ Մեծ Բարեկենդանի նախորդ շաբաթ օրը (Օրացույց, նույնը, էջ 34):

Տիեզերական երրորդ ժողովը գումարվում է 431-ին Եփեսոսում, Թեոդոս Փոքր կայսրի հրավերով, որը քննում և բանադրում է Կ. Պոլսի հույն Նեստոր պատրիարքի մոլորությունը: Նեստորը մերժում էր սուրբ Կույսի համար գործածել **Աստուածածին** բառը, «որ նվիրականացած էր և ընդհանուր ընդունելության արժանացած տիտղոս մըն էր սուրբ Կույսին համար» (էջ 164):

Նախքան ժողովի գումարումը Ալեքսանդրիայի Կյուրեղ պատրիարքը, որպես ժամանակի մեծ աստվածաբան ու պաշտպան ուղղափառության, 12 ձգովքներով դատապարտեց Նեստորի մոլորությունը և պահանջեց նրանից «չեսու կոչել իրեն վերագրուած մոլորութիւնը», որով ուրացվում էր Քրիստոսի աստվածությունը:

Եփեսոսի ժողովը գումարվում է հունիսին, 200 հայրապետների մասնակցությամբ և դատապարտվում է Նեստորի, համարյա միաձայնությամբ, մոլորությունը և նրան աթոռազրկում են Կ. Պոլսի պատրիարքությունից:

Եփեսոսի ժողովը վերահաստատում է Նիկիական հանգանակը և **Աստուածածին** տիտղոսը սուրբ Կույսի համար:

Ժողովը սահմանում է նաև 8 գլուխ կանոններ:

Ժողովը Քրիստոսի Բնությունների հարցում ընդունում է «Մի է Բնութիւն Բանին Մարմնացելոյ» բանաձևը, Նեստորի «Երկու դեմք, երկու աճ, երկու Բնություն» բանաձևի դեմ (էջ 165):

Եփեսոսի ժողովին թեև հրավիրվել էր

սուրբ Սահակ Պարթևը, բայց նա չկարողացավ ներկա գտնվել, որովհետև պարսիկների կողմից աթոռագրվել էր և Պարսկաստան աքսորական էր մնում:

Եփեսոսի ժողովի որոշումները սակայն, Հայաստան քերեցին մեր թարգմանիչ վարդապետները, որոնք մույն թվականին զբոսնում էին Կ. Պոլսում «ուսումնական մկատումներով»:

Մեր եկեղեցին Եփեսոսի ժողովի հիշատակը կատարում է Աստվածածնի Վերափոխման Բարեկենդանի մախորդ շաբաթօրը, օգոստոսի 4-ին:

«Համաքրիստոնեական սուրբեր» հատորը ունի նաև «Յաւելում» բաժինը, որպես յոթերորդ գլուխ (էջ 168—227), որի մեջ տ. Ծնորհք սրբազան պատրիարքը ներկայացնում է ընթերցողի ուշադրությանը այն «մեծանուն սուրբեր»-ի անունները, «որոնք չեն անցած մեր տոնացույցին» (էջ 167):

Հետաքրքիր բաժին է գրքի այն «Յաւելում»-ը: «Հույն և հռոմեական եկեղեցիները», նշում է սրբազան հեղինակը, բացի համաքրիստոնեական կոչված ավելի քան 200 սուրբերից, «կհիշատակեն—միասնաբար կամ անջատաբար—տակավին բազմահարյուր ուրիշ սուրբեր» (էջ 167):

Մեր տոնացույցին չանցած այդ սրբերից շատերին սրբազան հեղինակը համարում է «իրավամբ համաքրիստոնեական նշանակություն» ունեցող սրբեր և «արժանի ցարդ հիշվածներու կարգին դասվելու» (էջ 167):

Մեր եկեղեցական տոնացույցից դուրս մնացած այդ «մեծանուն սուրբերը» ապրել են և ստեղծագործել Քաղկեդոնի ժողովից հետո: Եվ քանի որ մեր եկեղեցին, ինչպես նաև արևելյան ուղղափառ մեր քույր եկեղեցիները, եզրիստականը, եթովպիականը, ասորականն ու հնդկ մալաբարը, չեն ընդունել, ինքնաբերաբար դրանք դուրս են մնացել մեր եկեղեցական տոնացույցից: Պարզ է, որ մեր եկեղեցին «Քաղկեդոնի ժողովեն ի վեր դադրած է սուրբեր հյուրընկալել արևմտյան վերոհիշյալ մեծ եկեղեցիներեն, տոնակատարության կամ տարեկան հիշատակության համար: Հակառակ այս իրողության, սակայն, բազմաթիվ արևմրտյան սուրբեր տեղ գրաված են մեր Հայսմավուրքներու մեջ, վերոհիշյալ դարեն աստիճան, մինչև ուշ միջնադարը» (էջ 167):

Գրքի «Յաւելում» բաժնում, տ. Ծնորհք սրբազան պատրիարքը ըստ մեր Հայսմավուրքների վկայության, և մանավանդ «մեր հայսմավուրքին գլխավոր հորինիչ և Սըրբոց վարքերու մեծ հավաքիչ Գրիգոր Վկայաւեր (1067—1105) հայրապետի բացած ուղիին» (էջ 167) ներկայացնում է իր ըն-

թերցողների ուշադրությանը, «գեթ խումբ մը սուրբեր, որոնցմէ ոմանք արդարեւ մեծագույններն են քրիստոնեական եկեղեցիի գործիչներուն, և ավետարանական սրբության և կատարելության նշանավորագույն տիպարներն են» (էջ 167):

Ծնորհք պատրիարքի առաջարկը արժանի է մասնավոր ուշադրության և ուսումնասիրության, եկեղեցիների էկումենիկ շարժման մեր ժամանակաշրջանում:

Այնուհետև սրբազան հեղինակը «Յաւելում» բաժնում «ժամանակագրական կարգով» Ա դարից սկսած մինչև ԺԺ դարի վերջը ներկայացնում է 25 անունները, կյանքն ու գործունեությունը այն «մեծանուն սուրբերի», «որոնք չեն անցած մեր տոնացույցին» (էջ 167—227):

Այդ սրբերից հիշենք մի քանիսը, Հուսիսնոս մարտիրոսը կամ վկան (100—165)՝ քրիստոնյա առաջին փիլիսոփան և «Ջատագով»-ը, և ուսուցիչը ասորական եկեղեցու մեծանուն մատենագիր՝ Տատիանոսի, որը նշանավոր էր իր կազմած «Համաբարբառ» կամ «Դիալեկտիկոն» ավետարանով: Հուսիսնոսի և Տատիանոսի մասին տես «Էջմիածին» ամսագիրը, 1979, հունվար, էջ 52—54: Ապա Կիպրիանոս Ափրիկեցին (200—258), մեծագույն եկեղեցական դեմքը Ափրիկյան կաթոագիների եկեղեցու, Ամբրոսիոս Միլանոյի եպիսկոպոսը (340—397), Հերոնիմոսը (342—420), «մեծագույն եկեղեցական հայրերեն մեկը Լատին եկեղեցիին և մեծագույնը՝ անցյալի ու Գիրքի մասնագետներուն», Օգոստինոս (354—430), դարձյալ մեծագույն քարոզիչն ու փիլիսոփան, մանկավարժը Ափրիկյան և Լատին եկեղեցու, Պատրիկ (385—461), «Իրլանդայի ժողովրդական սուրբը», Բենեդիկտոսը (485—540), «Հայրը և հիմնադիրը արևմտյան վանականության», մեծն Գրիգոր Պապը (540—604), «մեծագույններեն մեկը Հռոմի մեծ Պապերուն», Հովհաննես Դամասկացին (675—749), «հույն աստվածաբան և վարդապետ եկեղեցվո», Վլադիմիր (956—1015), «որուն կապտկանի շնորհը և փառքը քրիստոնեությունը պետական կրոնք դարձնելու ռուս ժողովուրդին և հաստատած ըլլալու ռուսական փառավոր եկեղեցին», Բեռնարդոս (1090—1153), «նշանավոր վանահայր և միստիկ մեծ աստվածաբան հռոմեական եկեղեցիի», Ֆրանչիսկոս (1181—1226), «հիմնադիրը իր անունը կրող միաբանության և միջազգային հուշակի և համակրանքի արժանացած սուրբ մը», Իգնատիոս Լոյոլա (1491—1556), «հիմնադիրը Հիսուսյան միաբանության», այնուհետև անունները Ժաննա դ'Արկի (1412—1431), երկու Թերեզաների,

Ֆրանսիս Կապրիանի (1850—1917), Սատու Սունտար Սիմկի (հնդկ, 1889—1929):

Պետք է որախությամբ նշել, որ տ. Շնորհք սրբազան պատրիարքի «Համաքրիստոնեական սուրբեր» գրքի ամենահետաքրքիր և արժեքավոր բաժինն է նաև այս «Ցանկում»-ը համահավասար արժեքներով մյուս վեց գլուխների:

Սույն գիրքը ավարտում է «մեր տոնացույցին անցած սուրբերու» այբուբենական ջանկով, էջ 230—233:

Գրախոսվող սույն գիրքը արդյունք է սրբազան հեղինակի տարիների տքնաջան աշխատանքի, նրա հոգևոր, երկարամյա և անբաւիր ծառայության, անձամբույթ պրպտումների, կրոնաբույր խորհրդածությունների, ս. գրական ու վարքագրական ընթերցումների, ներքին ապրումների, կրոնական խոր համոզմունքների, հավատավոր ու ազնիվ հոգևորականի մտորումների կենդանի և պայծառ արտահայտությունների:

Հակառակ իր վարչական գործերի ծանրության, իր բարձր պաշտոնի մտահոգությունների, սրբազան հեղինակը այս անգամ ևս հավատարիմ է մնացել իր նախորդ գրագետ-գրասեր պատրիարքների ալիանդություններին և օրինակին:

Տ. Շնորհք սրբազան պատրիարքի ինչպես նախկին ուսումնասիրությունները, այդ թվում «Ասագ շաբաթ» և «Աստուածաշնչական սուրբեր» աշխատությունները, նույնպես «Համաքրիստոնեական սուրբեր» վարքագրական արժեքավոր ու բովանդակալից

գիրքը գրվել է «սրբության» մասին նրա ունեցած ջերմ սիրով, հավատի կրակով և հոգևորականի պայծառ գիտակցությամբ:

Ուսումնասիրության լեզուն սահուն է, գեղեցիկ, պատկերավոր ու արտահայտիչ, ոճը՝ կենդանի և կոռ, դասողություններն ու վերլուծությունները՝ ճշգրիտ, խոր և բովանդակալից:

Ուսումնասիրությունը կարդացվում է հոգեկան մեծ բավականությամբ և հարաճուն հետաքրքրությամբ: Հատորը բեռնաթափված է վարքագրական, հրաշապատում դրվագներից, «բայց կհետապնդե հիմնականը և հատկանշականը յուրաքանչյուր սուրբի կյանքին մեջ» (էջ 10): Համաքրիստոնեական այդ 200 սրբերը կենդանի մարդիկ են, հավատքի վկաներ և պրմներ, «եկեղեցիի պարծանքներ և տարածիչներ», որոնք նաև մեր ժամանակակիցներն են, եկեղեցին առաջնորդելու դեպի ճշմարտություն, կյանք ու հավիտենություն:

Առանց աստվածային միջամտության և կանչին, ոչ ոք կարող է սուրբ լինել:

Տ. Շնորհք սրբազանի գրախոսվող գիրքը հոգեշեն, հոգելից ուսումնասիրություն է և միաժամանակ մեր այսօրվա աղքատիկ վարքագրական գրականության գանձերից մեկը: Սույն հատորը պետք է լինի ամեն մի բժախնդիր հավատացյալի և մանավանդ Քրիստոսի սուրբ Ավետարանի քարոզության և նրա սուրբ եկեղեցու հոգևոր ծառայության նվիրված յուրաքանչյուր տիպար և նախանձախնդիր հոգևորականի սեղանի գիրքը Աստվածաշնչի կողքին:



**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն թվականի հունվարի 17-ից մինչև մարտի 14-ը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի հրավերով Երուսաղեմ՝ սրբոց Հակոբյանց վանք մեկնեցին ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասախոսներ Արթուր Հատիտյանը և Պարզև Ծախբազյանը՝ կատարելու գրաբար բնագրից արևմտահայերեն լեզվով իրենց թարգմանած Նոր Կտակարանի տպագրության արագրությունները:

Նոր Կտակարանի վերոհիշյալ թարգմանությունը հավասարապես իր գնահատելի մասնակցությունն է բերել նաև հոգևոր ճեմարանի դասախոս Սամվել Անթոնյանը:

Թարգմանության ընթացքում օգտագործվել են Նոր Կտակարանի ֆրանսերեն և անգլերեն բնական և գիտական մորագույն թարգմանություններ՝ La Sainte Bible, Eco'le Biblique de Jerusalem Paris, 1956. „The Holy Bible“, Revised Standard Version, New York, Oxford University Press, 1962, „Nouveau Testament“, Traduction Oecuménique de la Bible, TOB, Edition Intégrale, 1972, ինչպես նաև օտար լեզուներով գիտական այլ հրատարակություններ:

Նոր Կտակարանի արևմտահայերեն սույն թարգմանության առթիվ թարգմանիչները աչքի առաջ են ունեցել նաև Գաբեգին արքեպ. Խաչատուրյանի Բուենոս Այրեսում հրատարակված Նոր Կտակարանի արևմտահայերեն թարգմանությունը, տ. Ծնորթ պատրիարք Գալուստյանի Կ. Պոլսում հրատարակված չորս Ավետարանների հունարենից կատարված արևմտահայերեն թարգմանությունը, Վեհեփիկի միաբանության անդամ հայր Սրապիոն Ուլուհոնջյանի ս. Ղազարում հրատարակված չորս Ավետարանների արևմտահայերեն թարգմանությունը, ինչպես նաև արևմտահայ լեզվով կատարված այլ թարգմանություններ:

Նոր Կտակարանի արևմտահայերեն ներկա թարգմանության համեմատությունը հունարեն, լավ և լավագույն բնագրի հետ, Սուրբ Գրոց Հնկերության հանձնարարությամբ, Լոնդոնում կատարել է Մայր Աթոռի միաբան, դոկտ. Վրեժ սրկ. Ներսիսյանը: Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը վերանայել և խմբագրել է՝ սույն թարգմանության ամբողջական տեքստը:

Մայր Աթոռի ներկայացուցիչները Երուսաղեմում կատարել են թարգմանության նախնական և կոնտրոլ արագրությունները, հսկել են տպագրական շարվածքին, գրքի տեխնիկական ձևավորմանը և գործը պատրաստել տպագրության համար:

Նոր Կտակարանի ներկա թարգմանության տպագրությունը նախատեսվում է կատարել Եվրոպայում՝ Աստվածաշնչի Հնկերության օժանդակությամբ:

Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարք սրբազան հայրը Երուսաղեմում Մայր Աթոռի ներկայացուցիչներին ընձեռեց ամեն դյուրություն և օժանդակություն, որպեսզի լավագույն ձևով գլուխ բերվի սույն կարևոր գործի շուտափույթ հրատարակությունը: Այս առթիվ, հանուն Վեհափառ Հայրապետի, հայտնում ենք մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը սրբազան պատրիարք հոր ցույց տված ջերմ ու արտագին օժանդակության համար:

Նոր Կտակարանի արևմտահայերեն արդի թարգմանությունը նվիրվում է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 25-ամյակին, որը նշվելու է Մայր Աթոռում 1980 թվականի աշնանը:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆ



ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՐՈՎԵՐ ԱՐՔԵՊ.
ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Մարտի 16-ին, ուրբաթ օրը, Փարիզից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, սրբազանին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը՝ ընկերակցությամբ բարեշնորհ Գերենիկ սրկ. Սայանի:

Գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը, Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Վեհաբանում ընդունվում է Հայոց Հայրապետի կողմից, որի հետ ունենում է ջերմ գրույց՝ սրտագին մթնոլորտում:

Գեր. տ. Սերովբե սրբազանը Մայր Աթոռ էր ժամանել Հայոց Հայրապետի հավանությունը ներկայացնելու Նորին Սուրբ Օծության այս տարվա մայիս ամսին Ֆրանսիա կատարելիք ընդունելությունների և այցելությունների ծրագիրը:

Փարիզում, Մարսելում, Բորդոյում, Լիոնում կազմվել են հայրապետական ընդունելության հանձնաժողովներ, Հայոց Հայրապետի հանգամանքին համապատասխան հայ և ֆրանսիական շրջանակներում Նորին Սուրբ Օծության այցելությունները կազմակերպված և բարձր մակարդակով անցկացնելու համար:

Մարտի 20-ին, ուրբաթ օրը, գումարվում է Վեհաբանում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա է լինում

նաև տ. Սերովբե արքեպիսկոպոսը, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամի:

Հատենի ժողովի Վեհափառ Հայրապետը ողջունում է տ. Սերովբե արքեպիսկոպոսի ներկայությունը:


Հայրապետական պատվիրակ սրբազանը իր հերթին խոսք է առնում և Հայոց Հայրապետին որդիական շնորհակալության և երախտագիտության խոսք է ուղղում Նրա ողջույնի և բարիգալատյան բարեմաղթությունների համար, ապա խոսում է Հայոց Հայրապետի Ֆրանսիա կատարելիք հովվապետական կարևոր ու պատմական այցելության նշանակության մասին:

Տ. Սերովբե սրբազանը այնուհետև համառոտակի Գերագույն հոգևոր խորհրդին է ներկայացնում ընդհանրապես Արևմտյան Եվրոպայի և ի մասնավորի Ֆրանսիայի հայության եկեղեցական, մշակութային կյանքը:

Սրբազանի զեկուցումը լավում է հետաքրքրությամբ:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը հինգշաբթի օրը, մարտի 29-ին, հրաժեշտ է տալիս Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը և Մոսկվայի վրայով մեկնում է իր պաշտոնատեղին:

Երևանի օդանավակայանում տ. Սերովբե արքեպիսկոպոսին ճանապարհում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ պրն. Գառնիկ Քեհայանը:



ՈՒՆՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԶԱՐՈԶ

Նվիրական այս պահում գոհություն և փառք եմ մատուցում Ամենակալին Աստուծո, որ զիս ևս արժանացրեց քահանայական բարձր և պատասխանատու կոչմանը, ի սպասավորություն մեր ժողովրդի Միաձնաէջ այս սրբազնատուրք խորանի վրա, իմ քառասունքից և պահեցողությունից հետո, որպես ի վերուստ ընծայված առիթ:

Այսօր ուխտի անդրանիկ իմ պատարագս եմ մատուցում Հալիտենականին՝ բնաբան ունենալով սաղմոսերգուի հետևյալ գեղեցիկ խոսքերը. «Ի Բեզ, Տէր, յուսացայ զի մի ամաչեցից յախտեան»: Տէր, իմ հույսը Քու վրադ դրի, որպեսզի հալիտյան ամոթով չմնամ իմ հոգևոր ծառայության այս դժվարին ճամփուն վրա:

Այս սրբազան պահում, երբ Տերը իմ շրթունքները բաց է անում, իմ առաջին աղոթքը ուղղված պիտի լինի տիեզերքը արարող Աստուծո, որ ինձ նախ կյանք շնոր-

հեց ապրելու Իրմով և Իրեն համար: Եվ երբ դեռ մանուկ էի, իմ ձեռքից բռնած քայլերս ուղղեց դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին և մայր հայրենիք՝ դաստիարակվելու, աճելու և իմ կյանքը անմնացորդ նվիրելու հայ եկեղեցու սուրբ գործին և հայ ժողովրդի քրիստոնեական և հայեցի դաստիարակությանը:

Իմ շնորհակալության և որդիական երախտագիտության երկրորդ խոսքը կուղղվի այս փառավոր և դարավոր Հաստատության ազգընտիր Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ տարիներ առաջ, երբ դեռ անվարժ պատանի էի, ընդունեց զիս հոգևոր ճեմարանի հարկի տակ՝ դաստիարակվելու, և ջանք չխնայեց բաշխելու անհատնում Իր գուրգուրանքն ու հայրական սերը, Իր անմիջական նայվածքի ներքո դատնալու համար համեստ միաբանը այս սուրբ Հաստատության և սպասավորը Հայաստանյայց եկեղեցվո: «Որդի հարազատ զնմանությիւն Հօրն բերէ»:

«Ի Բեզ, Տէր, յուսացայ զի մի ամաչեցից յախտեան»:

Վեհափառ Տէր, Աստուծոց հետո հույսս դրի նաև Ձեր հայրական խոսքերում և խրատներում վրա: Ձերդ Սրբությունն է եղել ինձ համար իմ ուսումնառության տարիներին մտատիպարը, որում աշխատել և աշխատում եմ նվազագույն չափով նմանվել իմ կյանքով ու գործունեությամբ:

Ձեր շնչի ներքո հոգևոր ճեմարանի այս ներշնչող մթնոլորտում ստացա իմ հոգևոր, մտավոր, կրոնական-հայրենասիրական դաստիարակությունը և քառասուն օրեր ա-

* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Մյուռն աթղ. Գրվղզյանի ուխտի անդրանիկ քարոզը, որը արտասանել է նա քահանայական իր առաջին պատարագին Մայր տաճարում, փետրվարի 14-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ:

Վեհափառ Հայրապետի քարեհաճ կարգադրությամբ և հունձու Այրեսի ազգային Կենտրոնական վարչության հրավերով, տ. Մյուռն արեղան պաշտոնավարելու է հունձու Այրեսի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որպես հոգևոր հովիվ:

Տ. Մյուռն արեղանին մաղթում ենք հաջողություն իր առաջին եկեղեցական-հասարակական գործունեության մեջ:

նաջ Ձերդ Վեհափառության բարեհաճ արտոնությամբ և կոչման գիտակցությամբ և իմ ազատ կամքով ու սրտիս թելադրանքով կրեցի Քրիստոսի քաղցր լուծը, որ կանչն է նաև մեր եկեղեցու սուրբ հայրերի, կանչը՝ հայ հավատացյալ ժողովրդի:

Վեհափառ Տեր, հավատով և լավատեսությամբ առ լի, Աստուծո օգնականությամբ և Ձեր օրհնությամբ ձեռքս դնում եմ մեր եկեղեցու և ժողովրդի ծառայության մասնի վրա՝ բոլորակալեմ իմ սպասավորությունը քերելու մեր ժողովրդի հոգևոր կարիքներին:

Որքան ծանր ու պատասխանատու է հոգևորական ծառայությունը, նույնքան անուշ է ու սրտագին այդ պարտականության լուծը:

Հայ հոգևորականի պարտականությունը Ձեր օրհնակով և Ձեր դաստիարակության շնորհիվ, Մայր Աթոռիս երիտասարդ միաբաններին առաջին հերթին ներշնչում է ծառայության և սպասավորության ոգին և սեր՝ հանդեպ հայ եկեղեցին, հայ ժողովուրդին ու հայ դպրությունը՝ ի դաստիարակություն մեր հավատացյալ ժողովրդի և մանավանդ հայ նոր սերունդների քրիստոնեական ու հայեցի նկարագրի կազմավորման:

Մեր ժողովրդին մատուցած հոգևոր դաստիարակչական այս գործունեության նույնքան կարևոր երկրորդ երեսը մեր ազգային-հայրենասիրական ծառայությունն է մեր ժողովրդին ու հայրենիքին:

Մակատազրի դժբախտ քերումով դեռևս մեր ժողովուրդը բաժնված է երկու հատվածի: Նրա բախտավոր մի մասը ապրում է իր պապենական, սեփական հողին վրա իր մերածնված հայրենիքի խաղաղ ու ապահով պայմաններում և կերտում է իր պայծառ ապագան: Նույն մեր ժողովրդի երկրորդ կարևոր հատվածը ցրված է աշխարհով մեկ. մեծ մասամբ համախմբված հայ եկեղեցիների, վարժարանների, մշակութային և քարտեհական կազմակերպությունների շուրջ և հերոսական պայքար է մղում, հալ մնալու, հայ ապրելու համար, Էջմիածնի և Արա Գահակալի օրհնությամբ, ոգի և շունչ ստանալով միաժամանակ մեր սիրելի մայր հայրենիքից:

Մենք, որ եկել ենք սիյունքից, ուսանելու-դաստիարակվելու Մայր Աթոռ ու Էջմիածնի այս ներշնչող հարկի տակ, գիտակցում ենք խորապես, որ սիյունքում ապրելու համար արևի և ջրի չափ կարիք ունենք Էջ-

միածնի հոգևոր առաջնորդության և մայր հայրենիքի քարոշական աջակցության:

Մենք այդ ոգով դաստիարակվեցինք և այդ նույն ոգին պարտավոր ենք տանել արտասահման, ո՛ր որ էլ Ձերդ Սրբությունը մեզ ողորկի, այն ներշնչելու համար հայության, մանավանդ հայ երիտասարդ սերունդին: Մենք այդ պատգամը պիտի տանենք մեզ հետ, և ուխտապահ Էջմիածնասիրությունն ու ճշմարիտ հայրենասիրությունը պիտի լինեն մեր գործունեության երկու հզոր սյուները:

Խոստովանիմք և հավատամք այդ առաքելության: Երդվում ենք, որ աշխարհի վրա չկա ոչ մի ուժ, որը կարենա մեզ տկարացնել մեր կրոնական, հայրենասիրական ապրումների, մեր համոզումների մեջ դեպի Մայր Աթոռ ու Էջմիածինն ու իր արժանաբան զահակալը և մայր հայրենիքը:


Վեհափառ Տեր, քաջ ծանոթ ենք նաև մեր հոգևոր կոչման դժվարություններին, արդի կյանքի քարդ պայմաններում: Փշոտ է ճանապարհը. «Ընթանալ. ամենեքին ընթանան, քայց մի ոք առնու զյաղթութեանն» (Ա. Կորնթ. Թ 24):

Վեհափառ Տեր, օրհնեցեք մեզ: Խոստանում եմ բնավ ետ չնայել: Զեմ վհատվելու և իմ մեջ վարանումներ չկան իմ գործի նկատմամբ: Աստուծո գործին զինվորագրվողը պետք է որ լինի քաջ, համոզված և ինքնավստահ, իսկ վստասիրտներն ու տատանվողները, ըստ սուրբ Գրոց վկայության, թող ետ վերադառնան ու չխանգարեն մեր զորքը, որը հիմնված է Ավետարանի պատգամների վրա՝ հօգուտ ժողովրդյան և եկեղեցու:

Վեհափառ Տեր, ընդունեցեք շնորհակալ սրտիս երախտագետ զգացումները, և թող որ ամենակարողն Աստված պարգևե Ձեզ երկար և երկար երջանկությամբ և ուրախություններով լեցուն տարիներ: Թող Ձեր նախաձեռն ու շունչը անպակաս լինի մեր վրայից: Վստահ եղեք, որ առիթը չեմ տալու Ձեզ տխրելու և մանավանդ չեմ դավաճանելու այն դաստիարակության, այն ոգուն, որ տվավ ինձ Մայր Աթոռ ու Էջմիածինն ու մայր հայրենիքը:

«Ի Քեզ, Տեր, յուսացալ զի մի ամաչեցից յախտեան», այն վստահ հույսով, որ Աստված մեզ հովանի ու ապավեն է լինելու:

Սիրելի ժողովուրդ, եկեք միասին ու միատեղ փառաբանենք Իր ամենասուրբ անունը, Որդվույն և ս. Հոգիին հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 1-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանը դահլիճում «Էջմիածինը ԺԸ դարի երկրորդ կեսին և Ղուկաս Կարանցի կաթողիկոսը» թեմայի շուրջ դասախոսությանը հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանը:

Վերջում հարգելի դասախոսը պատասխանեց նաև ուսանողների հարցերին:

• •

Մարտի 4-ին, կիրակի.—Բ կիրակի քառասունորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, և «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ «Որ ի պատկեր աստուածութեանց քո զարդարենն ոչ պահելով դարձաւ ի հող յետ մահու անկեալ թագաւորութիւն» (Ծարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագի ընթացքում, «Ողջոյն»-ից առաջ, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթրուրյանի, տե-

ղի է ունենում սարկավագական ձեռնադրություն: Սարկավագ են ձեռնադրվում ճեմարանի նախկին ուսանողներ Խաչիկ Ֆրենկյանը ու Օնիկ Լուսարարյանը, Հովհաննես Բուդուրյանը (Լիբանան)՝ որպէս ապագա քահանայացուներ:

• •

Մարտի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Ամերիկայից Մայր Աթոռ է ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդ տ. Թորոն արքեպ. Մանուկյանը:

Օղանավակայանում սրբազան հորը, հանուն Վեհափառ Հայրապետի, դիմավորում են Դերենիկ արկ. Սալանը և Ստեփանոս արկ. Չաքալյանը:

• •

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհաքրանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ: Հավաքին հրավիրված էր նաև հյուրաբար մայր հայրենիքում գտնվող, Բելոուսի «Նահիրի» շաքաթաթեր-

թի խմբագիր, գրող և հասարակական գործիչ Անդրանիկ Մատուկյանը, որը և հանգամանորեն խոսում է «Հայրենիք-սփյուռք մշակութային և հայրենասիրական կապերի զարգացումը 1915 թվականից մինչև մեր օրերը» թեմայի շուրջ:

Վերջում հարգարժան հյուրը պատասխանում է ներկաների մի շարք հարցերին:

.*.*

Մարտի 8-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին է այցելում իտալացի լրագրող Դոմենիկո դել Կարրերե Կարլո Մաուրիին, որը հյուրաբար գտնվում էր Սովետական Հայաստանում:

.*.*

Մարտի 9-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ, որը շարունակվում է նաև հաջորդ օրը:

.*.*

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, «Ուրարտու և Հայաստան մշակութային ժառանգորդության հարցերը» թեմայի շուրջ դասախոսում է պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Տիրացյանը:

Վերջում հարգելի դասախոսը պատասխանում է ուսանողների հարցերին:

.*.*

Մարտի 11-ին, կիրակի.—Գ. կիրակի քառասունորդական Պահոց (Ահառակին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը, և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը՝ «Հայր, մեղսյ լերկինս և առաջի քոյ» (Ղուկ. ԺԵ 18) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

.*.*

Նույն օրը Էջմիածնի ս. Աստվածածին եկեղեցում տեղի է ունենում քահանայական ձեռնադրություն: Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը քահանա է ձեռնադրում Հովհաննես արկ. Բողոքյանին՝ վերանվանելով տ. Վարդան

քահանա, Բաղդասի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար:

Այս առթիվ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Թորգոմ արքեպիսկոպոսը քարոզում է քահանայական կոչման քարձրության և կարևորության մասին՝ հորդորելով նորընծային լինել «մշակ ստանց ամօթոյ»:

.*.*

Մարտի 12-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Ամերիկա է մեկնում Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

Սրբազան հորը ճանապարհում են, հանուն Վեհափառ Հայրապետի, տ. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը և Պետրոս արկ. Սարգսյանը:

.*.*

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում «Տիգրանի ասորի կաթողիկոսության հիմնադրումը և նրա կապերը հայ եկեղեցու հետ» թեմայի շուրջ դասախոսում է պատմական գիտությունների թեկնածու Հայկ Մելքոնյանը:

Վերջում հարգելի դասախոսը պատասխանում է ուսանողների հարցերին:

.*.*

Մարտի 18-ին, երեքշաբթի.—Այսօր Բեյրութ է մեկնում հյուրաբար մայր հայրենիքում գտնվող «Նաիրի» թերթի խմբագիր, գրող և հասարակական գործիչ Անդրանիկ Մատուկյանը:

Հարգարժան հյուրին Երևանի օդանավակայանում ճանապարհում է Դերենիկ արկ. Սայանը:

.*.*

Մարտի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը ներկայացնում է «Երիմյան Հայրիկի կյանքը և գործունեությունը»՝ հատկապես կանգ առնելով նրա մանկավարժական գործունեության վրա:

Վերջում հայր սուրբը պատասխանում է միաբանների հարցերին:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մարտի 18-ին, կիրակի.—Դ կիրակի քառանորդական Պահոց (Տնտեսին)։

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, և «Հայր մեր»-ից առաջ «Եւ գովեաց Տէրն գտնուեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ 8) բնաբանով քարոզում է տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Մարտի 20-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19.30-ին, Վեհաբանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Նիստին ներկա էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերոպքե արքեպ. Մանուկյանը։

Մարտի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհաբանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ։

Հավաքույթին հրավիրված էր ամերիկահայ հոգեբան, Երևանի պետական համալսարանի հոգեբանության դասախոս, պրոֆ. Հայկ Փամբուկյանը, որը և դասախոսում է «Ինքնաճանաչում» թեմայի շուրջ։

Վերջում հարգելի դասախոսը պատասխանում է ներկաների տված հարցերին։ Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Մարտի 25-ին, կիրակի.—Ե կիրակի քառանորդական Պահոց (Դատաւորին)։

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մյուռոն արք. Գրվրգյանը՝ իր պաշտոնատեղին՝ Բուենոս Այրես մեկնելու առիթով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



Մարտի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհաբանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում տ. Կոմիտաս արք. Հովնանյանը ներկայացնում է Հովհան Մայրազոմեցու կյանքն ու նրա մատենագրական վաստակը։

Վերջում հայր սուրբը պատասխանում է միաբանների տված հարցերին։

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Մարտի 31-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Լուսաւորչին մերոյ սուկալի չարչարանացն և մտին ի վիրապն։

Այսօր Մայր տաճարում, Իջման սեղանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը։





ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ՄԸ ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ

Գրեց Ս. Ա. (Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան) 1968, տպարան Տօնիկեան,
Պէյրոս, 272 էջ

Տ. Սիոն արքեպ. Մանուկեանը ծանոթ և սիրված մի անձնավորություն է արդի բարձրաստիճան հայ հոգևորականության մեջ, իր ս. գրական-մատենագրական, բարոզական, թեմական-վարչական, մանկավարժական ու դաստիարակչական բովանդակալից վաստակով:

Ավելի քան 50 տարիներ նա գիտակից միջոցառում և հոգևորականի իր կոչման պայծառ գիտակցությամբ ծառայել է Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, հայ մշակույթին և իր հավատացյալ ժողովրդին:

Սրբազանը հրատարակել է «Պատմության համար» «Եկեղեցականի մը կյանքի հանգրվանները» վերոհիշյալ հուշերի գիրքը, որի մեջ ներկայացրել է նաև համառոտակի իր կյանքի և բազմապիսի գործունեության զանազան երեսները. «Այժմ, երբ կանդրադառնա անցյալի մոտ կես դարու ճանապարհին ուրկե անցած է, կոհտե որ կյանքի որոշ շրջաններ և դեպքեր բախտորոշ և ճակատագրական դեր կատարած են իր կյանքին մեջ, մասնավորաբար 7—8 տարին անգամ մը, կարևոր փոփոխություններ աշխարհում տեղի ունեցած է իր կյանքի մեջ», գրում է սրբազանը (էջ 1):

Գրախոսվող գիրքը բաղկանում է 272 էջից և բաժանվում է 10 գլուխների: Յուրաքանչյուր գլուխ ունի իր ստորաբաժանումները, ըստ հետևյալի.

Գլուխ Ա.—Մանկություն. տեղահանություն.

Բ.—Կրթություն. Ժառանգավորաց վարժարան և քննադարան.

Գ.—Վանական-ուսուցչական պաշտոններ.

Դ.—Վարչական պաշտոններ. Այցելություն Բաղկան երկիրներ.

Ե.—Դեպի Ամերիկա.

Զ.—Հովիվ Փրովիտենսի. թեմական պաշտոններ.

Է.—Ամիս մ'ի Հայաստան.

Ը.—Առաջնորդական փոխանորդ միջին արևմտյան շրջանի.

Թ.—Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայր.

Ժ.—Առաջնորդ հայոց Ամերիկայի, 1959—1968 թվականներ:

Գրքի ամենեն ընդարձակ մասը, այս գլուխն է, որ 131—272 էջերի մեջ հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է իր առաջնորդական տարիների գործունեությունը, եկեղեցական-մշակութային, հասարակական, առաջնորդական բնագավառների մեջ:

Սիոն արքեպ. Մանուկեան, ավագանի անունով Սարգիս, ծնվել է 1906 թ. Վասպուրական աշխարհում փոքրիկ մի գյուղի մեջ՝ Կիրաշեն, որը ծանոթ էր «բրտունների գյուղ» մականվամբ: 1915 թվին ապրել է Եղեռնի արհավիրքները և հարազատների հետ փախել է դեպի Կովկաս, Իգդիր, ապա նորից վերադարձել է հայրենի գյուղ 1917 թվին:

1918 թ. ստիպված բռնի արտագաղթել է ընդմիջտ հայրենի գյուղից և 1922 թվին ընկել է որբանոց, կորցնելով շատ-շատերի նման արտագաղթի ճանապարհին իր ծնողների և հարազատներին:

մեծավաստակ դասախոսներին, դպրոցական կյանքին, վանքն ու սրբավայրերը:

Իր դասախոսների մեջ առանձին նվիրվածությամբ ու պաշտումի հասնող սիրով ներկայացնում է տ. Եղիշե պատրիարքի



1923 թ. ընդունվել է Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանը, «10 հառաջադեմ ուսանողներու հետ» աշակերտելով մեծանուն գրագետ պատրիարք Եղիշե Դուրյանին և Բաբգեն եպս. Կյուլեներյանին:

1926 թ. ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1930 թվին կուսակրոն քահանա: Զեռնադրությունից հետո էլ սկսվում է Սիոն վարդապետի վարդապետական-ուսուցչական-վարչական ու գրական կենսագրությունը, Երուսաղեմի հայոց վանքում:

Գրքի հաջորդ էջերում հուշագրական ձեվով ներկայացնում է Ժառանգավորաց վարժարանն ու ընծայարանը, իր մեծանուն և

կյանքն ու գործունեությունը՝ նրան անվանելով «Նոր Եղիշե»: «Ան եզակի դեմք մըն է մեր ժամանակակից շրջանին, սուրբի տիպար մը, խառնուրդ մը այս ու հանդերձյալ կյանքի տեսիլով շաղախված, կապրեր երկրի վրա մարմինով՝ սակայն հաճախ կսավառներ երկինքի մեջ՝ հոգիով» (էջ 29), «հրեշտակ ի մարմնի» (էջ 30), «Մարմնատեսիլ քերուվքե»: Հեղինակը Դուրյան սրբազանին համարում է «մեծ քեմքասաց», «գրի հսկա», «խորքով քանաստեղծ». և այս ամենի համադրությամբ «մարդ-կատարյալ»:

Հաջորդ գլուխների մեջ հեղինակը խոսում է նաև իր «վանական պաշտոնների»

մասին, այս առթիվ մի ենթաբաժին նվիրելով «Ֆայ գիրք Երուսաղեմի մեջ» թեմային, որով վեր է հանում **Ժառանգավորաց վարժարանի, ընծադարանի, տպարանի և մատենադարանի**, «Սիոն» ամսագրի՝ (հին և նոր շրջանների) պատմական ու նրա դերը մեր եկեղեցական կյանքի մեջ:

Այս բաժնում հեղինակը խոսում է նաև իր ուսուցչական պաշտոնների և առաջին հոլովական իր այցելության մասին կատարած «Պալքան երկրներ» (էջ 51):

Գրքի Ե—Զ գլուխների մեջ «Դեպի Ամերիկա» ենթավերնագրի տակ՝ հեղինակը անդրադառնում է ԱՄՆ-ում իր հոլովական պաշտոնի և նրա դժվարությունների մասին, որով ու. Աթոռի մի երիտասարդ վարդապետ առաքվում է Ամերիկա հոլովական պաշտոնի: Այս կապակցությամբ սրբազանը իր գրքի մեջ ամբողջությամբ հրատարակել է Երուսաղեմի պատրիարք Թորգոմ սրբազանի 1938 հունիս 14 թվակի կոնդակը: Հաջորդ բաժնում հեղինակը խոսում է ԱՄՆ-ում իր անդրանիկ հոլովական քաղաքի, որպես հոլիվ Փրովիտենսիսի ու Սահակ Մեսրոպ եկեղեցում անդրանիկ պատարագի և պատգամների շուրջ: Այս գլխում հեղինակը որպես պարտքի-սիրտ տուրք մեզ ներկայացնում է Թորգոմ պատրիարքին, որպես արժանի հաջորդը Եղիշե Դուրյանի, վեր է հանում նրա ազգանվեր, եկեղեցաշեն, կրթական-մշակութային գործունեությունը, որով մենք բավականին ամբողջական դիմանկարն ենք ունենում Թորգոմ պատրիարքի:

Գլուխ Է—Թ. «Ամիս մ'ի Հայաստան».

1945 թվի մայիսին Սիոն վարդապետը առաջին անգամ որպես ուխտավոր ժամանում է ու. Էջմիածին, մասնակցելու Գևորգ Զ կաթողիկոսի ընտրությանը: Այս գլուխները գրված են հայրենասիրական-էջմիածնասիրական մեծ ոգեշնչումով, որով հեղինակը իր սիրակեզ զգացմունքներն ու մտքերն է արտահայտում Հայաստանի և ու. Էջմիածնի վերաբերյալ. «Հունիս 19-ի արշալույսը կողջունենք Էջմիածնի վանքին մեջ: Հայաստանի պայծառ արևը սենյակիս պատուհանն ենք կխուծե ոսկի ճաճանչներով: Կդփութանք Մայր տաճար, Իջման ու. սեղանին առջև, ծնրադիր կատարելու երկար տարիներու մեր ուխտը, և աղոթելու երկյուղած պաշտումով» (էջ 95):

Այս գլուխների մեջ հեղինակը հանգամանորեն մեզ ներկայացնում է նաև 1945 թվի հունիսին լուսահոգի Գևորգ Զ կաթողիկոսի ընտրության հանդիսությունները, իր տպավորությունները հաղորդել ընթերցողին ու. Էջմիածնի, մայր հայրենիքի և հանդիսությունների ու հանդիպումների առթիվ: Այս-

տեղ սրբազան հեղինակը նկարագրում է նաև ու. Էջմիածնի Մայր տաճարում իր եպիսկոպոսական ձեռնադրությունը:

Այնուհետև խոսում է իր «Առաջնորդական փոխանորդ միջին արևմտյան շրջանի» ընտրության և վավերացման մասին: Որից հետո ամբողջությամբ մեջ է բերում Գևորգ Զ կաթողիկոսի 1946 թվի փետրվար 24 թվակի կոնդակը, որով Սիոն սրբազանը՝ նշանակվում է և հաստատվում «Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակի» պաշտոնին: Այս բաժինը ավարտվում է հայրապետական պատվիրակի գործունեության նկարագրությամբ և Գևորգ Զ կաթողիկոսի կյանքի և գործունեության և մահվան վերաբերյալ նրա տպավորությունների վերաբերյալ:

Գլուխ Ժ. Առաջնորդ հայոց Ամերիկայի.

Այս գլուխը ընդգրկում է հեղինակ սրբազանի 1959-ից 1966 տարիների բեղմնավոր ու շնորհակալ աշխատանքների ընդհանուր պատկերը, ուր ամփոփված են առաջնորդի ողջունի, օրհնության գրերը, ողողված մշակութային կյանքին, դպրոցներին, կազմակերպություններին, հավելյալ նկարագրում է յուրաքանչյուր եկեղեցու պայծառացման համար կատարած իր ջանքերը և իր ուրախությունները հաջողության և տիրությունների՝ անհաջողության մասին:

Այս բաժնում հեղինակը մեծ տեղ է հատկացրել 1960 թվի մայիսին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի դեպի Ամերիկա առաջին ուղևորության, նկարագրելով պատմական այդ ուղևորության եկեղեցական, հոգևոր, հայրենասիրական մեծ արժեքն ու հայապահպանման համար կատարած նրա աշխատանքների կարևորությունը:

*
*
*

Սույն հուշամատյանի մեջ Սիոն արքեպ. Մանուկյանը մեծ կարևորությամբ խոսում է նաև «Նոր սերունդի» հայեցի և քրիստոնեական դաստիարակության մասին, հարց, որին հաճախ անդրադառնում է հեղինակը իր գրքի մեջ.

«Նոր սերունդի ազգային դաստիարակության հարցը».

«Հայ երիտասարդության ուղեգիր».

«Նոր սերունդին հարցը» (էջ 73, 75, 76, 80):

Այս բաժինները շատ այժմեական են և մերօրյա, նաև անհրաժեշտ վաղվա կյանքի համար: «Եվ որպեսզի եկեղեցական երիտասարդի մը կյանքը աստվածային օրհնությամբ օծուն ըլլա. ու անապոստոլ դիմե իր կյանքի նպատակին խաղաղ նավահան-

գիտությունը, երեք ազգականներ կամ առաքինություններ անհրաժեշտ են իրեն. հավատք, նպատակ, աշխատանք»:

Հավատք ոչ միայն Աստծու, այլև ի՛ր անձին, ի՛ր ուժերին, ի՛ր մեջ վառված աստվածային լույսին, այլ խոսքով ապրելու հավատք:

Նպատակ ձգտումի, տենչի, վաղվա օրվա, քանզի աննպատակ մարդը առանց կողմնացույցի նավարկի մնան է, որը գերի է ալեկոծությանը և քամու քմահաճույքներին:

Աշխատանք մաքուր, սուրբ աշխատանքի, ճակատի քրտինքով շահված արդար վատակը, աշխատանքն է մարդուն ոգևորողը, գեղեցկացնողը: Աշխատանքը ստեղծագործություն է, արարչագործություն: Աշխատանքը ճանապարհ է Աստծուն հասնելու համար:

Խոսելով հայ եկեղեցու գործի կարևորության մասին, հեղինակը նշում է իրավական շատ կարևոր մի պարագա, որով հայ ժողովուրդը և մանավանդ հայ երիտասարդությունը պարտավորվում են ամուր պահել կապը հայ եկեղեցու հետ, քանզի «Սմերիկայի, ինչպես նաև մյուս գաղութներում մեջ, մենք հայերս կրոնական համայնքներ ենք միայն, և մեր եկեղեցիով կճանչցվինք» (էջ 78):

«Սփյուռքի պատմության մեկ աղյուսն է այս գործը: Եվ մա՛րդն է որ կկերտեն պատմությունը»:

Գրքի մեջ են նաև անդրադարձը ունեցա և հաղորդումը քու հավատալիքի և պայծառ հոգիիդ հետ, որում հորիզոնին վրա երբեք մայր չմտավ ազգին, հայրենիքին և եկեղեցիին սերը, և որ բոլոր արժեքներն ավելի բարձր դրավ իր համոզումներում մեջ հայրենիքն ու ա. Էջմիածինը»:

Հայ մամուլը և ընթերցող հասարակությունը ջերմորեն դիմավորեց սրբազանի այս նոր աշխատությունը:

«Մեր հին մաքրակրոն հոգևորականներու, անխոնջ վանականներու ուղիով հառաջացող ամերիկահայոց նախկին առաջնորդ Սիոն սրբազանին այս երկասիրությունը 272 էջերով, մաքուր տպագրությամբ, ոսկեղենիկ հայերենով հատոր մըն է, որ կուտա մեկ համեմատ այլ գեղեցիկ պատկերը հեղինակին արդյունաշատ կյանքին և օրհնակելի վարք ու բարքին»:

«Շնի է ան իր պարզության մեջ, հարուստ է թաքուն գանձերով, և խոսում իր լույսյան մեջ»:

Վերջաբանի փոխարեն ստորև բերում են այն գրքերի ցանկը, որոնք թարգմանել կամ հեղինակել է Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը.

1. «Ամիս մ'ի Հայաստան», 1946, Նյու Յորք.

2. «Խորհուրդ Վարդանանց», 1946, Պոստոն.

3. «Հայ Երուսաղեմ», 1947, Պոստոն.

4. «Լուսաշող դեմքեր», 1949, Պոստոն.

5. «The Armenian church», 1951, Դիթոնյո.

6. «Ավետարանի պատգամներ», 1953, Պոստոն Այրես.

7. «Քրիստոնեական վարդապետություն», 1954, Պոստոն Այրես.

8. «Աղոթքի կենսագործող գործությունը», 1954, Պոստոն Այրես.

9. «Հայրենի երկրին մեջ», 1954, Պոստոն Այրես.

10. «Նոր աշխարհին հին աշխարհ», 1973, Դիթոնյո.

11. Հայոց Հայրիկ, 1957, Պոստոն Այրես.

12. «Աշխարհի մեծագույն բանը», թարգմանություն, 1957, Պոստոն Այրես.

13. «Քրիստոնեություն և աշխարհի կրոնները», թարգմանություն.

14. «Եկեղեցականի մը կյանքի հանգրվանները», 1968, Պեյրոյո:

50 տարի է, որ Սիոն սրբազանը որպես «մշակ առանց ամօթոյ» խոսել ու մխիթարել է հայ հավատացյալ ժողովրդին, բանիվ և գործով, գրչով ու կյանքով, և ամեն տեղ հետևել Ավետարանի սրբազան պատգամներին, մեր նախնյաց հավատքի հոգին ու հայրենասիրության շունչը, ամեն տեղ, ուր նրան տեսել են հոգևորականի իր պարտքն ու կոչման գիտակցությունը, որպես կենաց Բանին քարոզիչ, ուսուցիչ և դաստիարակ, հայրապետական պատվիրակ և առաջնորդ:


1978 թվի վերջերին տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Վեհափառ Հայրապետի հրավերով, վերջնական բնակություն հաստատեց Մայր Աթոռում:

Նորին Սուրբ Օծության կարգադրությամբ սրբազանը նշանակվեց Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ և ուսուցիչ հոգևոր ճեմարանի մեջ, ուր դասավանդում է Աստվածաբանություն և Սուրբ Գրոց մեկնություն:

Տ. Սիոն արքեպիսկոպոսի «Եկեղեցականի մը կյանքի հանգրվանները» գիրքը հայ եկեղեցու հոգևոր ծառայության նվիրված յուրաքանչյուր երիտասարդ հայ հոգևորականի սեղանի գիրքը պետք է լինի, նաև դրանով առաջնորդվելու համար իր հոգևոր, մշակութային և հայրենասիրական ծառայության ճանապարհին:

Հոգևոր ճեմարանի ավագ վերակացու և ուսուցիչ՝ ԱՐՏԱԿ ԲԶՆ. ՄԻՄՈՆՅԱՆ Ս. Էջմիածին,

24 մարտի 1979 թ.



Լ. Ն. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՅԱԿՈԲԱՅ ՍՐՃԵՑԻՈՅ «ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ ԴԱՆԻԵԼԻ ԳԱԼԱՇԱՑԻՈՅ»

Ըստ վարքի տվյալների՝ Դանիելը եղել է մի անձնուրաց ճգնավոր, ողջ կյանքն անց է կացրել զրկանքների մեջ և մահկանացուն կնքել 439 թ. մայիսի 2-ին: Գալաշացի մականունը նրան տրվել է իր ճգնակեցության վայրի՝ Գալաշ լեռան անունով, որը գտնվում է Մարդինի մոտակայքում:

Եթե իսկապես Դանիելի վարքը պատկանում է Հակոբ Սրճեցու (մահ. 521 թ.) գրչին, որ տարակուսելի է, թեև աղբյուրները միաբերան դա են վկայում, ապա այն պետք է ստեղծված լինի 5-րդ դարի վերջում կամ 6-րդ դարի սկզբում: Ասորերեն սկզբնագիրն առայժմ հրատարակված չէ*. հայտնի է նրա հինգ ընդօրինակություն՝ Փարիզի Ազգային գրադարանի syr. 235 (էջ 160բ—175ա), Մարդինի ուղղափառների գրադարանի № 259.3 և 273 (էջ 140ա—158բ), Դամասկոսի պատրիարքարանի № 9/8 (§ 21, էջ 7բ—§ 22, էջ 6բ) և № 12/17 (էջ 98բ—102բ)**:

Հայերեն թարգմանությունը կատարվել է 1651 թվականին Ամիդում Սարգիս եպիսկոպոսի կողմից: Դժբախտաբար բնագրին կցված հիշատակարանը լույս չի տալիս թարգմանչի ինքնության վրա: Թեև գալթակղիչ, բայց դժվար է նրան նույնացնել Վարդան Բաղիշեցու աշակերտներից մեկի՝ Սարգիս Ամիդեցու*** հետ, քանի որ 1654 թվականին ընդօրինակված մի ձեռագրում վերջինս իրեն կոչում է աբեղա. «Գրեալ եղև շահաւէտ գիրս ... ի

* Վարքի բովանդակության համառոտ վերարտադրությունը տե՛ս F. Nau, *Hagiographie syriaque*, „Revue de l'Orient Chrétien“, t. XV. Paris, 1910, p. 60—62. որի լուսապատճենը սիրահոմաթ կերպով մեզ ուղարկեց ֆրանսաճալ պատմաբան Ժիրայր Տեռլյանը:

** S. A. Vööbus, *Handschriftliche Überlieferung der Memre-Dichtung des Ja'qōb von Serūg*, Bd. I, Sammlungen: Die Handschriften, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“ 344, Subs. 39, Louvain, 1973. p. 29.

*** Սարգիս Ամիդեցու մասին մանրամասն տե՛ս Լ. Ն. Ակիմյան, Բաղիշի դպրոցը, Վիեննա, 1952, էջ 233—236, 318—320:

թվն .ոճգ. ձեռք սարգիս արեղայի և սր կրնաւորի ի լշտկ հգլ իւրլ և ծնողց՝ վղնին, սուրաճում և եղբօրն գաւրին և հգր եղբօրն վրդն արեղայի, որ ճըշ-տագրեաց»****:

Վարքի հայերեն թարգմանությունը մեզ է հասել միակ ընդօրինակությամբ, որը գրավում է Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2270 ձեռագրի 140ա—168բ էջերը: Ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է, ընդօրինակված ժԷ դարում ոմն Սարգիս գրչի կողմից****: Վերջինս թողել է հետևյալ համառոտ հիշատակարանը. «Ով հայրք իմ և եղբայրք, երես յանկեալ աղաչեմ զձեզ, յորժամ լընթողնուք, մեկ հայր մեղայով յիշեցէք անարժան սարգիսն և զծնողքն՝ տունաւագն և զըմբույթն: Եւ որք ողորմիսն ասէք ամէն, քս ամ զձեր մեղքն չիշէ ի միսանգամ գալստեանդ, ամէն» (էջ 10ա): Նույն հիշատակարանը աննշան տարընթերցվածներով կրկնված է նաև 14ա, 17ա, 25բ, 30ա, 35ա, 42բ, 48ա, 114ա, 123ա, 132ա, 168բ—169ա էջերում: Անունների համընկնումը գուցե առիթ կարող է տալ մտածելու Սարգիս թարգմանչի և Սարգիս գրչի նույնության հնարավորության մասին: Սակայն դա պետք է բացատել, քանի որ բազմաթիվ իմաստային աղավաղումներն ու բառերի բացթողումները ցույց են տալիս, որ սույն ընդօրինակությունը թարգմանչի ինքնագիրը չի կարող լինել:

Դանիելի վարքի հայերեն թարգմանությունը հետաքրքրություն է ներկայացնում նախ և առաջ որպէս գրական-մշակութային երևույթ: Մինչ այժմ բանասիրությանը հայտնի էր, որ ասորերենից հայերեն վերջին թարգմանությունները կատարվել են 13-րդ դարում: Ծնորհիվ խնդրո առարկա բնագրի՝ հնչ-ասորական գրական հարաբերությունների պատմությունը երկարաձգվում է շուրջ 400 տարով: Վարքն արժանի է ուշադրության նաև ժԷ դարի գրական հայերենի ուսումնասիրման տեսակետից, եթե նկատի ունենանք հատկապէս աշխարհաբարի տարրերի առատ ներթափանցման հանգամանքը: Այդ պատճառով սույն հրատարակության մեջ մենք պահպանել ենք ձեռագրի ուղղագրությունը, վերացնելով միայն բացահայտ գրչական վրիպումները: Միջամտել ենք նաև այն դեպքերում, երբ բառը կորցրած լինելով իր նախնական ձևը, կարող է թյուրիմացությունների տեղիք տալ, ինչպես՝ **գրգռագգեստ** (քրքրագգեստ), **աստ** (ագդ), **երգ** (երկ) և այլն:

Աստղանիշ կրող թվերը բնագրի վերջում գետեղված պատմա-բանասիրական ծանոթագրությունների համարներն են, իսկ մյուսները վերաբերում են տողատակի բնագրական նշումներին:

140ա Անուն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ակն ունիմ զապացեալ բանս Դանիէլի և սբանչելիսն զոր արար, ի պատմել և թարքմանել Յակոբայ հայրապետէ Սըրունեցոյ

Արհնեալ է Աստուած յամենայն ժամ: Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուածն ամենայնի հրամայել մեզ, թէ «Յամենայն յաւոր մի՛ պակասեցի՝ հաւնել զարհմութիւն ի բերանոյ ձերմէ»¹: Յամենայն ժամ, որ // լինիք մասնակից և պակակից ընդ սրբոյն, խաւսք առաքելական², յոր յստաջմէ քարոզած են մարդիք, թէ որպէս

**** Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1764, էջ 389բ:

***** Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևան, հատ. 1, 1965, էջ 761—762:

¹ պակասեցի:

² առակելական:

առաքելական գործ գործեաց սքանչելագործ սուրբ ճգնաւորն Դանիէլ, վասն աստուածային և առաքելական գործոյն³:

Եւ էր սուրբն Դանիէլ ի Միջագետս Ասորոց ի յերկրէն յԱմբայ, որ յաժմ ամուսնեալ կոչի Տիգրանակերտ⁴, և ինքն մեծատուն առն որդի և ամուսնի: Եւ յոյժ վառեալ էր ի սէրն աստուածային, և ելեալ երթայր զաղտաբար ար բստ արէ ի լեւոն, և ծածկաբար աղօթէր զտիւ և զգիշեր անդադար ծնորադրութեամբ: Կայր դառնալէս և հառաչմամբ սրտիւ արտասուս հեղոյր որպէս զաղբիւր: Զկործան բաղէր և զզոխըն կոսիւր և զամենայն մարմինսն չարչարէր անուանելի տանջանաւ, և աղաթէր անհամբիտ: Եւ էր յայն լեւոն մօտ ի յԱնշֆրին⁵ գեղին⁶ ի⁷ բնակութիւն իւր հայրեանական: Եւ սուրբն աղաթաւէր էր և պրբաւէր, աղքատաւէր և աստուածաւէր, ողորմած էր և գթած, բարեւէր և բարեռեալ:

111^ա Եւ էր սուրբն Դանիէլ // ի տիս հասակի և չափու ամաց հնգետասից, և ինքն միամար էր հարն և մարըն իւրոյ: Կամեցան հայրն և մայրն իւր յամուսնացուցանել զսուրբն Դանիէլ: Եւ սուրբն չիմացաւ զամուսնութիւնն իւր, զցազ և զցերեկ արտասուէր դառնալէս և աղաղակէր, և բախէր⁸ զկործան, փնտրէր զհերսն և զմորումս, հարկանէր զծնօտըն: Եւ հեղոյր զարտասուս և աղալէր պաղատէր, և այնպէս հառաչանաւ հայցէր և ասէր. «Տէր իմ և Աստուած իմ, մի՛ կատարեսցես զիմոյի ծնողացս իմ յայսմ իրաց, այլ անցոյ զինն»: Եւ եկեալ ազգականքն և բաղաբակիցքն, ողորմանաւ և բապտոնաւ, կամաւ և ակամայ եղին պսակ և ամուսնացուցին զնայ: Եւ նայ վասն ամաթախածութեան իւրոյ և խոնարհութեան ոչ դարձոյց զհրաման հարն և մարն, այլ յետ⁹ զանձն իւր և համբերեաց զամուսնութեան: Եւ սուրբն Դանիէլ և նա ելանէր ամենայն ժամ ի յերինն և այլ առսել աղաթէր, լայր և արտասուէր, պաղատէր և աղաղակէր ասելով. «Տէր Աստուած ամենայնի, մի՛ կատարեսցես զայս անցաւոր մարմնական սէրն, // այլ արժանի արասցես զհոգեւոր ուրախութիւն, զոր պատրաստեալ ես արդարոց»: Եւ զայս ասելով յամենայն ժամ արտասուէր և լայր անդադար:

Եւ հրամանան Աստուծոյ եկալ Մարուգէ¹⁰ ճգնաւորն ի հիւսուսային կողմանէս և ընդ հարաւոյ գնաց: Եւ երեկոյացաւ արն, զնայ ի գիւղն և յօթեցաւ ի տունն սրբոյն Դանիէլի: Եւ ի մտանել սուրբ ճգնաւորին Մարուգէին կտես սուրբն Դանիէլ, ցնձացաւ և ուրախացաւ յոյժ վասն տեղեանն ճգնաւորին: Եւ ասաց սուրբն Դանիէլ ընդ սրբոյն Մարուգէի. «Բարի եկիր սուրբ հայր, Աստուած ատաբեաց զքեզ վասն իմ, զի եկ եղիցուք որդի և հայր հետ միմեանց»: Եւ եղևն այսպէս: Եւ սուրբն Դանիէլ պատմեաց զանցս, զոր անցին ընդ ինքեան վասն պատժաւի ամուսնութեան, և զամենայն ինչ խտտովանեաց նմայ կարգաւորաբար: Եւ դարձեալ անկեալ առ ոտն սրբոյն, լայր դառնալէս և արտասուէր և ասէր. «Ով սուրբ Աստուծոյ, ազատեալ զիս այս մեղաւոր և սուտ աշխարհէս», այսպէս աղաղակէր, պաղատէր և կողկողէր // ասելով:

112^ա Եւ էր ամիսն յունվար: Եւ եղևն միախառս և միախորհուրդ և եկալ զնային: Եւ իմացան հայր և մայրն իւր, լային և արտասուէին զորդին իրեանց՝ զսուրբն Դանիէլ: Եւ ի գիրկս արկեալ արտասուաթոտ աչօք համբուրէին զերեսն և չտային թոյլ, որ զնայր, այլ ընդ երեսն որոյ իրեանց կարաւին և վիճէին և ողբս տեսալ երգէին այսպէս. «Ով սիրելի որդեակ մեր, ո՞րպէս որոշիս ի ծնողաց, զի ոչ թողունք զքեզ: Ով [յուս]⁷ աչաց մեր և սիրտ ուրախութեան մեր և ցնձութիւն, զի՞նչ տանիցես զերեակ ծնողք քո, առ ո՞վ երթիցեմք և մխիթարիցիմք»: Եւ սուրբ ճգնաւորն Մարուգէ եթող, և սուրբն Դանիէլ անկեալ առ ոտն սուրբ ճգնաւորին և ասէր. «Ով սուրբ հայր, ի սէրն Քրիստոսի մի՛ թողոյր զիս միայն և զնայ», և զարտասուսն հեղոյր որպէս զաղբիւր:

Եւ սուրբն [Մարուգէ կայր ընդ սրբոյն]⁸ Դանիէլի է՝ (7) ար և յուսուցանէր նմայ գրանս աստուածային գրոցն՝ զհին և զնոր կտակարանացն, և յետ է՝ (7) ատուրցն եկալ զնայր: Սուրբն Մարուգէ ուխտ եղ ընդ սրբոյն Դանիէլի. «Անայ այժմ

³ Նախադասութիւնն աղաւաղուած է. հաւանաբար բառեր են ընկել.

⁴ և:

⁵ քարէր:

⁶ հետ:

⁷ չիք:

⁸ Այստեղ բառեր են բացթողած. վերականգնում եմ ենթադրաբար:

142բ ևս գնամ, յորժամ որ անդրեմ դառնայցեմ կրկին անգամ // առ քեզ: Եւ զայս ասացեալ էլ: Ընդ գնալն սրբոյն Մարուգէին տրտմեցաւ սուրբն Դանիէլ զցայգ և զցերեզ մեծաւ տրտմութեամբ, քանզի վստեալ էր ի սէրն Քրիստոսի և կայր տարակուսեալ, եթէ զհարդ եղև սուրբ հայրն Մարուգէ, որ ոչ եկ որպէս և խոստացաւ և պայման եղ:

Եւ մինչ ի յայս տրտմութեան մէջ կայր սուրբն Դանիէլ, այս արար նմայ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի ձեռն ճգնաւորին միոյ: Յաւոր միոյ ի յերկոյն ժամուն, որ նսեմացեալ էր արն, սուրբն Պարսամ⁹ ճգնաւորն ելանէր յարևելեան կողմանէ և ընդ յարևմուտս գնայր: Ելին ընդ առաջ սրբոյն Պարսամայ ճգնաւորին ամենայն մարդիք և զեղականք, և սուրբն Դանիէլ ընդ մոսայ երթայր: Եւ ի տեսանելն սուրբ ճգնաւորն Պարսամ գտորբն Դանիէլ, հայեցաւ ընդ երեսն և ասէ ի լոր ամենայն քազմութեանց մարդկան. «Լուարուք ինձ հայրք և եղբայրք, տեսանեմ ես, զի ամենայն ժամ շնորհըն Աստուծոյ իբրև զլուս փայլէ և փայլատակէ ի վերայ սորայ իբրև զՏեսանեմ և ես, զի քազում շնորհս երկի ի վերայ սրբոյս այս, այլ և ի նշխարաց սորին և ոսկերաց քազում բծշկութիւն և փարատումն լինի ամենայն ցաւոց, հիւանդաց և ախտածեւտաց⁹, բորոտաց¹⁰ և պիսակոտաց»: Եւ զայս ասացեալ մարգարեական յոգով սուրբն Պարսամ և այնու դարձեալ յետս, գնաց ի տեղի իւր: Եւ զեղականքն ամենայն զարմացեալ սքանչելեացն ընդ ասել քանին սրբոյն Պարսամայ, և ակն ունէին ամենեքեան տեսանել, թէ որպէս կատարի մարգարէութիւն սրբոյն, զոր ասաց: Եւ խնդութեամբ զարմանային ընդ միմեանս, թէ յերբ լինելոց է այս, և ի յոյս ակնկալութեան աղազաւ էին վասն սրբոյն Դանիէլի, թէ որպէս կամ զհարդ տեսանիցեն զնայ այնպէս սքանչելեալք, զոր ասացաւ ի վերոյ:

Եւ յետոյ հայրն և մայրն և ազգականքն սրբոյն Դանիէլի կամեցան հարսանիս առնել, և արարին պատրաստութիւն հարսանեաց որդոյն իրեանց: Եւ ելեալ կոչէին զազգականսն և զորացիսն, զսիրելիս և զքարեկամսն ի հարսանիսն: Եւ սուրբն վիճէր ընդ հարն իւրում // և ասէր այսպէս. «Ով հայր իմ, ընդէ՛ր կոչես զտոքայ ի հարսանիս իմոյ, մի՞թէ չես լուեալ և իմացեալ զքանն որպէս և զրեալ է ի սուրբ անտարանին, թէ «որ ժամ առնուցուս ճաշ կամ յընթիս, մի՛ կոչէր զքարեկամս կամ զորացիսն քո, այլ կոչե՛ալ զկաղս և զկոյրս և զանթամալոյծս, զի մոքայ ոչ լուին հատուցանելոյ»¹¹: Եւ սուրբն կոչէր զաղքատս ի հարսանիս: Եւ հայր ուրախանայր ուրախութեամբ մեծաւ ի վերայ որդոյ իւրոյ: Եւ սուրբն աղեկիզեալ¹¹ մորմոքեր ի սրտի իւրում և լայր և հառաչէր և սուք առնոյր ի վերայ անձին իւրոյ և ասէր ասելով այսպէս. «Ո Տէր, որովհետև որ ամուսնացուցին զիս, աղաչեմ և խնդրեմ ի քնն, մի՛ թողոր զիս ի ձեռաց քոց և մի՛ ապախտ առնէր զիս ի շնորհաց սրբոց: [Վ]ասն որոյ ամուսնացուցին զսուրբն, և ննջեաց ընդ կնոջն զԺամ ինչ, և դարձեալ ես քան զես տազնապէր, վարանէր ի միտս և ի խորհուրդս, թէ՛ «որպէս լինիցին»:

144ա Եւ մինչ սուրբն Դանիէլ ի յայս խորհրդեան և տրտմութեան ի մէջի կայր վարանեալ և տարակուսեալ կենալք, ոչ ուտէր և ոչ լըմպէր, ոչ ցնծայր և ոչ ուրախանայր, միայն զփրկութիւն խնդրէր՝ և ողորմեցաւ նմայ Աստուծ և գթացաւ ի նայ, զի տեսեալ զայնչափ հաւատս և զւէր, զոր ունէր առ ինքն, որպէս և աստուածահայր մարգարէն Դաւիթ ասէր՝ «և կամ երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղաթից մոցա լսէ և կեցուցանէ զնոսայ»¹², ծագեաց լուսն ողորմութեան իւրոյ իբրև զճառագայթս արեգական ի վերայ մորա: Եւ ի նոյն ատուրն ազդ եղև սրբոյն Մարուգէի ի տեսեալն երազոյ գիշերին և ասէ. «Ո՛ր է խոստումն քո, զոր խոստացաւ ընդ սրբոյն Դանիէլի»: Եւ սուրբն Մարուգէ զարթեալ ի քնոյ ի տեսեալն երազոյն զանի հարեալ, և այլ ոչ քնեաց¹²: Եւ լուսացաւ գիշերն այն, ելեալ փութանակի եկն դարձեալ առ սուրբն Դանիէլ: Եւ յորժամ տեսին զմիմեանս, յոյժ ուրախացան: Եւ սուրբն Մարուգէ խրատէր սուրբ Դանիէլ աստուածային գրոցն և պատուիրանացն, ժամատանդ 144բ զքանն անտարանին, որ ասէ. // «Եթէ որ սիրէ զհայր կամ զմայր կամ զեղբայր

⁹ ախտածեւտաց:

¹⁰ բորոտաց:

¹¹ աղեկի լեալ:

¹² գնաց:

կամ զքոյրս կամ զուսոր¹³ կամ զդուսոր առաւել քան զիս, չէ իմ աշակերտ. եթէ¹⁴ որ¹⁵ առնուցու զիս իր և եկեացէ զնմի իմ, նայ է իմ աշակերտ»⁸: Եւ այլ բազում գրոց վկայութիւն և խրատ տալոյ սրբոյն Դանիէլի և միսթաբեր զինքն:

Եւ սուրբն Դանիէլ յայր և արտաւտէր և զարտաստան իբրև զառու ճուէր անկեալ ի վերայ առաջի սրբոյն Մարուգէի, և ճառաչէր, պաղատէր, աղաչէր և աղաղակէր ասելով. «Ով սուրբ ճալր իմ, ո՞րպէս լինի, որ զերծիմ¹⁶ ի յայս մեղաւոր աշխարհէս»: Եւ սուրբն Մարուգէ ճնարս իմացաւ վասն, և մտախորհ եղեալ, թէ որպէս արասցէ, առեալ զսուրբն Դանիէլ և ելին ի լեւոն, որ կոչի Տակոշ¹⁷: Եւ առնէին խորհուրդ ընդ միմեանս թէ որպէս կեցցուք: Եւ յաղաթս¹⁷ կացին առ Տէր մինչև ի տունն իւր, և ինքն մտախորհ եղև, թէ որպէս առնիցէ զսուրբն Դանիէլ և գնասցէ այլ իմն տեղոց: Եւ կանգնեցաւ¹⁸ յաղաթս առ Տէր Աստուած և ասէ. «Ոչ դադար//իմ ի տանջելոյ և չարչարելոյ զմարմին իմ մինչև յայցելութիւն արասցես ինձ»: Եւ զայս ասելով ճուէր զարտաստան ի յաջացն որպէս զառու սուրբն Մարուգէ:

Եւ յետ պահու միոյ կազմեցաւ¹⁷ սակաւ ինչ: Եւ յանկարծակի ի մէջ գիշերին երևեցաւ նմայ հրեշտակն ի տեսեալն երազոյ և ասէ. «Մատալ Քրիստոսի սուրբոյ Մարուգէ, զի՞ տխրեալ ես և տրտմեալ վասն մանկանն: Աստ ճանցեալ Աստուած բնակիլ ի լերինս այս, զի ժամահոռութիւն կրոնապաշտիցն պիտեալ է յերկիրս²⁰ այս: Եւ սուրբն Դանիէլ սրբեացէ և մաքրեացէ զերկիրս զայս և բուրեացէ ճոտ ամուշութեան²¹ ի յերկիրս այս»: Եւ յարձեալ եւ կրկին անգամ ասաց հրեշտակն զսուրբն Մարուգէ. «Եւ ես զայս գիտացիր սակս սրբոյն Դանիէլի, զի շինեացէ լեւոնս այս վիմիս եկեղեցիս և կանգնեացէ տաճար ի վերայ վիմիս, և լինի բնակատուն ճգնաւորաց, զի սեփական լիցի»: Եւ զայս ասացեալ անյայտ եղև տեսիլն: Եւ զայս եւ յարձեալ գիտելի, զի կայր ի լերինս այն Դ (4) մեծ վեմ, որ նմանէր իբրև զդիւատուն: Եւ սուրբն եկաց յաղաթս, // և իսկոյն ոչ ինչ դարձաւ: Եւ յորժամ ետես զտեսիլն սուրբն Մարուգէ, զարթեալ ի մէջ գիշերոյ ի յերազոյ քնոյ և կանգնեցաւ յաղաթս մինչ որ լուսացաւ²²: Եւ յետ լուսանալոյն եկեալ ի տանէն²³ սուրբն Դանիէլ և գնաց ի լերինս մատ սուրբն Մարուգէ, և արարին խորհուրդ ճետ միմեանց վասն գնալոյ ի յուրեան: Եւ ելեալ գնացին:

Յատուր միում, մինչդեռ ի ճանապարհին էին ընդ գնալն իրեանց, ազդ²⁴ եղև ծնողաց սրբոյն Դանիէլի և իմացան, թէ Մարուգէ ճգնաւորն առեալ է զորդին իրեանց և գնացեալ: Եւ խորհուրդ արարեալ ճալրն և մայրն սրբոյն, զի քերցն կապանաւորն զսուրբն Մարուգէ և դառն տանջանք չարաչար տանջեցն: Եւ առաքեաց ճալրն սրբոյն Դանիէլի Դ (4) զինուորս՝ ձիաբ²⁵ բերել զԴանիէլ և զՄարուգէ: Եւ սուրբն ի ճանապարհին էին՝ նստեան: Եւ տեսեալ հոգով սուրբն Դանիէլ ի հեռատանէ զզինուորսն Բ (2) մղոնա հեռի, և ասաց ընդ սրբոյն Մարուգէին. «Ով սուրբ // ճալր, եկ երթիցուք ի լեռնակողմն, զի ահայ եկին զինուորս բմբունել զմեզ»: Եւ ասաց սուրբն Մարուգէ. «Եկ կանգնեցուք յաղաթս և կանգնեցուք առ Տէր, զի նայ փրկեացէ զմեզ և ազատեացէ զմեզ ի ձեռաց անարիմացքս այսոցիկ»: Եւ յետ այսր կանգնեցան յաղաթս²⁶ առ Տէր: Եւ ճառաչեաց սուրբն Մարուգէ ի խորոց սրտէ համբարձեալ բազկաւ և ասէ. «Տէր Աստուած ամենայնի, անհմարինն քեզ հնարաւոր է: Դու ամենայն յիւրաց կարող ես փրկել և կեցուցանել, որպէս շիջուցեր

¹³ զուսոր:

¹⁴ եթէ եթէ:

¹⁵ ոչ:

¹⁶ զմերծիմ:

¹⁷ աղաթս:

¹⁸ կանգնեցաւ:

¹⁹ ըստ երևութիւն, բառն աղաւաղուած է:

²⁰ երկիրս:

²¹ ամուշութեան:

²² լուսացաւ:

²³ ի տանն:

²⁴ աստ:

²⁵ միաբ:

²⁶ աղաթս:

գրոց հնոցին և զերիս մանկունսն ի հրոյն բռնութենէ ազատեցն^{10*}: Եւ դարձեալ հրամանաւ քոյ զաշխ կուրացուցեր չարեացն և ազատեցեր զեղիայ մարգարէն ի ձեռաց նոցայ դու, Տէր: Աղաչեմք, պաղատեմք, հայցեմք և խնդրեմք ի քեզ, ընկա՛լ զաղաչանս մեր և զխնդրութեամբս, և կուրացո՛յ զաշխ սոցայ, զի մի՛ տեսանիցեն զմեզ, զի յոյս մեր և ապաւեն և ազգական դու ես^{11*}: Ջայս ասաց Մարութ, և նստան ի ճանապարհի:

116բ Եւ հրամանան Աստուծոյ զհնուորքն խելագարեցան // իբր զանխելս: Ջի կուրատես եղեալ էին և ոչ ճանաչէին, այլ եկեալ հասին առ սուրբսն և ասէին. «Գիտե՛ք զԴանիէլ և զհետ նորայ զՄարութ, զի փախստական եղեալ գնացին: Եւ հայրն և մայրն Դանիէլի աղէկիզեալ և մորմոքեալ լան և ողբան վասն որոյն, զի և զմեզ պնդութեամբ և փոյթ ընդ փոյթ ուղարկեցին աստ, զի կապանաւք տանիցուք զՄարութ, այլ և զԴանիէլ ընդ նմայ, և ոչ գիտիմք, թէ ուր թաքեան կամ փախեան»: Եւ զայս ասացեալ զհնուորացն, անցեալ զսուրբսն²⁷ և գնացին յառաջ Բ (2) մղոնաւ հետի ի սրբոցն: Եւ սուրբքն ոչ տային ճանաչութիւն և ոչ բնաւ ընդ նոցայ խաւսեցան, այլ զգլուխ իրեանց ի խոնարհ ունելով, հայելով ի յերկիր գնացին զճանապարհս իրեանց: Իսկ զհնուորքն յորժամ մօտեցան ի լեռոն, որ կոչի Հեսմայ²⁸, իմացան այսու հետեւ զմոլորութիւն իրեանց: Եւ դարձան անդրէն յետս, և տեսին զսուրբսն²⁷, և եկին կրկին առ սուրբսն և հարցանէին, թէ որպէս եղին: Ասաց Մարութ ընդ զհնուորսն. «Ով զհնուորք, դարձարո՛ք յետս // և գնացէ՛ք, և մի՛ կանգնիք այսպէս ի լրբութեամբ ատաշի հրամանացն Աստուծոյ, զի ոչ՝ մոլեգնիք և դատապարտիք ի յԱստուծոյ»: Իսկ զհնուորքն իբրեւ լուսն զբանս զայս, ահիս և դողութեամբ դարձան յետս և գնացին ի տունս իրեանց: Եւ յորժամ հասին ի յԱմթայ²⁹ գիւղն, ուր բնակութիւն էր սրբոյն հայրական, և սկսան պատմել զանցս, զոր անցին ընդ ինքեանք և զամենայն ինչ, որ եղև ի ճանապարհին, պատմեցին զայն ամենայն հարն և մարն սրբոյն Դանիէլի և ազգականացն և քաղաքացոցն իրեանց: Եւ իբրեւ լուսն ամենեքեան և իմացան, զարմանայի՛ն և ըսքանչանային և փառս և գոհութիւն տային Աստուծոյ: Այլ և քաղաքացիքն ամենայն ասէին, թէ կատարեցի մարգարէութիւն Պարսամայ ճգնաւորին, յոր վկայեաց յառաջագոյն:

Իսկ սուրբքն եկեալ գնացին ի լեռան, որ կոչի Հեսմայ: Եւ անդ կայր կրանաւոր մի, որ էր վանացն սպասաւոր: Եւ տեսեալ զմիմեանս, յոյժ ուրախացան: Եւ ասաց սպասաւոր վանացն. «Ով սուրբ հարք, կացէ՛ք մնացէ՛ք աստ, զի յոյժ փափաքիմ կեալ և լինել ընդ ձեզ»: Եւ սուրբքն կացին // անդ ընդ սրբոյն, և լինայ[ին]³⁰ միատեղ երեքեան: Եւ կարդացին սուրբքն և աղաթէին անդադար զտիւ և զգիշեր աստուածային գրոցն հին և նոր կըտակարանացն³⁰: Եւ հետ միմեանց աղաթէին առաջի ցրտոյ տօթոյ, պահաւք և ծովաւք և ասէին այսպէս. «Տէր Աստուած յաղագս ամենայնի, զի որպէս զսուրբ Խ (40) մանկունքն ի Սեբաստիայ³¹, որ ի մէջ լըճին, չարչարանաւք առաջի ցրտոյ տօթոյ կատարեցան, նոյնպէս և այժմ ողորմութեամբ և խնամաւք քո մեզք այլ այնպէս առաւել պնտեցուք ի պահս և կացուք ի յաղաթս և չարչարեցուք զմարմինս մեր առաւել, զի յար ըստ օրէ զպահն և զճեզմութիւն մեր աւելացուցանեմք, զի զմեզ այլ նոցա պսակացն և պատուոյն մասնակից և պսակակից արասցես»: Եւ այսպէս անտանելի ճգնութեամբ կային սուրբքն հետ միմեանց, սիրով և միաբանութեամբ քաղում ժամանակ առ սուրբն³¹ կային:

148ա Յետ ժամանակաց խորհուրդ արարեալ ընդ միմեանց, զի երթիցեն ի յԵրուսալիմ և տեսութիւն պատկերին Քրիստոսի, // որ ի դատաւանակն է³², և եկեալ գնացին ի ճանապարհն: Ընդ գնալն իրեանց իջեալ էին ի լեռնէ անտի ծածկաբար Դ (4) առազակք: Եւ յորժամ սկսան գնալ, թափեան ի վերայ սրբոցն և ըմպլոնեցին զսուրբն Մարութ և զսուրբն Դանիէլ: Որոնցնցին զՄարութ՝ պատմունանն և իրք ոչ գտին: Եւ յետոյ որոնցնցին սրբոյն Դանիէլի Մ (200) արծաթ հետ իւրն: Սուրբն Դանիէլ, յորժամ որ եկեալ էր ի տանէն հարն, և առեալ էր ընդ իւր Ն (400) արծաթ վասն ողորմութեան պատճառի, ԲԺ (200) քաժանեալ էր: Յորժամ գնայր ի յԵրուսալիմ, նայ

²⁷ զսրբն:

²⁸ համթայ:

²⁹ լինայ:

³⁰ կըտակարանցն:

³¹ սրբն:

³² առազակն:

տալիս որոշմունքին վանորէից և եկեղեցեաց, զի այս պատճառիս համար, որ կայր հետ իւրն արծաթ: Եւ յետոյ սուրբն Դանիէլ ընդ առազակսն³² ասաց. «Ով առազակ, զի՞նչ խնդրէք յինչն այդպիսի բռնութեամբ և զարտութեամբ»: Ասեմ առազակքն. «Զինչ որ արծաթ կայ ի մօտ քեզ, զայդ ամենայն տո՛ւր մեզ»: [Այս սուրբն Դանիէլ. «Ով անարեւելք, կարող չէք առնել զայս արծաթն, զի այս արծաթն աղքատաց է: Եւ թէ ինձնէն որոշմունքին կու խնդրէք և պահանջէք, // մայ տամ ձեզ արծաթ ըստ արծաթեաց ձերոց: Եւ թէ առանց որոշմունքեան, զարտութեամբ և ակամայ առնուք ինձնէն արծաթ, չունիք իշխանութիւն և ոչ հրաման: Եւ մինն ի յառազակաց լրեցաւ և սրտմտեցաւ և էհար քրաւք, որ ի ձեռին իրում, գտորքն Դանիէլ: Եւ սուրբն Դանիէլ բարկացաւ և անձ զառազակսն: Եւ ընդ ասել բա՜՜իմ, ել հոտ ի բերանդ սրբոյն Դանիէլի իբրև հարած առազակի քրի կերպին և նման, և պատճեաց զնոսա չարաչար պատժով: Եւ եղևն նոքայ իբրև զգունտ և թափեցան ի վերայ երեսաց յերկրի: Եւ յետոյ աղաղակեցին առազակքն³³ մեծաւ բարբառով և ասեմ. «Ով սուրբոյ Աստուծոյ, որոշմունք մեզ, տանջեմք չարաչար»: Եւ սուրբն Դանիէլ պատասխանի յետ նոցայ և ասէ. «Ո՛ր հաւատոյ վերայ կայք»: Եւ ասեմ առազակքն³⁴. «Մենք մանկեկի ազգեմ ենք, որ ինքն հերժվածող է ի քաղաքէն հարաւայ»³⁵: Ասէ սուրբն Դանիէլ. «Հաւատա՛յք [ի]»³⁶ հայր և որդի և սուրբ հոգի, որ թէ կամիք որջանալ: Եւ նոքայ ասեմ. «Հաւատա՛մք և խոստովանիմք»: Սուրբն Դանի/էլ և Մարուգէ կանգնեցան յաղաթս առ Տէր և խնդրեցին աղաչանաւք զթշկութիւն առազակաց: Եւ սուրբն Դանիէլ խաչակնքեաց ի վերայ նոցայ և ասէ. «Հրամանա՛ն»³⁸ Աստուծոյ զարացարո՛ւք և կացէ՛ք»: Եւ նոյն ժամայն ողջացան առազակքն, և բացան աչք նոցայ: Եւ անկան առ ոռոս սրբոյն և խնդրէին ի նմանէ զթողութիւն, մանաւանդ և եղևն կրտսնաւորք և զնացին ի հետ սրբոյն ի յնրհայ վասն ճգնութեան:

Եւ սուրբն Դանիէլ և Մարուգէ ճգնաւորն երկրպագեցին Քրիստոսի պատկերին և յարհնեցան ի նմանէ և շրջին ի վանորէայս և տային և բաշխէին զայն արծաթն որոշմունքին կրտսնաւորացն, աղքատաց և կարսաւտեցոց: Եւ յետ այսո զնացին ի յետն և որոնեցին իրեանց աղաթելոյ և ճգնելոյ տեղիս: Եւ գտին ի յետն անդ և բնակեցան անդ Բ (2) ամ, հետի ի քաղաքէն Բ (2) մղոնաւ, ի կողմն հարաւոյ: Եւ այնքան մեծ և անտանկի վարուք ճգնեցան սուրբքն, որ առասել սրբութեանցն և ճգնութեանցն հռչակեցան³⁷ անուանք իրեանց ընդ ամենայն երկիր՝ ի կողմանս յնրհայո, // մանաւանդ և ի հարաւոյ: Բերէին առ սուրբն զամենայն հիւանդս և ցաւազարս, ախտածէտս և բորոտս, կտղք և կոյրք, խուրք և համրք, միակողմանիք և պիսակոտր և զամենայն ցեղ ցաւս վասն թշկութեան: Եւ սուրբքն յաղաթս կային և հրամանա՛ն³⁸ Աստուծոյ և բանին ողջացուցանէին զնոսա զամենեւեմ: Եւ տային արծաթ և ոսկի վասն թշկութեան իրեանց: Եւ սուրբքն ամենին ոչ առնէին ի ձեռս իրեանց, այլ հրամանաւ իրեանց և պատուիրելոյ՝ նոքայ տային վանորէից և աղքատաց և զնային³⁹ ի տեղիս իրեանց ուրախութեամբ և ցնծութեամբ, և փառս տալին Աստուծոյ:

Եւ աւուր միում խորհուրդ արարին սուրբն Դանիէլ և Մարուգէ ճգնաւորն զնայ այլ երկիր: Եւ այնմ զիշերի ի տեղեանն երազոյ երեցաւ հրեշտակն սրբոյն Դանիէլի և միախաբէր զնայ բազում բանիք և ասէր. «Ով սուրբոյ Դանիէլ, այսուհետև որպէս խորհուրդ արարեալ էք փոխել ի տեղոջս յայմանէ, մայ ոչ կամեցաւ Աստուած զփոխել քոյ ի տեղոջէն: Զի ամայ ձեզն քաջութեան քոյ եհաս առ հայրն երկնաւոր, և պատրաստեալ է // քեզ պսակ լուսոյ՝ զանազանեալ զեղեցիկ ակամքք և մարգարտաւ: Եւ քեզ ի հայրական վիճակտ եղիցի բնակութիւն քո որպէս յառաջագոյն: [...]»⁴⁰ պատրաստեալի սրբոյն Մարուգէի, զի անունս քաջութեան քոյ հռչակեցի ընդ)»⁴¹ ոլորտս տիեզերաց: Դարձեալ եղիցի քեզ բաժանումն ի միմեանց, և սուրբն

³² առազակն:

³³ յառազակքն:

³⁴ չիք:

³⁵ հրաման:

³⁶ հռչակեցան:

³⁷ հրաման:

³⁸ զնացին:

³⁹ ըստ երկրորդին, բառեր են ընկել:

⁴⁰ չիք:

Մարուզէ երթիցէ ի լեւոն Մերտինայ, և դու երթիցես ի հայրական գաւառն և անդ կեցցես: Նայ և այնմ գիշերի երեւցաւ իրեշտակն սրբոյն Մարուզէի ճգնաւորին կրկին անգամ և ասաց նմայ վասն բաժանելոյ մի ըստ միոյն, որպէս և պատուիրեաց սրբոյն Դանիէլի յառաջագոյն և ասաց: Յետ բանիցս այսոցիկ զարդեալն երկոյնեանն ի յառաւարտին և եկին առ միմեանց և պատմեցին զերազն, զոր տեսին ի⁴² յայնմ⁴³ գիշերին, և հիացան սքանչացան և փառս ետուն Աստուծոյ: Եւ յետ այսր կրկին անգամ ազդումն⁴⁴ եղև ի հրեշտակէն Աստուծոյ առ սուրբ Մարուզէ, զի բաժանեցան ի միմեանց երանելիքն: Յայնժամ ելեալ սուրբքն, անկեալ ի պարանոցի միմեանց, արտասուաթոռ աչաք համբուրէին զմի/մեանս և լային յոյժ՝ մինչև արտասուն հեղոյր ի յաչաց իրեանց որպէս զգետ: Եւ յետ այնքան լալոյն և կոծելոյն ողջունեցին զմիմեանս և ասեմ. «Դու Տէր Յիսուս, լե՛ր ընդ մեզ»: Եւ զայս ասացեալ որոշեցան և բաժանեցան ի միմեանց: Սուրբն Մարուզէ գնաց ի լերինն Մերտինայ՝ ի լեւոն Աշումայ⁴⁵, զոր այժմ յորջորջի Դարաճալ-տաղ:

Եւ եկաց յայն⁴⁶ լեւոն սուրբն Դանիէլ, և աղաթէր զցայգ և զցերեկ, և զարտասուն հեղոյր ի յաչացն անսպառ: Նայ և խիստ և ծանր և անտանելի կրօնիւք, վարուք և ճգնութեամբ կայր անհանգիստ և անդադար, վասն զի կարատիւ էր սրբոյն Մարուզէի ճգնաւորին: Եւ ի գիշերի միոյ հրամանաւն⁴⁶ Աստուծոյ երեւցաւ իրեշտակն ի կերպարանս սրբոյն Մարուզէի ի երազոյ քնոյ և ասէ ցտորքն⁴⁷ Դանիէլ. «Ահա-ւասիկ եմ, տէր»: Եւ ասէ դարձեալ իրեշտակն, որ կերպարանեալ էր ի կերպարանս սրբոյն Մարուզէի. «Մի՛ վախիր, որդեակ, և մի՛ զարհուրիր, զի Տէր ընդ քեզ: Եւ նոքայ, որ մարտընչեմ ընդ քեզ՝ դէք եմ և սատանայ, այլ ոչ ինչ առնել կարեմ քեզ, զի եմ տկարացեալ և անզարացեալ // իբրև զփոշի առաջի քոյ»: Եւ մինչ սուրբն Դանիէլ ի տեսեանն էր, զահի հարեալ յանկարծակի զարթեալ [ի]⁴⁸ քնոյ, և եկաց ի յաղաթս անդադար ծնորադրութեամբ, և զոհութիւն և փառս տալր Աստուծոյ:

Եւ հինկ ար ոչ ճաշակեաց ո՛չ հաց և ո՛չ ջուր և ո՛չ խտեղէն կերակուր, այլ երթայր և ջրջէր ի լերինն այն անսրբաւ և կերակրոց և ջրոց, և տեսանէր զաղբիւրս գեղեցիկս, որ յորդորէին ի գնացս իրեանց: Եւ ինքն պաւքեալ և ծարաւեալ էր, և նստաւ անդ սակաւ ինչ: Եւ դարձեալ եկաց յաղաթս, և լայր և զարտասուն հոսէր իբրև զշիթս անձրեաց, և ընդ մարմնոյ իւրոյ վիճէր և մաքառէր ասելով. «Ով մեղուցեալ մարմին իմ, մինչև լե՛րք բռնեմ զքեզ գեղեցիկ կերակրաւք և անուշահամ ջրով, և դարձեալ ևս կրկին կարատանաս»: Եւ զայս ասելով լայր և արտասուէր երանելին: Եւ յետ Ե (5) ատուրց ետես սուրբն Դանիէլ, զի հրեշտակք Աստուծոյ ի լերկնից իջանէին կերակուր և յրմակի: Եւ էր ի մի ձեռն իրեանց հաց, և ի մի ձեռն մեղրը, և ի միս ձեռն ջուր: Եւ բերէին առաջի սրբոյն Դանիէլի՝ լցեալ ոսկի ակամբ ամանաւ և ասէին. // «Ով երանելի ճգնաւոր, արի կե՛ր և ա՛րք, զի Աստուած ուղարկեաց քեզ: Եվ մի՛ հպարտանայր, զի արսւծամ խնդրէ սատանայ մարտնչել ընդ քեզ»: Եւ յորժամ ետես սուրբն Դանիէլ, որ ի ձեռն հրեշտակի առաքեաց իւր կերակուր, ելեալ եկաց յաղաթս և երկիր պագամէր Աստուծոյ և ասէր. «Ո Տէր, ողորմած և մարդասէր, ես ոչ եմ արժանի այդմ պատուոյ և մեծարանաց, զի զնեխեալ և զփղտեալ մարմին իմ ոչ գտանիմ մասն ինչ բարի, որ արժանացի այդմ քաղցրահամ կերակրոյ: Որովհետև որ առաքեալ ես առ անարժանութիւնս իմ, այսուհետև գոհացայց և փառաւորեցից զքեզ, Բրիստոս»: Եւ յետ գոհանալոյն նստեալ եկեր զկերակուրն, զի զայնպիսի քաղցր և բարեհամ կերակուր ոչ կայր⁴⁹ ի յաշխարհիս: Եւ ամենայն ատուր կերակրէր հրեշտակն Աստուծոյ ցտորքն:

Եւ յաւուր միում սուրբն Դանիէլ զի երթայր և կայր ի ճանապարհին, ետես զի ճգնաւոր մի քրքրազգեստ⁵⁰ դէպ եղև սրբոյն: Ետես և ստեպ ստեպ փախեաւ: Եւ սուրբն Դանիէլ զհետ նորայ վազեաց և զկնի ձայնէր և աղաղակէր ասելով. «Շա-

⁴² և:

⁴³ այնմ:

⁴⁴ աստումն:

⁴⁵ այն:

⁴⁶ հրաման:

⁴⁷ սքն:

⁴⁸ չիք:

⁴⁹ զայր:

⁵⁰ զրգուսագեստ:

152^ա ու/այ Յիսուսի Քրիստոսի, սակայն մի կա'ց և հանգի'ր, զի ես քան ինչ ունիմ հարցանելոյ քեզ: Եւ ճգնաւորն այն ոչ դադարէր ի փախչելու, եւ քան զես փախչէր և երթայր, և ոչ բնաւ հայէր յետս: Դարձեալ երդմամբ ասաց ճգնաւորն սուրբն Դանիէլ. «Եթէ Տէր Աստուածն մեր, որ խնամարկեցաւ յերկնից յերկիր և էաւ մարմին ի սուրբ կուսէն Մարիամայ, խաչեցաւ և թաղեցաւ և զայլ տնայրեւորսն կատարեաց, եթէ սիրես՝ սակայն մի կանգնեա'ց»: Եւ յորժամ կարդաց զՔրիստոսի անունն, լուաւ ճգնաւորն և դադարեաց ի տեղի: Եւ իբրեւ եկն սուրբն Դանիէլ, սկսաւ սուրբն ճգնաւորն տեւալ ստեւալ համբարել զսուրբն Դանիէլ և հոգով սրբով ասել այսպէս, եթէ «Տէր առաքեաց զիս առ քեզ, ով սուրբդ Աստուծոյ Դանիէլ, զի յետ երկից ատուրց փոխիցեմ յաշխարհէս, և ի վաղիսն թաղիցես զիս: Զի այս եւ (5) ամ է, որ ես հողածին չեմ տեսեալ, և այսար Տէր առաքեաց զիս առ քեզ, զի թաղեցես զիս»: Եւ իբրեւ զայս լուաւ սուրբն Դանիէլ, անալ ճգնաւորն և էնոյժ ի քայր այրն իւր մինչ արարտեցաւ // Գ (3) արն: Եւ յետ Գ (3) ատուրն հանգեաւ սուրբ ճգնաւորն առ Աստուած: Եւ յորժամ ևս եւս սուրբն Դանիէլ, զի հանգել էր սուրբ ճգնաւորն, եկաց յաղաթս մինչև լուսացաւ: Եւ ի վաղիսն եկեալ կատարեաց զկարգն և զթաղումն: Եւ ևս եւս սուրբն Դանիէլ, զի հրեշտակք ի յերկնից իջեալ իբրեւ արեւայի կերպարանաւ, և ի հետն իւրն ընկերելով կատարեին⁵¹ զկարգն թաղման ճգնաւորին մինչև որ թաղեցաւ: Եւ յետ թաղման սուրբ ճգնաւորին ետես կրկին սուրբն Դանիէլ, զի հրեշտակք արհմութեամբ և զոհութեամբ վերանային յերկինս: Եւ սուրբն Դանիէլ մեծաւ ուրախութեամբ և զոհութեամբ փառս ետ Աստուծոյ, որ այնպէս պատուէ և մեծարէ զսիրելիս իւր:

Եւ դարձեալ սուրբն Դանիէլ գնայր ի լեւոն Տակջոշայ: Եւ երևեցաւ նման սատանայ ի կերպարանս մեծ և անագին վիշապին, զազրալի և զարհուրելի դիմաւք, ի դեպ սրբոյն Դանիէլի: Բանայր զբերան իւր և կանգնէր ի վերայ ոտից իւրոց, որոտայր և կամէր կլանէր զսուրբն: Եւ սուրբն Դանիէլ իմացաւ, թէ սատանայ էր, և զօրութեամբն Քրիստոսի զարացաւ և կարողացաւ // և ասաց. «Ով զազրալի⁵² պիղծ և դժոխոց որդի, հրամանան և իշխանութեամբն աստուծային ե'լ ի ճանապարհէ իմէ»: Եւ վիշապն այն ձայնէր ասորոց քառի ընդ սրբոյն Դանիէլի և ասէր ասորի լեզուաւ. «Ով սուրբդ Աստուծոյ, եկիր կորուսանել զմեզ ի յայս երկրես և դատել քան զդատաստանն յառաջ, զի մայ զայոց է ի դատել զմեզ»: Եւ փախեաւ սատանայ յառաջ քան զսուրբն Դանիէլ մղոնաւ մի հետի: Եւ եղև սատանայ իբրեւ զմրրիկ հողմոյ, և ցնդեցաւ՝ մինչև ի յօթն մթացոյց զ'Դ (4) կողմն սրբոյն Դանիէլի: Եւ սուրբն ի մէջ մըթին ոչ գիտէր, թէ ո՞ր երթայցէ: Եւ Աստուածութիւնն հրաման յետ յառիծոյ միոյ, որ եկն առ սուրբն Դանիէլ: Եւ տեսեալ սուրբն Դանիէլ մօտ իւր զստիւծն կանգնեալ, խաչակնքեաց ի վերայ նորա և հեծեալ զնայ և զնաց: Եւ յառիծն հանեալ զնայ ի մըթէն, և զնաց ի յայն [լեւոն]⁵³, որ անուանի Տակջոշ: Եւ յայնմ տեղոյ հովիւք կային: Եւ տեսեալ հովուացն, որ սուրբն Դանիէլ հեծեալ էր առիւծն, զարմացան և զամի հարան և երկիւղ կալաւ զնոսայ: // Եւ ասէին միմեանց, թէ «Փառք Աստուծոյ, որ այսպէսի մշան և զքանչելիս անէ ի ձեռս հողալիցեաց: Եւ իջեալ սուրբն ի յառիծոյն և ասաց ընդ հովիւսն. «Բերե'ք զազանոյս այս կերակուր»: Եւ նոյն ժամայն անիւ և դողութեամբ քերին զառ մի և ձգցին ատաջի առիւծոյն, և կերաւ զգառն: Եւ յետ ուտելոյ գտին ասաց սուրբն Դանիէլ ցառիւծն. «Ել գնա'լ ի յօթնամն քո, ով առիւծ, զի Տէր արհմեսցէ զքեզ և տացէ զվարձս քո»: Եւ յայնժամ եկեալ առիւծին և զնաց:

Եւ սուրբն Դանիէլ եկեալ ի լեւոն Տակջոշեայ, որ առաջ դիւատուն էր, և մտաւ ի յայն տունն, յիշելով զամենայնսրբ երրորդութիւնն վասն յազանականութեան: Եւ յաղաթէր անհամադիստ զտիւ և զգիշէր անդադար աղմուսիւք և արհմութեամբ: Եւ իւր կերակուրն էր խտտելն քանճար և ըմպելին ի ջուր անձրևոյ, և իւր սկեստն էր քրքրազգեստ⁵⁴ պատառատուն, և այսով շատանայր երանելին ամենայն ժամ: Եւ ի յաղաթել սրբոյն զայգ և զցերեզ պատերազմէին և մարտնչէին դէքն երևմամբ և ասէին. // «Ով սուրբդ Աստուծոյ, ի յիրհայ լեռնէն եկեալ ես և եկեալ ես աստ: Զի այն էր քոյ բնակութիւն և աղաթատեղն, և մերն այս յերինս է վիճակ և բնակա-

⁵¹ կատարելով:

⁵² զազրալի:

⁵³ չիք:

⁵⁴ գրգռազգեստ:

տուն, զիստի կարևու խախտել զմեզ ի տեղիցես յայսմանէ: Եւ սուրբն Դանիէլ աստուեր ի վերայ դիտեցն և ասէր. «Գրեալ է ի գիրս աստուածային, թէ «Ահա, ետու ձեզ ի յիշխանութիւն շրջել ընդ ամենայն յերկիր և թշկել զազգս մարդկան և զդևս հալածել»^{17*}: Եւ դէքն կրկին և երեքին անգամ կերպի երևմամբ զային առ սուրբն Դանիէլ՝ պատերազմելով ընդ մմայ: Եւ սուրբն Դանիէլ ոչ դատարէր ի յաղաթելոյ և արիւնելոյ զԱստուած, այլ մանաւանդ քանին և հրամանաւ Աստուծոյ հալածէր զամենայն չար դևսն և սատանայ: Եւ համբաւ սքանչելեաց սրբոյն [եւ]⁵⁵ ընդ ոլորտս տիեզերաց: Եւ իմացան ամենեքեան սքանչելագործութիւն իւր, ի յերկիր շրջէին և որոնէին զսուրբն Դանիէլ, և զային առ մայ ի յՈւրհայու, ճանաչէին զսուրբն: Եւ այլ աղքատաց, որ⁵⁶ այլ բերէին՝ զկաղս և զկոյրս, հիւանդս և ցաւագարս, և յանուամբն

154բ // Աստուծոյ ողջացուցանէր զամենայն ցաւս:

Եւ յիմացեալ հայրն և մայրն սրբոյն, և տեսին զպատրաստութիւնս իւրեանց, և ելեալ ի ճանապարհին և ուղի անկեալ, եկին հասին առ սիրելի և մազելի որդին իւրեանց, ունելով ընդ ինքեան զՂազար որդին իւր և զկինն սրբոյն Դանիէլի: [...] ⁵⁷ և մայրն ընդ մմայ մտին առ սուրբն, և զիրկս արկեալ ի պարանոցի որդոյ⁵⁸ իւրեանց, լային և կոծէին և արտասուէին անմխիթար սգով և ասէին. «Ով որդեակ մեր, ով սիրելի մեր, ո ուրախութիւն մեր, ո ցնծութիւն մեր, ո մազելի մեր, ո ցանկալի մեր»: Եւ սուրբն արիւնէր զնոսայ և խրատ տայր և ասէր. «Կացցո՛ւք յաղաթս յամենայն ժամ և կեցցո՛ւք կոյսութեամբ և սուրբ մնացո՛ւք, զի ծառանգեցո՛ւք զերկնից արքայութիւն»: Եւ զայս իբրև սոսաց և սկսան արիւնի⁵⁹ ամենեքեան ի մմանէ և գնացին զճանապարհս իւրեանց, զարմանային և հիանային և փառս տային Աստուծոյ:

Եւ յաւուր միում ելեալ զեղականքն, որ հետի էր մղոն մի ի լոննէն, և եկին առ **155ա** սուրբն, և բերին կին մի ի գիշ/երին, և ձգեցին ի լուսատաճն առաջի և փախեան: Եւ կինն այն իբրև զանդամայլոծ էր: Եւ կացեալ կնոջ անդ ի գիշերին, և ի վաղիւն լուսացաւ, ետես սուրբն Դանիէլ զկինն, որ անկեալ էր ի տանն այնմ: Հարկացաւ սուրբն Դանիէլ և սաստեաց մմայ և ասաց. «Ով կին, ի՞նչ պատճառի համար անկեալ ես աստ, ել և զմա՛յ դու ի քո յօթևանքն, զի ոչ է աստ բնականութիւն քոյ»: Եւ ի ասել քանին սրբոյն, մոյն ժամայն ողջացաւ կինն և կանգնեցաւ ի վերայ ոտից իւրոց, և վաղվաղակի վազեալ զմաց ի տուն իւր ուրախութեամբ և ցնծութեամբ: Եւ ոչ դատարէր ի յարիւնելոյ և գովելոյ զԱստուած և զսուրբն Դանիէլ: Եւ զեղականքն իբրև հայեալ տեսանէին, որ կինն վաղվաղելով կու գայր ի վերայ ոտից իւրոց, զարմանային հետ միմեանց և ասէին. «Փառք արարչին Աստուծոյ, որ այսպիսի շնորհս և սքանչելիս առնէ ի ձեռս հողեղինաց»: Եւ սուրբն յաւր ըստ արեւ յաւելոյր ի ճշգնութիւնս և ի սրբութիւնս, այլ և պահաւք և ծոմաւք կայր մինչև ի քառասուն յարն, **155բ** ապա ճաշակէր: Եւ այսպէսի մեծ և անտանելի // ճգնութեամբ և կրանիւք կայր երանելին:

Իսկ առիւծքն սովեալ էին ի ճանապարհին միում, երթային և զային զազանքն ի ճանապարհն այն և ուտէին զգառինս և զմարդն և զանասուն, և հնարս ոչ գտանէին, թէ զինչ արասցեն մոցայ: Այլ ելեալ հովիւքն, եկին առ սուրբն և աղաղակէին և աղաչէին և լային և արտասուէին անկեալ առ ոտս սրբոյն և ասէին. «Ով սուրբ Աստուծոյ, ի սէրն Քրիստոսի ազատեալ զմեզ ի բերանոյ առիւծոցս այսոցիկ, զի ամենայն ժամ ուտեալ⁶⁰ են և սովորեալ են, զան առ մեզ և զգառինս մեր պատառեն, և վնասեն զմարդիք և զանասուն»: Իբրև լուսւ զայս սուրբն Դանիէլ, եթուք ի գետինն և արար թ' (9)⁶¹ գունտ կա՛ւ ամեն առիւծի Գ' (8) գունտ, և ետուր հովուացն: Եւ հովիւքն առեալ զկեսան գոհութեամբ ի սրբոյն, և գնացին ի տեղիս իւրեանց և էջսվանս: Եւ յորժամ սովորեալ առիւծքն եկին պատառել զգառինս, և իմացեալ հովուացն, արկին այն գնտերովն զառիւծն⁶², որ շինեալ էր սուրբն Դանիէլ, և իսկոյն

⁵⁵ չիք:

⁵⁶ ոչ:

⁵⁷ Հաւանաբար բաւեր են ընկել:

⁵⁸ որդոց:

⁵⁹ արիւնէլ:

⁶⁰ յուտեալ:

⁶¹ թ.թ:

⁶² զառիւծն:

156^ա պատահեցան առիծքն, // սատակեցան: Եւ հովիւքն տեսին զսքանչելիսն, զոր արար սուրբն Դանիէլ, գոմարինն և գիտոս ետուն Աստուծոյ: Մանաւանդ և հովիւքն եղեն կրօնաւորք և ճգնէին զցալս և զցեղէկ անդադար, և⁶³ փառս տալին Աստուծոյ:

Եւ այս ևս գիտելի է, զի յորժամ ծնողքն սրբոյն Դանիէլի, որ յամուսնացուցին զինքն, ճնշեաց ի հետ տիկնոջն ի մէջ գիշերի, որպէս և գրեալ էր ի սկիզբն քանիս. թէ հայրըն և մայրն կամայ և անկամայ ամուսնացուցին զսուրբն, և ի խնամոցն Աստուծոյ և ողորմութեանցն զարգացաւ և եղև ի յարկանդ կնոջն մանուկ: Եւ ի ժամ ծնընդեան մանկանն քազում ուրախութիւն եղև հարն և մարն սրբոյն Դանիէլի, զի տեսանելով յամենայն ժամ զմանուկն սակաւ ինչ միսիքարութիւն անցնէ վասն հարն՝ սրբոյն Դանիէլի: Եւ յետ քազում ժամանակաց, որ սուրբն Դանիէլ ի լերինս քազում սքանչելագործութիւնս արար, և մինչև ցայս վայր, հասնալ եղև որդին երկուտասան ամաց՝ մանուկն այն սրբասնունդ, որոյ անունն էր Դազար: Առաքեաց

156^բ սուրբն Դանիէլ զորդին հրամանաւն և քանին իւր ի ճգնութիւն // մատ վանից իւրոց՝ յուսուցանել զնայ աստուածային գրոցն և պատմութիւնսն: Եւ եղև ճգնաւոր ընտիր, առանել քան զամենեւեան, որպէս և Տէր Քրիստոս ի փրկական սուրբ անտարանցիս հրամայէ և ասէ, եթէ «Ամենայն ծառ [քարի՝ պտուղ]՝⁶⁴ քարի առնէ և ծառ չար՝ պտուղ չար առնէ, քանզի իւրաքանչիւր ծառ ի պտուղ իւրմէ ճանաչի»⁶⁵: Յայնպէս անտանելի ճգնութեամբ և կրանիւք և վարիւք⁶⁶ կայր որդին իւր, զապ և զցեղէկ ոչ դադարէր, մինչև հիացեալ ամենեցուն, և փառս տալին Աստուծոյ:

Յետ քազում ժամանակաց, որ եղև սուրբն Դանիէլ Խ.Ի. (44) ամաց, և ինքն կայր ի մուղար այրն⁶⁷, և անդադար աղաթէր որպէս ի սովորութեան իւրում, յանկարծակի անկաւ ի միտ մարն զկարատութիւն որդոյն՝ սրբոյն Դանիէլի և ասէր. «Մինչ դէր կենդանի եմ, երթեալ տեսանեմ զորդի իմ, զի խիստ և անչափ կարատեալ եմ զորդին իմ»: Եւ ելեալ ի ճանապարհ երթայր, և եկն եհաւ ի դուռն վանից:

157^ա Եւ սուրբն յաղաթս կայր ի տեղի իւրում // անդադար: Չայնեաց մայր առ որդին և ասէ. «Որդեակ իմ, որդեակ, իմ աշաց լոյս, սիրտ և լեարդ իմ, ես քո տեսուն եկեալ եմ: Յո՛յց ինձ զերեստ, որ տեսանեմ, զի ես խիստ կարատեալ եմ ի տեսութեանդ, միածին իմ, որ կարատիւ չմեռանիս»: Եւ պատասխանեալ ի ներքուստ սրբոյն Դանիէլի [....]⁶⁸ անտեսութեան մար իւրոյ, զի խիստ առանել լայր մայրն և արտասուրէր և աղաղակէր և աղաչէր զորդին և փարէր ընդ դրամբն, թէ՛ «Տեսանեմ զերեստ»: Եւ ողորմեցաւ սուրբն Դանիէլ և ասաց ի ներքուստ. «Քանի՞⁶⁹ լաւ, մայր իմ, քանի՞ աղաղակես, քանի՞ աղաչես, քանի՞ կոծես, քանի՞ արտասուես, զի արտասուս քո և աղաղակ խոցոտէ և վիրավորէ զիս: Վասն էր տեսանեմ դեքն և աստանայ, որ լաւ այնպէս, և կամին խափել զիս՝ սէր ծնողաց ձգելով ի վերայ իմ: Այլ ինձ հրաման ոչ գոյ տեսանել զքեզ, սիրելի մայրիկ իմ, զի Տէր Քրիստոս Աստուածն ամենայնի հրամայէ ի սուրբ անտարանն, եթէ «Որ սիրէ զհայր կամ զմայր, չէ իմ զնակերս»⁷⁰: Եւ թէ խիստ կարատեալ ես // տեսութեան իմոյ, զնա՛յ և հալա՛յ ընդ երեսս որդոյ իմոյ Դազարոյ»:

Եւ այսպէս քանիւք խաւսէր⁶⁸ ընդ մարն սուրբն Դանիէլ, և մայրն այլ խիստ ստաւել կրկնէր գրանսն, և լայր կոծէր զանձն, փետր զներս, կոփէր զգլուխն, տանջէր⁶⁹ զմարմինն, հարկանէր զծնատունն, և լայր անմիսիթար սգով, և արտասուսն հեղոյր ի յաշացն որպէս զաղբիւր: Եւ տեսեալ աշակերտացն սրբոյն Դանիէլի, որ այնպէս մաղկատեալ լայր, զլորեցաւ աղիս ճոցս, և լային ընդ մնայ, և զնացեալ առ սուրբն Դանիէլ և ասէմ. «Յոյց տուր զերեսս քո մարտ, զի անայ այնպէս աղէկիզեալ և կակծեալ⁷⁰ ի մէջ չարչարանաց մեռանի»: Եւ ասէ սուրբն Դանիէլ. «Գնացէ՛ք, որդիք, և տեսէ՛ք կրկին զմայրս իմ, միթէ պաքեալ և ծարաւեալ իցէ, և տո՛ւք մնայ կերակուր և ըմպելի, զի զովասցի: Եւ այլ պարտ չէ ձեզ խաւսել ընդ իս»: Յայնժամ լուսալ ծնողացն, զոր ինչ խաւսեցաւ որդին, զոչեաց իբրև զառիծ

63 ի:

64 չիք:

65 վերիւք:

66 Հաւանարար քաւեր են ընկել:

67 քանզի:

68 խաւսէ:

69 տնջէր:

70 կակծել:

և ասէ. «Ուկ որդեակ իմ Դանիէլ, մի՞թէ քաղցեալ և ծարաւեալ էի, որ վասն խնդիր կերակրոյ էի եկեալ: Այլ ինձ ոչ է // պետ կերակուր և ըմպելի, միայն զերեսս քո տեսնեմ, զի յոյժ նուաղեալ և պաքեալ եմ քո տեսութեան: Յո՛յց ինձ զերեսս քո, սիրելի և նազելի, ցանկալի և պատուական իմ, հրճուելի և ուրախութիւն: Յո՛յց ինձ զերեսս քո, վասն զի կու աչրիմ և տոչորիմ, որդեակ իմ: Վասն Աստուծոյ և հրեշտակաց և վասն այսչափ աղաղակելոյս մի՛ անտես առնէր զիս: Լինի թէ կարատի մետաքիմ ի քէն, և դու հոգաս վասն իմ»: Եւ զայս ասէր և զարտասուած հեղոյր ի յերկրի որպէս զառու: Եւ սուրբն Դանիէլ ի ներքուստ պատասխանեալ և⁷¹ ասէ. «Մի՛ լայր մայր իմ, մի՛ լայր ծնող իմ, մի՛ լայր սիրեցեալդ իմ: Հնար ոչ գոյ տեսանել զիս, զի ուխտեալ եմ ես յԱստուծոյ, թէ ամենկին ոչ տեսանեմ կին մարդ և ոչ հայել ինձ»:

Յայնժամ քարկացաւ մայրըն սրբոյն, անէծ զնալ ասելով. «Որպէս քո մարտ և ծնողիդ այսչափ ողբալոյն և կոծելոյն, լալոյն և արտասուելոյն ոչ ողորմեցար և ոչ գթացար, այլ ևս քան զևս զայրացուցեր զիս՝ զսրտակտուրս, և քարձեր ցաս ի վերայ խոցոյս իմոյ, զի ամենայն չարէ և յորդգայթէ պահեալ եմ զքեզ և ի ստեանց դիացուցեալ եմ զքեզ, մանաւանդ // ի հրոյ և ի ջրոյ և այլ ամենայնէ պահեր եմ զքեզ, ակն իմ ի Քրիստոս է և յոյս, որ փոխանակ անտեսութեան իմոյ, որ չի տեսի զքեզ, այնպէս տեսանեմ զքեզ ոչ թէ կին միայն, այլ և բոզք և պոռնիկք ի տեսութիւն զան քեզ և ասիցեն, թէ մարդասպան է: Զի սպանցեն այր մի և ձգեսցեն⁷² առաջի վանիցն և զարիւն նորա հոսեսցեն⁷³ ի դուռն վանիցն, որ ամենայն մարդիք լուեալ ասիցեն, թէ Դանիէլ մարդ է սպանէր: Եւ ելեալ գայցեն ի քո խառնակութիւն և յիշխանք քաղաքին: Զի որչափ չար մարդիք տեսանիցեն զքեզ, հազարք հազարաց, յաջմէ և ահեկէ, յետ և յառաջ լիցին քեզ նորալ համար, որ ցուց չետոր ինձ զերեսս՝ և քո ողորմելի ծնողիդ»: Այնպէս անէծ զնա և զնաց ի տունն իւր:

Վաղ և շուտ ժամանակի կատարեցաւ անէծք մարն, որպէս ասէ Իմաստունն Սողոմոն, թէ «Արհնութիւն հար շինեսցի տուն որոյ և անէծք մար քակեսցէ հիմանց»²¹: Եւ ի միտմ գիշերի ելեալ Բ (2) եղբայրք, միախաւս եղեն, թէ՛ «Սպա-
նանէնք մարդ մի և տանենք ձգել առաջի դրան Դանիէլի և // զարիւնն հոսել ի դուռն»: Եւ արարին այնպէս, որ սպանցին մարդ մի և տարին ձգեսցին առաջի դրան և զարիւնն հոսեսցին: Եւ այն լեառն էր՝ մօտ ի սրբոյն, քնակութիւն սպանողացն: Եւ կոչէին մարդասպանքն և ասէին, թէ Դանիէլ մարդասպան է: Եւ յորժամ լուսացաւ գիշերն, ետես սուրբ Դանիէլ, որ արտաքոյ դրանն մեռեալ մի կայր⁷⁴: Եւ իբրև ետես, զարմացաւ և զարհուրեցաւ և ապուշ մնաց և ի տրտմութեան կայր: Եւ աշակերտացն եկեալ տեսին զդին, ահ և երկիւղ կալաւ զնոսա, և դողութեամբ կային և ոչ գիտէին, թէ ով արար զայն: Եւ խորհէին ի միտս իրեանց և ասէին, թէ «Ո՞րպէս պատասխանի պիտի տամք մէնք, կայսրն թէ յիմանայ»: Եւ սուրբն Դանիէլ իմացաւ ի մտի իւրում, որ թէ անհծից մարն եղև աչս:

Իսկ իբրև որ լուսացին ամենեքեան այր և կին, ծերք և տղայք յԱմիթ քաղաքին, և իմացաւ իշխան քաղաքին՝ և առաքեաց զհնուորս ծիաւք քերել զսուրբն կապանաւք: Գնացին զհնուորքն⁷⁵ և գտին զսուրբն և կապեցին զձեռսն և բռնութեամբ քերէին չարչարանաւք: Եւ հազարք հազարաց կային ի յետոյս և առաջոյս, // յաջմէ և յահեզէ, և հրապարակաւ քերէին զսուրբն: Ոմանք ասէին, թէ մարդասպան է, և ոմանք ասէին, թէ ճգնաւոր է և չէ մարդասպան: Եւ այսպէս խաչտառակութեամբ քերէին զսուրբն, և սուրբն ոչ խաւեր, այլ գոհանալոյն զԱստուծոյ ոչ դադարէր: Ոչ վախճանար և ոչ հոգայր, ոչ ունէր երկիւղ և ոչ կասկած, այլ գոյն երեսացն իւր իբրև զվարդի նշման և արեգական և հրոյ՝ փայլէր և փայլատակէր: Եւ իբրև զգառն առաջի կտրիճի ամմոռուց կայր ի երթայր առաջի զհնուորացն: Եւ հայեցաւ սուրբն Դանիէլ, ետես զորդին իւր զՂազար և ծիծաղեցաւ: Եւ ասէ Ղազար որդին ցնայր իւր. «Հայր, ամենեքեան տրտմեալ եմ վասն քո և լան, և դու ընդէ՛ր ծիծաղիս»: Դարձեալ ասաց սուրբն Դանիէլ. «Ծիծաղեցայ և կրկին ծիծաղիմ, որ իմ ծերացեալ մարն

⁷¹ պատասխանելէ փխ պատասխանեալ և:

⁷² ձգեսցին:

⁷³ հոսեսցեն:

⁷⁴ կայր:

⁷⁵ զհնուորսն:

անէծքն զիս այսար խայտառակեայց ի հրապարակս այս, և անայ կատարեցաւ անէծք մար իմոյ»:

Եւ յայն ժամու զինուորացն առեալ զսուրբն երանելին Դանիէլ, բերէին ի հա-
 160^ա րաւային դռն յԱմթայ⁷⁶ քաղաքին, և մարդիք քազում ընդ յետոյ // և առաջոյ հա-
 զարք հազարաց: Յորժամ եկին հասին ի դռն քաղաքին, և սուրբն Դանիէլ աղաչէր
 զինուորացն, թէ՛ «Մի՛ այսպէս հրապարակութեամբ տանէք զիս ի մէջ քաղաքիս,
 այլ ծածկարար», և նոքա ոչ անսացին և լուան նմայ: Եւ ի յայնմ ժամու, լուեալ էին
 յառաջագոյն քաղաքացիքն, ելին ընդ յառաջ սրբոյն քան զԺՌ (10000) մարդ և
 այլ անելի ընդդէմ սրբոյն, զի տեսանցին, թէ որպէս կապանաւք կամ չարչարա-
 նաւք բերին զսուրբն, և տեսանցին: Եւ չար իշխան քաղաքին ել եկ ի սուրբ Աստ-
 ոածածին եկեղեցին, ետես զսուրբ Մարուգէ և խրոխտացաւ ի վերայ նորա, զի զի-
 տէր յառաջագոյն, որ երկոքեանն ի միասին շրջէին, և առաց նմայ. «Ել երթիցուք,
 զի աշակերտն քո, տե՛ս, թէ ինչ անարեւելութեամբ գործ գործեալ է»: Եւ էաւ սուրբն
 Մարուգէ, որ էր ընկեր սրբոյն Դանիէլի, և եկեալ գնաց զկնի նորա սուրբն Մարու-
 գէ, և զնացին ի հարաւային դռն քաղաքին, որ այժմ Մերութիւն-դուր կասին, և տե-
 սին զսուրբն Դանիէլ: Եւ չար իշխանն խրոխտացաւ սպառնալեալք ի վերայ սրբոյն
 160^բ Դանիէլի, և սուրբն մար^{22*} // Մարուգէ ասաց ընդ սրբոյն Դանիէլի. «Զի՞ արարել
 զայս ըսպանումս և զիս և զքեզ խայտառակեցեր ի մէջ քաղաքիս, ասա՛յ ինձ,
 ասա՛յ, վասն յէ՛ր արարել զայս»: Եւ սուրբն Դանիէլ ոչ տայր պատասխանի, այլ
 լռութեամբ ի յերկիր հազէր:

Եւ յետ այսր առեալ տարան առ դատարոն: Եւ զազանացեալ չար դատարոն,
 խրոխտայր և կրճտէր զատամունս ի վերայ սրբոյն Դանիէլի, զի չարաշար տանջե-
 ցէ զնա: Եւ սուրբն ասաց. «Ով դատարո, ընդէ՛ր խրոխտաս ի վերայ իմ և տան-
 քանս պատրաստես ինձ: Արդ հրամայեալ, զի բերիցեն զմեռեալն, զի եթէ Տէր կա-
 մեացի և աջողեցէ, նայ տացէ պատասխանի, թէ ով սպան զինքն»: Եւ իբրև լուս
 զայս դատարոն, յոյժ երկես ի խաւից սրբոյն: Յայնժամ հրամայեաց դատարոն,
 բերին զմեռեալն յատենի: Եւ ասաց սուրբն. «Տարէ՛ք առաջի ժողովրդեանն և դի՛ք
 ի մէջ նոցա»: Եւ տարեալ եղին ի մէջ ժողովրդեանն, և սուրբն Դանիէլ կանգնեցաւ
 յաղաթս առ Տէր Աստուած և ասաց ի խորոց արտ. «Ո Տէր յամենայնի, ողորմած
 161^ա և մարդասէր, զիտե՛մ զի ամենայն ժամ յետ ինձ, այլ ժողովրդ/եանս, որ շուրջ կան
 զինն [....]⁷⁷, զի տեսցեն և հաւատասցին, եթէ դու ես Աստուած մեր»: Եւ ասաց
 ընդ սրբոյն Մարուգէի. «Ով սուրբ հայր, ազնե՛այ ինձ ի յաղաթս քո»: Եւ դարձեալ
 եկաց յաղաթս սուրբ Դանիէլ առ Տէր և ասէ. «Ո Տէր իմ և Աստուած իմ, ո Տէր,
 գթա՛յ յիս և դարձո՛յ զհոգի տրայ ի մարմինն իւր»: Եւ զայս ասացեալ եղ մի ծունր
 ի գետնին, և իսկոյն հրամանան Աստուծոյ մեռելի գոյն փոխեցաւ և շարժեցաւ: Ի Բ
 (2) ծունր կրկնելն երակներն⁷⁸ ամենայն շարժեցան, և ի Գ (3) ծնորարդութիւն
 եմուտ հոգի ի մարմինն, և կենդանացաւ մեռեալն և յարեաւ: Եւ սուրբն Դանիէլ
 ձայնեաց ի մէջ յատենին և ասաց ընդ մեռեալն. «Յանուամբն Յիսուսի Քրիստոսի,
 ով մարդ, կա՛ց ի յոտից և տո՛ւր ինձ պատասխանի, թէ ո՞վ ըսպան զքեզ, զի անայ
 վասն քո չարչարանաւք կու տանջեն զիս»: Եւ յորժամ որ⁷⁹ լուս մեռեալն զձայնն
 սրբոյն Դանիէլի, վաղվադակի կանգնեցաւ ի յոտին, գոչեաց անագին ձայնի առաջի
 դատարոնին և ամենայն նախարարաց և ասէ. «Ո՛չ դայ է իմ սպանողն, այլ զիս
 161^բ Բ (2) եղբայրք սպանեցին, որ են ի գեղջէն Հեմայ»^{23*}: Եւ անկեալ // առաջի սրբ-
 րոյն Դանիէլի ոտիցն, և ասէ մեծաձայն բարբառով. «Ով սուրբ հայր, ամենեքեան
 զիտեն, որ դու չես իմ սպանողն: Ահայ մեռեալք և կենդանիք վկայեն վասն իմ, որ
 զիս Բ (2) եղբայրք սպանեցին, և դու անպարտ ես իմ յարեանն»:

Զայս որ խաւսեցաւ մեռեալն, ահ մեծ անկաւ ի վերայ յիշխանացն և դատա-
 ւորացն: Սարսէին ամենեքեան ահիւ և դողութեամբ վասն ըսքանչեւեացն սրբոյն
 Դանիէլի, և ամբոխն ամենայն զարհուրեալ, և փառս տային Աստուծոյ: Եւ դարձեալ
 հարցանէին մարդիք ընդ մեռեալն զաղտարար և ասէին, եթէ՛ «Դու զիս՞րդ տեսեր
 ի ժամանակ մահուան քո զերկինս, կամ ի դատաստանն և անջէջ հուրն դժոխցն, և

⁷⁶ համթայ:

⁷⁷ Հաւամարար բառեր են ընկել:

⁷⁸ երկարներն:

⁷⁹ ոչ:

- ազգի ազգի տանջանացն և անեղ ատենին և արքայութեան դըրախտին և Աղամայ և մարդկան հոգեղին:—Եւ դարձեալ.—Ո՛ր եմ յօթնամբն սրբոցն և ընտրելոցն, արդարոցն և մեղաւորացն: Եւ պատասխանեալ մեռելոցն⁸⁰ ասաց. «Եւ ոչ գիտեմ պատմել ձեզ եղբայրք, այլ գնացէ՛ք յեկեղեցին և յունկն արարէ՛ք աստուածային գրոցն և տեսէ՛ք զգիրս և զաւետարանն, զի // նոքայ պատմեցան ձեզ աստուածային գրոցն, արդարոցն և մեղաւորացն և դատաստանի աւուրն և այլ ամենայն բանիցն»: Եւ սուրբն Դանիէլ յորժամ ետես, որ քազում մարդիք կայր ի վերայ մեռելոյն, ձայնեաց առ կենդանի մեռեալն ասելով. «Ով մեռեալ, այսուհետեւ գնայ հանգի՛ր խաղաղութեամբ, զի կատարեցեր զհրամանս Աստուծոյ»: Եւ գնաց մեռեալն որպէս և ասաց սուրբն Դանիէլ, և հանգեաւ: Եւ ամենայն ժողովուրդքն տեսին զնշանն և զսքանչելիսն, զարմացան մեծաւ զարմանալեալք, և գոհութիւն և զփառս տային Աստուծոյ [վասն]՝⁸¹ սքանչելեացն սրբոյն Դանիէլի: Եւ յիշխանք քաղաքին մեծամեծք և դատաւորք, իբրև [տեսին]՝⁸² գեղեալ գիրս և սքանչելիս, ահ մեծ անկաւ ի վերայ իրեանց, և անկեալ առ ոտս սրբոյն Դանիէլի ամենեքեան, և ասէին. «Մեղաք, ով սուրբն Աստուծոյ, անգիտութեամբ, գործեցաք զչարիս և ոչ գիտեաք, այլ թողութիւն արա՛յ մեզ, և մի՛ անտես առներ զմեզ, զի յանարեւեցաք և յանցաւորք⁸³ գտաք առաջի քո»: Զայս ասելով համբուրէին զոտս սրբոյն ողբալով և աղաղակելով: Եւ յետ ողբ//ալոյն և աղաղակելոյն հիանային և գոհութիւն և զփառս տային Աստուծոյ, որ այնպէսի մեծամեծ սքանչելիս առնէ ի ձեռն սիրելեաց իրոց, ամէն:
- Եւ յետոյ, յիշխան քաղաքին ունէր դուստր մի դիւահար, և աղաչեաց զսուրբն Դանիէլ և ասաց. «Ով սուրբ և սիրելի Աստուծոյ, խնդրեմ և հայցեմ⁸⁴ ի քէն, զի բժշկեցես զդուստրն իմ»: Եւ սուրբն Դանիէլ հրամայեաց և հրաման յետ բերել զնայ: Եւ բերին զդուստրն առաջի նորա: Եւ սուրբն Դանիէլ եկաց յաղաթս և խաչակնքեաց ի վերայ դիւահարին և ասէ. «Անուամբն Աստուծոյ և զարութեամբ աստուածային և աշովն Յիսուսի Քրիստոսի, ով անիծեալ և չար դև, ե՛լ ի դատերես»: Եւ նոյն ժամայն, յոր խաչակնքեաց սուրբն, դողաց դուստր և ել ի նշմանէ դնն: Եւ որ տեսին և լուսն զսքանչելիս, հիացեալ փառս տային Աստուծոյ: Այլ և քաղաքացիքն ամենայն բերէին քազումս ի յախտածեալաց և պիսակոտաց, հիւանդաց և ցաւագարաց, և սուրբն Դանիէլ անուամբն Աստուծոյ դնէր զձեռս ի վերայ նոցայ և խաչակնքէր՝ առ ժամայն առողջանային ի նմանէ // և⁸⁵ փառս Յիսուսի Քրիստոսի տային:

Եւ յետ այսր ամենայնի կամեցաւ տէրն ելանել զնալ ի տեղիս իւրում: Եւ քաղաքացիքն ամենայն, յիշխանքն և դատաւորքն կամեցան սրբոյն զհետ երթալ և ճանապարհորդել զսուրբն Դանիէլ վասն գնալոյն: Եւ գնացին ընդ սրբոյն ի ճանապարհի Ե Ե (5) մղոնաւ հեռի ի քաղաքէն⁸⁶, և կրկին անգամ անկան յոտսն սրբոյն Դանիէլի և հայցէին թողութիւն անձանց իրեանց: Եւ յետ թողութեան⁸⁷ առնէին ի նմանէ արհմութիւն, և գոհութեամբ դառնային ի տունս իրեանց: Եւ ուր երթայր սուրբն Դանիէլ, ելանէին ընդդէմ սրբոյն և սիրով ընդունէին, և անկանէին առ ոտսն և առնէին արհմութիւն ի նմանէ, մինչև որ եհաս ի քարէ ալրին իւրում: Եւ դարձեալ եկաց յաղաթս ըստ սովորութեան իւրում, որպէս և առնէր յամենայն ժամ ի տեղի իւր:

- Յիմացեալ պատանեակն իւր Ղազար վասն զալտեան հարն իւրոյ, և ելեալ առեալ պղքնձէ կուծ մի չի ձիթով, և բերեալ ընդ իւր զամանան ձեթն, և եկեալ եհաս ի քար ալրն՝ մօտ ընդ հարն սրբոյն Դանիէլի: Եւ ողջունեաց զհայրն, և ուրախացաւ և եհարց զհարոյն // և զորպէսն իւր, և ապա աղաչեաց զհայրն իւր և խընդրեաց, ասելով. «Տէր, խաչակնքեա՛յ ի վերայ ձիթոյս այս, զի արհմեացի և լինիցի դեղ բժշկութեան ամենայն ցաւոց, որպէս զի ի քէն տարցեմ զայս դեղս և շրջիցիմ

⁸⁰ մեռելոցն:

⁸¹ չիք:

⁸² չիք:

⁸³ անցաւոր:

⁸⁴ հայցեմք:

⁸⁵ ի:

⁸⁶ քաղաքին:

⁸⁷ թողութիւն:

ընդ որոշում տեղեկացրեց, և եղիցի ամենայն որպիսութեան վերաց փարատումն, մա-
նաւանդ և ի թէն ազնականութիւն: Ծայնժամ հայրն խաչակնքեաց ի վերայ ձիոյն,
և առ ժամայն որդին Ղազար առեալ զձեռն արհմութեան ի հարկէն⁸⁸ սրբոյն Դա-
միէլէ, և սկսաւ գնալ ի յերկիրն Հոռմայ:

164 Եւ ի գնացն իւրում եհաւ ի ծովեզերն և էմուս ի նաւն: Եւ իսկոյն Բ (2) կն-
գանք ելին ի ծովէն և եկին առ նաւն և կամէին կրանել զմարդիք: Զի այս գազանքն
սովորեալ էին ի նաւն, և ամէն ար պատերազմէին նաւավարքն և մարդիք ընդ գա-
զանքն և ոչ կարէին սպանանել: Եւ սուրբն Ղազար էառ սակաւ մի իւղոյն ի մէջ
ձեռնին և ցանեաց ի վերայ գազանացն, կարդալով զանունն Աստուծոյ, և առ ծա-
մայն սատակեցան գազանքն և կային⁸⁹ ի վերայ // երեսու ծովոյն թաւալմամբ: Եւ
ամենեքեան տեսին զսքանչելիսն, զոր եղեալ, և հիացեալ զարմացմամբ⁹⁰, և փառք
տալին Աստուծոյ աննստ մարդասիրութեան, որ ի ձեռն սրբոյն Դամիէլի այսչափ
հրաշք և սքանչելիս կատարեաց և կատարեցին⁹¹:

Եւ յետ այսորիկ այն նաւն խոփեցաւ, որ Ղազար էր ի մէջ նորա և կամէ-
ալէկոծել: Գոչեաց նաւապետն ասելով. «Ով⁹² ի մէջի եղեալ սուրբոյ Ղազար, կա-
րո՞ղ է սուրբն Դամիէլ ազատել զայս նաւն ի կործանելոյ, տամ նմայ Զ (6) ոսկի,
զի խիստ խոփեալ է նաւն և կամի ընկղմել: Եւ դադարեցուցին զնաւն վասն խո-
փելոյն, զի ևս քան զկա սատակեցաւ նաւն ի խոփելոյն: Եւ ննջեցին⁹³ ամենեքեան
ի գիշերին այնմիկ ոչ թէ ի քնոյ, այլ ի քազում խոփութեանց նաւին, տխրեցան և
նեղացան և սակաւ ինչ միտեցին: Եւ ետես նաւապետն տեսիլ երազոյ, զի անայ
ըսպիտակասեցաւ և ծեր մարդ մի ի նմանութիւն սրբոյն Դամիէլի եկն եկաց առ
164 Զ Զ և ասէ. «Ով նաւապետ, զարթի՛ր ի քնոյ և ուղղեալ՝ զնաւն, զի գնացուք //
և ելցուք ի ցամաք»: Եւ նոյն ժամայն կանգնեցաւ և ուղղեցի⁹⁴ զնաւն, և ինքնին
գնաց նաւն ի ծովեզերն և ել ի ցամաք: Եւ ի մէջ երազոյ քնոյ զարթեալ նաւա-
վարն և ետես զնաւն ի ցամաք, որպէս և տեսեալ էր երազոյ, խաղաղեալ և կանգ-
նեալ: Եւ պատմեաց զերազն Ղազարոյ և այլոց: Եւ ասաց Ղազարն. «Նայ է իմ
հայրն, որ տեսեր ի յերազոյ»: Եւ ուրախացեալ և ցնծացեալ ամենեքեան ընդ նմայ
էին ի նաւն, արհմէին, զովէին և բարեբանէին Աստուծոն ամենայնի, որ այսպէս
հրաշագործութիւն արար ի ձեռն սրբոյն Դամիէլի:

Եւ յետ նորա եղեալ ի նաւ սուրբն Ղազար, և շրջեցաւ Բ (2) ամ ընդ ամե-
նայն երկիր և քազում սքանչելիս և հրաշ կատարէր աղաթիւք և խնդրուածովք
սրբոյն Դամիէլի: Եւ այնպէս շրջեցաւ մինչև որ էջ ի մեծն Հոռմ քաղաք: Եւ այլ
տեղիս և քանակութիւնն շրջեցաւ, և կատարեաց մեծամեծ նշան և սքանչելիսգործու-
թիւնս, և⁹⁵ փառս տալին Աստուծոյ: Եւ յետ Բ (2) ամաց լինելոյն դարձեալ եկաց
165 Եւ ի վանս իւր, և զինչ որ ժողովեալ էր և քերեալ ի հետ իւրն, այն ամենայն ետուր ի
// շինումն եկեղեցոյ: Շինեաց եկեղեցի և բարձրացոյց Կաթողիկէ: Եւ յայնմ գի-
շերին չար և անթիւնակ դեքն եկին և փուցին զեկեղեցին: Եւ իբրև լուսացաւ, եկեալ
սուրբն Ղազար տեսանել զեկեղեցին, և ետես զի փուցեալ էին դեքն չար: Եւ եղեալ
զնաց առ հայրն իւր՝ սուրբն Դամիէլ, և տեսեալ զհայրն իւր, աղիողորմ արտասու-
աւք⁹⁶ ելաց դառնապէս: Եւ իբրև ետես հայրն, որ այնպէս յայր որդին, զարեցաւ
աղիս հօրն և մաղկատէր և կսկծայր ի վերայ որդոյն ասելով. «Զի՞ է որդեակ իմ,
զի՞ է լաւ»: Ասէ ցնայ որդին. «Հայր, հայր, յայնմ գիշերի դեքն չար փուցին զե-
կեղեցին իմ, արդ աղաչեմ և խնդրիմ ի քեզ, զի պատուիրելով պատուիրեցես և
աստեղեցես նոցայ, զի շինեցես և հազաճեալ եղիցին»: Եւ նոյն ժամայն կանգնե-
ցաւ յաղաթս սուրբն Դամիէլ և աստեղաց դիւան և ասէ. «Փուցեալ էք զեկեղե-
ցին, նոյն գունակ և նոյն կերպիս այնպէս շինեցէ՛ք և հազաճեցարո՛ք յերկրես յայս-

⁸⁸ հարկն:

⁸⁹ գային:

⁹⁰ զարմացմամբ:

⁹¹ կատարեցին:

⁹² և:

⁹³ ննջեցին:

⁹⁴ Ըստ երևոյթիւն, այստեղ քնագիրն աղաւաղում է. քսպերի առաջին դէմքից պէտք է
ենթադրել, որ նաւապետը պատմում է իր երազը:

⁹⁵ ի:

⁹⁶ արտաստուաւք:

մանէ: Եւ լուեալ⁹⁷ դիւացն որպէս և պատուիրեաց սուրբն Դանիէլ, մմանապէս շինեցին // զեկեղեցիսն, և ոչ դարձուցին զհրամանս սրբոյն Դանիէլի, ալ և կորեան և հալածեցան յերկրէն յայնմանէ, որպէս և ասաց սուրբըն:

Եւ յետ այսքը⁹⁸ սուրբն Լազար շինեաց ամանդատուն մի և մեծացոց վասն հօր իւրոյ՝ փոխանակ սրբոյն Դանիէլի: Եւ յորժամ շինեաց սուրբն Լազար և ամարտեաց զամանդատունն, ազդմամբ սուրբ հոգոյն վասն⁹⁹ մահուան սրբոյն Դանիէլի՝ ի ձեռն հրեշտակին Աստուծոյ ի տեսեան երազոյ երևեցաւ սրբոյն Դանիէլի և ասէ. «Ով երանեալդ և երանելիդ սուրբ ճգնաւորդ Դանիէլ, զի այսչափ աշխատանացդ և չարչարանացդ, տքնավիշտք և անհանգիստ լինելոյդ, այսուհետեւ եկ և հանգի՛ր՝ յանգիստում ուրախութեան¹⁰⁰ և անտրտում ցնծութեանդ¹⁰¹, զոր պատրաստեալ է քեզ Աստուածութիւն և պսակ ոսկի ակամբ լուսեղէն և անդառամ, զարդարեալ ամենայն գոյիք յերկինս: Եւ փոխանակ ի տեղի քո եղիցի Լազար որդին քո և կացցէ¹⁰² ըսպասաւոր ի դուռն սուրբ եկեղեցոյս: Զի և յետ երից ատուրց փոխիցես յաշխարհէս և // մեռանիս: Եւ մինչ ի յերազոյ քնոյն կայր սուրբ Դանիէլ, զարդեաւ յանկարծակի ի տեսեմէն, զարհուրեցաւ և զարմացաւ ի տեսեան իւրում և իմացաւ, որ ճշմարիտ էր տեսիլն: Եւ էրաց զդուռն խցին և ձայնէր զաշակերտքն իւր և ասէր. «Ով որդեակք, ահա ես երազ տեսի, զի¹⁰³ յետ Գ (8) ատուրց մեռանիմ և փոխիմ¹⁰⁴ աշխարհէս: Եւ դուք որդեակք իմ, բարով և խաղաղութեամբ կացէ՛ք միաբան եղբայրքս հանդերձ, և Տէր եղիցի ընդ ձեզ: Պարկեշտ և բարի վարուք կացէ՛ք, սըրբութեամբ և կոյտութեամբ, պահաւք և աղաթիւք, առաքինութեամբ և արդարութեամբ, հեզութեամբ և խոնարհութեամբ, ամբծութեամբ և անարատութեամբ և որպիսութեան¹⁰⁵: Եւ Տէրն մեր Աստուածն ամենազնի որպէս զիս պահեաց և ազատեաց ամենայն չարէ և յորոգայթէ մինչև ցօրս այս ծերութեան, որ է վերջին, առանց խառնակութեան աղազաւ և իիւք մոյն և ինքն ողորմած և մարդասէրն Աստուած պահեցէ և կեցուցէ զձեզ խոր խաղաղութեամբ մինչև ի խորին ծերութիւնս: Եւ այսպէս թանհիւք խրատ տայր աշակերտացն, // և պատուիրեաց և կտակ արար մոցայ:

Իբրև որ լսեցին ամենեքեան աշակերտացն և ալլոցն, տրտմեցան և ի հոգ մըտին և յոյժ լային և արտասուէին ասելով. «Ո՛րպէս լինիմք առանց սուրբ հաւրն մերոյ: Եւ ալլ բազումս երգս և բանս ասէին, և ելեալ երթային¹⁰⁶ առ սուրբն և անկանէին առ ոտսն սրբոյն Դանիէլի, և առնէին զարհմութիւն ի մմանէ գեղականքն և քաղաքացիքն: Եւ յետ Գ (8) ատուրն կատարեցաւ սուրբն Դանիէլ, կանգնեցաւ յաղաթս ի խորոց սրտէ առ Տէր և ասէ. «Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, կատարեալ՝ զաղաթս և զաղաչանս և զխնդրուածս ծառայիս քո, և տո՛ր աշխարհիս զխաղաղութիւն, և բարձ գցասումն և զպատուհանս ի յարարածոց: Մանաւանդ շնորհեալ բժշկութիւն հիւանդութեան¹⁰⁷, ախտածեռեաց և պիսակոտաց՝ ցաւոց փարատումն և բժշկութիւն, կաղաց՝ ոտնազնացութիւն, կուրաց՝ լուսաւորութիւն, դիւաց՝ հալածումն, գերելոց՝ ազատութիւնս, բանտարկելոց՝ փրկութիւն, կապելոց՝ արձակումն: Եւ որ յիշեն զան/ում իմ և աղաչեն զքեզ, դու Տէր, ողորմեալ մոցայ և կատարեալ՝ զխնդրուածս իւրեանց, և շնորհեալ բժշկութիւն ամենայն ցաւոց հոգևորական և մարմնաւորական: Եւ յետ կատարման աղաթիցն, մեկնեաց¹⁰⁸ զբազուկսն իւր և տարածեաց զձեռսն և յաւանդեաց զհոգին իւր առ Աստուած երանեալն և երանելին սուրբն Դանիէլ յունիս ամսոյ Բ (2) արն կիրակի, և ի թուականիս յասորոց 2Ծ (750)^{24*}, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Եւ ժողովեցան ժողովորդք բազում և առաքեցին ի յԱմիթ մարդիք, զի բերել

⁹⁷ լուաւ:

⁹⁸ այրըս:

⁹⁹ վասն վասն:

¹⁰⁰ ուրախութիւն:

¹⁰¹ ցնծութիւնդ:

¹⁰² կաց:

¹⁰³ զի:

¹⁰⁴ փոխեմ:

¹⁰⁵ Բառն ըստ երևոյթին աղաւաղուած է:

¹⁰⁶ երթայ:

¹⁰⁷ հիւանդութիւն:

¹⁰⁸ մեկնեայ:

գեպիսկոպոսըն գտորք Մարուզէ, որ վարժապետն էր սրբոյն Դանիէլի: Եւ ել սուրբն Մարուզէ, միաբան ուխտն ընդ նմայ, և բազումք ի հաւատացելոց, և եկին անդ: Եւ Գ (8) ար գտի և զգիշեր կատարեցին զթաղումն, և եղին զմարմինն ի մէջ մարմար քարեայ կոտունի¹⁰⁹, Եւ սուրբն Մարուզէ հացեցաւ զաղտ ի մարմինն սրբոյն Դանիէլի, որ կայր մէջն երկաթէ գոտի մի, և քնեցն ընդ նմայ զարկեալ: Չի սպ երկաթն յայնմ ժամանակի ևր եղեալ յանձն, որ նոնալ էր ինքն ի քայր այրն և

167բ ապաշխարէր, զի այնմ ժամանակէ մինչև ցայս ար Խ (40) ամ է: // Եւ եղեալ էր մարմինն ի վերայ երկաթոյն, և ծածկեալ¹⁰⁹ էր զերկաթն, և քնեցն ծակեալ¹¹⁰ էր զմարմինն և հասեալ ի յոսկերսն, և արիւնքն լուանայր զմարմինն և ներկէր: Եւ աղնայն չարշարանաթ կրեալ էր ի յանձն իւր մինչև ցայսար ժամանակի: Եւ յետոյ առեալ զնայ որդին Ղազար, և պահեաց ի պահեստի: Եւ սուրբն Մարուզէ կատարեաց զտոն սրբոյն Դանիէլի և յուխտ եղ, որ է՝ ամէնն տարի այսարս զան երկրպագութիւն ի գերեզման սրբոյն Դանիէլի, որ այսար փոխեցաւ առ Աստուած՝ ունիսի ամսոյ ի Բ (2), որ ասորոց քառի իար¹⁶⁶ կոչի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ և սքանչելեացն, որ այսչափ համբերութիւն, զարութիւն և կարողութիւն տայ ծառայից իւրոց, ի փառս ամենասուրբ երրորդութեան իւր, որ է արմենալ յաւիտեանս, ամէն:

Այլ և այս գիտելի է, զի այս սրբոյն Դանիէլի պատմութիւնս կայր յառաջի քրիստոնէից մէջն, և յետոյ խանգարեցաւ և ասորոց մնացեալ էր այնպէս: Եւ եւ մեղուցեալս, անարժան գոյով Սարգիս յեալ/իսկոպոս, զի յառաջ արեղական աստիճանաւ էի և այժմ կոչեցայ եպիսկոպոս, որ և ասի պատճառս, և զի եւ այժմ սպասաւոր և տեղապահ և հոգևոր մշակ սրբոյն Դանիէլի, և ի վաղ ժամանակաւ լուեալ էի զպատմութիւն սորայ, և ոչ կարէի թարգմանել ի մեր բառս, մանաւանդ զի ոչ էի այնժամ տեղապահ և սպասաւոր, այլ սպասաւորէի քարծրահայեաց սուրբ Աստուածածինն: Եղին սպասաւոր¹¹¹ և տեղապահ սրբոյն Դանիէլի՝ հաւանութեամբ տօլվաթաւորացն և մանաւանդ աղաջնորդին՝ հոգևոր եղբայրն իմ տէր Յովհաննէս¹¹² աստուածաբան վարդապետին: Այսուհետև ցանկացայ թարգմանութեան բանիս, և բազում և յորմակի¹¹³ աշխատեցաք, երկս¹¹⁴ և ջանքս դնելով, և հազիւ կատարեցաք թարգմանել և ի յայտ ածել: Եւ յորժամ եղև աւարտումն բանիս, ի թրակամիս հայոց ԹՃ (1100)¹¹⁵ ամի, և սոյն ամի ազդեցութեամբ սուրբ հոգոյն եկն աստ հոգևոր տեսուն Փիլիպոս կաթողիկոսն տակս յերուսաղէմ զնազո¹¹⁶: Եւ իմացեալ տեսեալ զպատմութիւնս այս և յոյժ ուրախացաւ, // և զիս անարժանս պատուեաց և մեծարեաց վասն լուեալ համբաւոցն սրբոյն Դանիէլի, և ձեռնադրեաց զիս եպիսկոպոս, որ յօր էր ամսոյ յօգոստոսի ԻԵ (25), ամէն: Եւ դարձեալ և եւ Աստուծոյ զայս խնդրէմք, որ նոյն ինքն Աստուած՝ ողորմածն և մարդասերն, և իւր սրբոյն Դանիէլի բարեխաւութեամբն պարգևեցէ աշխարհիս շխաղաղութիւն, մանաւանդ ի մեր քաղաքիս յԱմթայ¹¹⁵ և իւր շրջակայ զաւառացն և գիւղորիցն, եկեղեցեաց, քահանայից և ժողովրդոց և առ հաւարակ ամենեցուն: Չի պայծառութիւն և ամենայն ինչ սրբոյն Դանիէլի ի ձեզանէ, և դուք¹¹⁶ էր մանկունք իւր և տէր և տիրակաւ: Չի նախնիքն ձեր և հարքն որպէս պահեալ և նախախնամեալ են, նրմանապէս և դուք սղ սղապէս առնիցիք, զի պահեցէ ամենայն չարէ զձեզ՝ երեւելաց և աներևութից, մինչև ի խորին ծերութիւն, և յետ աստեացս կանկնել զերկնից արքայութիւնն պարգևեցէ, ամէն¹¹⁷:

109 ծագեալ:

110 ծածկեալ:

111 սպասաւոր:

112 յովհաննէս:

113 յորակի:

114 երգս:

115 համթայ:

116 դուք:

117 Բնագրին անմիջաբար կցուած է գրչի հետեւեալ յիշատակարանը. «Ով բարեւերք և ընթերցողք և լսողք սուրբ գրոց պատմութեանս, երեսս անկեալ // աղաչեմ զձեզ, յիշեցէր Ա (1) հայր մեղաւով մի անարժան գրչոյս Սեբգիս դպիրն և զձեռնորն նորա՝ Տօնաւակն և Չրմոյթն, և որք ողորմիսն ասէր ամէն, Քրիստոս Աստուած զձեր սեղոյն չիշէ ի միս անգամ զալտեանն, յամէն» (Էջ 168բ—169ա):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹⁰ Հմմտ. Սաղմ. ԼԳ, 2:

²⁰ Ինչպես հայտնի է, Ամիդը (Դիարբեքիր) հայերի կողմից Տիգրանակերտին է մույնացվել ուշ միջնադարում: Պատմական Տիգրանակերտը եղել է Աղձնիքի նիսիներտ գավառում. տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հատ. 1, Երևան, 1971, էջ 578:

³⁰ Անշֆրին (հավանաբար՝ Ayn-Špyryn), գյուղ, որը գտնվել է, ըստ երևույթին, Ամիդի շրջակայքում:

⁴⁰ Մարուգե (Մար-Ավգին). ասորական Արևելքում ծավալված անապատական շարժման նշանավոր ներկայացուցիչներից մեկը (վարքը տե՛ս «Վարք և վկայաբանությունը սղորք», հատ. Բ, Վենետիկ, 1874, էջ 83—107): Ըստ ավանդության՝ Մարուգեն Դ. դ. սկզբում իր քաղաքով աշակերտների հետ Եգիպտոսից տեղափոխվել է հյուսիսային Միջագետք և այստեղ տարածել միայնակեցությունը: Ինչպես տեսնում ենք, Մարուգեի և Դանիելի գործունեության համատեղելիությունն անհնարին է ժամանակագրական տեսակետից: Թյուրիմացության հեղինակն անշուշտ հայ թարգմանիչն է. ասորական քնագրում Մարուգեի փոխարեն գործում է -մն Մարի (Mārī) ճգնակյաց. հմմտ. F. Nau, Hag'ographie..., p. 60.

⁵⁰ Բարսումա Սամոստացի (Մելիտինեցի). ասորի միացնակյաց (մահ. 458 թ.), որը կարևոր դեր է խաղացել անապատական շարժման մեջ: Նրա մասին մանրամասն տե՛ս A. Vööbus, History of Asceticism in the Syrian Orient, t. II, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“ 197, Subs. 17, Louvain, 1960, p. 196—208 նաև Հ. Անադյան, Հայկական մատենագիտություն, հատ. 2, Երևան, 1976, էջ 1437—1441:

⁶⁰ Հմմտ. Դուկ. ԺԴ, 12—18:

⁷⁰ Հմմտ. Սաղմ. ԾԽԴ, 19:

⁸⁰ Հմմտ. Դուկ. ԺԴ, 27:

⁹⁰ Տակոշ. Galaš լեռան աղավաղված անվանումն է. թարգմանիչը հավանաբար նրան է միացրել պատկանելությունը ցույց տվող d դերանունը, և d-Galaš կապակցությունը կարգացել որպես մեկ բառ: Այսպիսի թյուրիմացություններ հաճախ են պատահում ասորերենից կատարվող թարգմանություններում: Գալաշ լեռան տեղադրության մասին տե՛ս A. Vööbus History of Asceticism, II, p. 229.

¹⁰⁰ Երեք մանկունք՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով. հմմտ. Դանիել Գ:

¹¹⁰ Հմմտ. Սաղմ. ԼԳ, 22:

¹²⁰ Հեսմայ (Hesmi) լեռ Խաուս քաղաքի մոտակայքում. հմմտ. „Chronique de Michel le Syrien“, éd. J.-B. Chabot, t. I, Paris, 1899 (réimp. 1963), p. 34*.

¹³⁰ Հաստաուն մանկունք ի Սեբաստիայ, հաճախակված 320 թ. Լիկիանոս կապեր օրոք:

¹⁴⁰ Ըստ ավանդության՝ Նիկիայում (Ուռհա) Արքայ Ուրանա թագավորի օրերից պահվել է Բրիստոսի անձեռակերտ պատկերը՝ որոշմված դաստառակին:

¹⁵⁰ Հարավային քաղաք անելով հեղինակն ի մկատի ունի, ըստ երևույթին, Խաուսը, որը միջնադարյան Ասորիքում հայտնի էր որպես հեթանոսության կենտրոն:

¹⁶⁰ Աշում լեռ (Ašām գտնվում է Մարդինից արևմուտք. հմմտ. A. Vööbus, History of Asceticism, II, p. 229.

¹⁷⁰ Հմմտ. Մատթ. Ժ, 1, Դուկ. Թ, 1:

¹⁸⁰ Հմմտ. Մատթ. Է, 17, Դուկ. Զ, 44:

¹⁹⁰ Մուդար այրն. ըստ երևույթին հախապես եղել է մադարայն/մուդարայն (արարերեն՝ քարայր), որը գրչի ստուգաբանությամբ կապվել է հայերեն այդ բառի հետ և փաստորեն մույնիմաստ բառերի կրկնություն առաջ բերել:

²⁰⁰ Հմմտ. Մատթ. Ժ, 36:

²¹⁰ Հմմտ. Սիրաք Գ, 11:

²²⁰ Մար=ասոր. mar (տևր):

²³⁰ Հեսմայ, գյուղ Ամիդի կամ Մարդինի շրջակայքում. կապ չունի Հեսմայ լեռան հետ, հմմտ. ծանոթ. 12*:

²⁴⁰ Ասորոց (Սելևկյան) 750 թվականը=մ.թ. 489 թ.


²⁵⁰ Կոտուն—ավագան, տաշտ, այստեղ՝ գերեզման կամ դագաղ: Բառի հայերեն բուն ձևն է գունն (հմմտ. ասոր. ցոռն հուն. γούνα) տե՛ս Հ. Անադյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 597:

²⁶⁰ Խար, ասորական տարվա 8-րդ ամիսը, համապատասխանում է մայիսին:

²⁷⁰ Հայոց 1100 թվականը=մ.թ. 1851 թ.:

28* Փիլիպպոս Ա. Աղբակեցի, կաթողիկոս ամենայն Հայոց: Ըստ Մ. Օրմանյանի՝ Փիլիպպոս կաթողիկոսն իսկապես 1651 թվականին ցամաքային ճանապարհով ուղևորվել է Երուսաղեմ. տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, էջ 2455—2456: Ըստ երևույթին Սարգիսը Ամիդում պաշտոնավարել է ոչ ավելի քան մինչև 1659 թվականը, որովհետև այդ տարվա մեջ գրված մի հիշատակարանում որպես քաղաքի առաջնորդ հիշատակված է այլ անձնավորություն. «Այլ և ասարտեցաւ սա ի թուականութեանս հայոց ռմբ. ամին ի մայրաքաղաքս տիգրանակերտ, որ այժմ յամիս որջորջի, ի դուռն սուրբ սարգսի և որդւոյ նորա մարտիրոսի... յառաջնորդութեան մայրաքաղաքիս տր. ոմոփրիոս դիտապետին և աստուածաբան վարդապետին» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 10607, էջ 188ա):





ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—ԼԵՆԻՆԳՐԱԴ (ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ)

Ով իր կյանքում գոնե մեկ անգամ այցի է եկել Լենինգրադ, նա երբեք չի մոռանա այդ գեղանիստ, հիասքանչ քաղաքը, գիտության ու արվեստի օրրանը, իր հոյակապ շենքերով, բազմաթիվ ջրանցքներով, զով կղզիներով ու սպիտակ գիշերներով...

Կախարդական ու հմայիչ են Նևայի խաղաղ ափերը մթնշաղի լուսի ժամին, երբ իջնում է կամուրջների կամարին պաղ մշուշի կապույտ քողը իրիկվա...

* *

Պետրոս Առաջինը՝ ռուսաց պատմության խոշորագույն փայլուն գործիչներից մեկը, իր ստեղծարար մտքով ու երկաթե կամքով, նվիրված հայրենի երկրին, նպատակ դրեց դարձնել անսովոր իր լայնածավալ երկիրը, ապահովել նրա սահմանների պաշտպանությունը թշնամական ու ռազմադրություններից, միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծել Եվրոպայի հետ շփվելու, ավելի սերտ տնտեսական ու մշակութային կապեր հաստատելու համար:

1702 թվականի աշնանը ռուս բանակը գրավեց Նոտիքուրգ շվեդական բերդը, որը հետագայում վերակառուցվեց և վերանվանվեց Շլիսսելբուրգ (այժմ՝ «Պետրոսի ամրոցը»): Իսկ 1703 թվականի գարնանը ռուսներին հաջողվեց գրավել նաև Նիենշանց բերդը, և այս վայրերում նույն թվականի մայիսի 16-ին (նոր տոմարով՝ 27-ին) Նևայի ցրտաշունչ ափերին հիմնադրվեց

Պետերբուրգը: Դժվարին էր պայքարը հյուսիսային բնության արհաւիրքների դեմ՝ ճահիճներում, անասելի ծանր պայմաններում: Պետրոս Առաջինը կանգ չառավ անգամ անխուսափելի մարդկային զոհերի առջև, գիտակցելով քաղաքի նշանակությունը, ոչ միայն երկրի պաշտպանության, այլև նրա ապագա զարգացման ու բարգավաճման համար: «Պետերբուրգը, — գրել է Վիսարիոն Բելինսկին, — ունի Ռուսաստանի համար անձայրածիր, անսահման նշանակություն: Պետերբուրգը հանդիսանում է անհրաժեշտ, հավերժական երևույթ, վեհ, ամրակուտ կաղնի, որը կկենտրոնացնի իր մեջ Ռուսիայի բոլոր կենսական հյութերը»:

Պետերբուրգ-Լենինգրադը ունի իր արժանի տեղը հայ մշակույթի պատմության մեջ:

* *

Պետերբուրգը կառուցվեց արագ տեմպերով: Տարեցտարի ուժեղացավ նոր բնակիչների հոսանքը, որոնց թվում կային և՛ գերմանացիներ, և՛ շվեդներ, և՛ ֆիններ և ուրիշներ: Գալիս, բնակություն էին հաստատում տարբեր մասնագիտության մարդիկ՝ նկարիչներ, ճարտարապետներ, առևտրա-

¹ Մինչև 1914 թվականը քաղաքը կոչվել է Սանկտ Պետերբուրգ, 1914 թվականի օգոստոսից՝ Պետրոգրադ: Մինչև 1918 թվականի մարտ ամիսը եղել է երկրի մայրաքաղաքը: Սովետների երկրորդ համագումարի որոշման համաձայն 1924 թվականին վերանվանվել է Լենինգրադ:

կաններ, արհեստավորներ: Քաղաքի գոյության սկզբնական շրջանում Պետրոս Առաջինը հատուկ հրովարտականքով շնորհում էր արտոնություններ, խրախուսում արդյունաբերողներին, վաճառականներին, վարպետ արհեստավորներին, ինչպես նաև գիտության և արվեստի մարդկանց: Գալիս էին և հայեր: Ինչպես ասված է հին ռուսական Աշխարհագրական բառարանում (1807 թ.), «Պետերբուրգյան հայերը քանակով քիչ են, հիմնականում արհեստավորներ և առևտրականներ են»:



Պ Ա Վ Ե.

*Объ оплалении Арменскаго царства
отъ рода Арсакунианъ
или Арзациновъ: и объ оплаліи
Первосвященства отъ лелеянъ
Святаго Григорія просвятии-
а Арменіи*

Рыбаю о тебе Арменія! рыбаю о тебе избранныишая страна во всемъ Сѣверѣ! отъ атомъ отъ тебя Владыка, отъ атомъ свлщеникъ, отъ атомъ со-

Մովսես Խորենացու «Ողբ»-ի ռուսերեն թարգմանության առաջին էջը

Ե՛րբ է հիմնադրվել հայկական գաղութը Պետերբուրգում: Այդ մասին որոշ տեղեկություններ պահպանվել են Աքամելիք-Լազարյանների արխիվում: Այդ տեղեկությունների համաձայն 1710 թվականին, այսինքն Պետերբուրգի հիմնադրումից յոթ տարի անց, այնտեղ արդեն գոյություն են ունեցել «հայկական գործակալություններ», որոնցից կազմավորվել է հայկական գաղութը:

Պետերբուրգյան առաջին հայ բնակիչների թվում եղել են և Լազարյանների նախնիները: «Հայերը, — գրել է ռուս գրող և պատմիչ Սերգեյ Գլինկան, — արձագանքելով Պետրոս Մեծի կոչին, ամբողջ բնությանիբներով գաղթել, բնակություն են հաստատել Ռուսիայի սահմաններում: Նրանց

թվում էին նաև Մանուկ Լազարյանի նախնիները: Երբ նրանք ներգաղթեցին Ռուսաստան, Մոսկվայում և Նևայի ափերին սահմանագծվեցին հայկական հողամասեր»:

Պետերբուրգի առաջին հայ բնակիչները եղել են առևտրականներ ու արդյունաբերողներ: Եղել են նաև ուրիշ մասնագիտության տեր հայ մարդիկ: Այսպես, օրինակ, 1710 թվականին Պոսոլսկի պրիկազում (պետական մարմին, որը այն ժամանակ զբաղվում էր երկրի արտաքին գործերով) որպես թարգմանիչ աշխատել է ազգությամբ հայ Աֆանասի Պանկրատովը:

Ռուսական պաշտոնական փաստաթղթերում հաճախ այլազգի, մանավանդ ցածր խավերին պատկանող հասարակ մարդկանց անունները և ազգանունները գրանցվում էին ռուսական ձևով:

1741 թվականի սեպտեմբերին Պետերբուրգ ժամանեց Նադիր շահի պատվիրակությունը հարուստ պարզանքներով, որոնց թվում՝ 14 փիղ, նվեր ռուսական արքունիքին: Փղերին ուղեկցողներից երկուսը եղել են հայ՝ Իվանով և Կոնստանտինով:

Պետերբուրգյան առաջին հայ բնակիչներից է Լուկա Ծիրվանովը, որը բնակություն է հաստատել Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում, հավանաբար 1720—1730-ական թվականներին: Նա եղել է գրագետ, բացի մայրենի լեզվից տիրապետել է այլ լեզուների (պարսկերեն, ռուսերեն): Պետերբուրգում Ծիրվանովը ծավալել է բուռն գործունեություն, ոչ միայն որպես առևտրական, այլև խոշոր արդյունաբերող: Կառուցել է մետաքսյա ու բամբակյա գործվածքների և առևտրական նավերի գործարաններ: Նրան պաշտոնական գրություններում անվանել են «Սանկտպետերբուրգյան հալ»: Ծիրվանովը Վասիլևսկի կղզու (հնագույն քաղաքամասը), «Երրորդ գծի և Փոքր պողոտայի անկյունում» ունեցել է սեփական քարաշեն տուն:

Հայկական գաղութի գոյության սկզբնական շրջանում քահանաներ գալիս էին Մոսկվայից կարճ ժամանակով: 1730 թվականին հայ բնակիչների թիվը այնքան է աճել (այդ ժամանակ Պետերբուրգում եղել է անգամ «Հայկական փողոց»), որ կարիք է զգացվել ունենալ մշտական քահանա: Պետերբուրգի առաջին հայ քահանան եղել է Իվան Ծերիստանովը (մահացել է 1787 թվականին):

1761 թվականին գերմանացի գիտնական-պատմաբան Ալգուստ Լյուդվիգ Ծլոցերը, բնութագրելով Պետերբուրգի խայտաբղետ բնակչության կազմը, հիշատակում է և հայերին, որոնք այն ժամանակ թվով շատ չեն եղել, սակայն, հավանաբար, աչքի են ըն-

կել իրենց արտաքինով, գուցե և հագուստով:

* *

Կազանի պաշտոնական «Կազանկիյե իզվեստիյա» թերթը 1813 թվականին, որպես ուշագրավ երևույթ հայ ժողովրդի կյանքում, նշել է նրա հավատարմությունը ազգային ավանդությունների նկատմամբ. «Ուլքե՛ր են ամենից շատ թափառում՝ հայերը: Ուլքե՛ր են ամենից քիչ փոխվում՝ նույնպես հայերը... Ծնշված իրենց երկրում, վտարված ու ցրված, հայերը չեն մոռանում իրենց մայրենի լեզուն: Ապրելով այդքան ժամանակ բազմաթանկ օտար ժողովուրդների մեջ, հաստատական հայերը պահպանում են իրենց նախնիների սովորույթները»:

Մեկ ուրիշ ուշագրավ երևույթ ևս, երբ դիմում ենք հայ գաղութների պատմությանը: Աշխարհով մեկ ցրված հայերը, ուր էլ որ բնակություն հաստատեն, միշտ աշխատել են իրագործել գաղութի գոյության երկու նախապայմանները: Առաջինը՝ տպարան հիմնադրել, գրքեր, թերթեր հրատարակել, և երկրորդը՝ եկեղեցի կառուցել: Այդ տեսակետից Պետերբուրգի գաղութը բացառություն չի ներկայացնում:

Դեռ 1714 թվականին Իսրայել Օրիի գործակից Միհաս վարդապետը իր գրության մեջ, հասցեագրված փոխկանցելու բարոն Շաֆիրովին, խնդրել է «թույլ տալ կառուցել Պետերբուրգում հայկական եկեղեցի»։ Մի երկու տասնյակ տարի անց նույն հարցով դիմել է քաղաքի մարմիններին Լուկա Ծիրվանովը: Նրան 1740 թվականին թույլատրվել է կառուցել եկեղեցի սեփական տան հողամասում: Վերջապես, 1770 թվականի մայիսին, ընդառաջելով Հովհաննես Լազարյանի և մի խումբ հայ բնակիչների խնդրանքին, Եկատերինա Երկրորդի հրամանագրի համաձայն տեղ է հատկացվում Նևսկի պողոտայի վրա հայկական եկեղեցի կառուցելու համար: Ծիմարարությունը ըսկրպել է 1771-ին, ավարտվել 1780 թվականին: Պետերբուրգի հայոց եկեղեցին օժել է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը²:

Հայկական եկեղեցու նախագծի հեղինակն է հայտնի ռուս ճարտարապետ Յուրի Ֆելչտինը: Նրա նախագծերով են կառուցվել նաև Էրմիտաժի հին շենքը, Նևսկի գրանիտե գետափնյաները, ամառային այգու նշանավոր ցանկապատը:

Հայկական եկեղեցու շենքը միազմբեղ,

ոչ այնքան մեծ մի եկեղեցի է, դասվում է ռուսական վաղ շրջանի դասական ճարտարապետական փայլուն հուշարձանների շարքին և պահպանվում՝ պետության կողմից:

Գլխավոր մուտքը նշված է սյունասրահով, որը ավարտված է եռանկյունի ֆրոնտոնով (վերնաճակատ): Մուտքի դռների մետաղյա ցանկապատի փեղկերը պատրաստված են 1906 թվականին, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի գծագրությամբ: Նա է վերանորոգել և եկեղեցու շենքը:

* *

Պետերբուրգի հայկական գաղութը, այլ գաղութների (Մոսկվայի, Ղրիմի, Աստրախանի) համեմատ, չի եղել բազմամարդ: XVIII դարի վերջերին հայ բնակիչների թիվը աճել է գլխավորապես ի հաշիվ գինավորականների և պետական պաշտոնյաների: Դարաշրջանի կարևոր իրադարձությունները՝ ռուս-թուրքական պատերազմը, ռուսական զորքերի մուտքը Վրաստան, աճող հետաքրքրությունը Պետերբուրգի կառավարական շրջաններում Կովկասի նկատմամբ, — այս բոլորը չէր կարող չանդրադառնալ նաև հայերի ճակատագրի վրա: Եկատերինա Երկրորդը, շարունակելով Պետրոս Առաջինի քաղաքական գիծը, ծրագրում էր վերականգնել հայոց պետությունը, որը Վրաստանի հետ միասին պիտի պատնեջ հանդիսանար Ռուսաստանի հարավային սահմաններին:

Այդ բոլոր իրադարձությունների տարիներին Պետերբուրգի հայ գաղութի ականավոր ու գործունե անդամն էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը (Երկայնաբազուկ): Արտակարգ ընդունակությունների տեր, նա իր ժամանակի զարգացած ու կրթված անձնավորություններից էր: Նա վարպետորեն տիրապետում էր ռուսաց լեզվին, մի հանգամանք, որը նպաստում էր նրա ժողովրդականությանը և հեղինակությանը ռուս կառավարական շրջաններում: 1780-ական թվականներին Արղությանը եղել է Պետերբուրգում ոչ միայն որպես հոգևոր (Ռուսաստանի սահմաններում ապրող հայերի առաջնորդ), այլև որպես քաղաքական գործիչ: Նրա եռուն գործունեությունը սկսվում է 1782 թվականից, երբ նա մասնակցում է Վրաստանի՝ Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու համար վարվող բանակցություններին: Նրա դերը մեծ է եղել Եկատերինա Երկրորդի գահակալության տարիներին, երբ ռուս կառավարական շրջանակներում մշակվում էին

² Հայկական գերեզմանատան համար տեղ է հատկացվել Վասիլյան կղզու վրա 1791 թվականի փետրվարին, Սենատի հրամանագրի համաձայն:

հայոց պետության վերականգնման ծրագրերը: 1787 թվականին Արդյությանը ռուս գործերի հետ եղել է Թուրքիայում: Նա մասնակցել է նաև 1796 թվականի պարսկական արշավանքին: 1800 թվականին Արդյությանը ընտրվում է Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս:

Ռուսական կառավարության ջանքերը, հայոց պետականությունը վերականգնելու ուղղությամբ, չպակվեցին հաջողությամբ: Սակայն, ինչպես գրում է ակադեմիկոս Արգաթ Հովհաննիսյանը իր «Ռուսաստանը և XVIII դարի 80-ական թվականների հայ ազատագրական շարժումները» ուսումնասիրության (Երևան, 1947) մեջ, «Հայկական պետության ստեղծման երազը Ռուսաստանի հովանավորության ներքո չանհետացավ և հույների խորտակումից հետո... Այն շարունակեց մնալ որպես քաղաքական իդեալ բոլոր ականավոր հայ գործիչների համար և մոտակա տասնամյակների ընթացքում»:

* *

XVIII դարի 80-ական թվականների քաղաքական կյանքի մթնոլորտը Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում բարենդրյալատ պայմաններ ստեղծեց հայ-ռուսական մշակութային կապերի հետագա զարգացման համար:

Պետերբուրգում ապրող հայ առևտրականների ու արդյունաբերողների մեջ պատահում էին համեմատաբար կրթված, զարգացած, հայրենասեր մարդիկ: Նրանց թվում էր Գրիգոր Խաղարյանը, առաջին հայ-ռուսական քառարանի հեղինակը: Նա, երկար տարիներ զբաղվելով առևտրով գանգաճ երկրներում, կուտակում է հարստություն, Հոլանդիայում պատվիրում հայկական տատեր, գալիս Պետերբուրգ և այնտեղ, Հովսեփ արքեպիսկոպոս Արդյությանի աջակցությամբ, 1783 թվականին հիմնադրում հայկական տպարան:

Դարավերջում հայերի շրջանում ուժեղացավ հետաքրքրությունը ռուսաց լեզվի նկատմամբ: Պահանջ զգացվեց հատուկ ձեռնարկների: Այդ նպատակին ծառայեց շուրջ 2500 քառ պարունակող Խաղարյանի հայ-ռուսական քառարանը: Բառարանի վերջում գեղեցկված է Ներսես Օնորհալու «Հասարակ խոստովանք» աղոթքը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Խաղարյանի ջանքերով ձեռնարկվեց նաև V դարի հայ նշանավոր պատմիչ Եղիշեի «Վարդանանց պատերազմի պատմության» նոր հրատարակությունը՝ քաջն Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ երեցի պատկերներով: Գիրքը լույս է տեսել 1788 թվականին, Խաղարյանի մահից հետո:

Առաջին հայ-ռուսերեն քառարանից հետո Պետերբուրգի տպարանը հրատարակեց նույն 1788 թվականին Կլեոպատրա Սարաֆովայի «Գիրք, որ կոչվում է Խնացութեան քանալի, այքքենարան, քառարան և որոշ բարոյախոսական կանոններ» ձեռնարկը: Գրքի առաջին մասում ներկայացված են ռուսերեն և հայերեն տառերը, նրանց փոխադարձ համապատասխանությունը: Հետո քառարանն է, ընտրովի հայերեն բառեր և նախադասություններ ռուսերեն տառերով, և ռուսերեն բառեր ու նախադասություններ՝ հայերեն տառերով:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բարոյախոսական կանոնների բավականին ընդարձակ բաժինը: Նրա բովանդակության և ընդհանուր բնույթի մասին որոշ գաղափար ընթերցողին տալու համար սահմանափակվենք մի քանի բնորոշ օրինակներով:

«Բարի գործերը իրենք իրենց են հատուցում քերում:

Որ հասակում որ լինես, հարգիր ծնողներին:

Բերելով օգուտ մերձավորիդ, ինքդ քեզ ես օգուտ քերում: Հարց՝ ո՞վ է մերձավորը: Պատասխան՝ ամեն մարդ:

«Ազնվությունը անգնահատելի գանձ է»:

«Խիղճը ներքին լույսն է, ինքնամոխի, որը լուսավորում է իրեն՝ մարդուն և խոսում նրա հետ խաղաղ, անհնչյուն ձայնով, քընքընեմ ազդելով հոգու վրա, զարթեցնում է նրան, հետևելով մարդուն ամենուր, երբեք չի խնայում նրան»:

«Բոլոր քաղաքացիները հավասարապես պետք է ենթակա լինեն նույն օրենքներին:

Ամեն գործում պետք է լսել երկու կողմն էլ:

Թող յուրաքանչյուրը պաշտպանի իր ճշմարտությունը»:

«Մարդու առաջնագույն պարտականությունը հայրենիքին ծառայելն է: Միթե՞ դուք չեք ցավիլ վշտանալ, երբ ոչ մի բանով չեք կարող օգուտակար լինել հայրենիքին»:

Սարաֆովայի գրքի այս բաժինը իր բովանդակությամբ վկայում է, որ հեղինակին խորթ չեն եղել դարի լուսավորական գաղափարները և ջերմ հայրենասիրությունը:

Ո՞վ է Կլեոպատրա Սարաֆովան, որին պատմաբան Լեոն անվանել է «Արևելահայ առաջին կին գրողը»: Դժբախտաբար ճշգրիտ տվյալներ չկան: Ենթադրաբար միայն կարելի է ասել, որ նա ծնվել է մոտավորապես 1755—1760 թվականներին: Գուցե և նա դուստրն է Մովսես Սարաֆովի, որի մասին մանրամասն տեղեկություններ կան ակադեմիկոս Արգաթ Հովհաննիսյանի



ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՆՔԸ
(վ. Ս. Սադովնիկովի վիմագրությունից, 1890—1895)

«Հովսեփի Էմին» մեմագրության (Երևան, 1945) մեջ:

Բացակայում են կենսագրական տեղեկություններ XVIII դարի պետերբուրգյան մեկ ուրիշ ակադեմիկոս Բայ Ռեդինսկի՝ Վառլամ Վազանովի մասին ևս: Ո՞վ էր այդ համեստ մարդը, որը մեծ եռանդով ու վառ հայրենասիրությամբ նպատակ էր դրել ծանոթացնել ռուս հասարակությանը Հայաստանի հետավոր անցյալին: Տպագիր աղբյուրներում նրա անունը հիշատակվում է իբրև Հայաստանին նվիրված գրքերի առաջին ռուսերեն թարգմանությունների հեղինակի: Ակադեմիկոս Արզար Հովհաննիսյանի «Ռուսաստանը և XVIII դարի 80-ական թվականների հայ ազատագրական շարժումները» ուսումնասիրության մեջ հրապարակված փաստաթղթերից պարզվում է, որ 1784 թվականին Վազանովը եղել է ռուսական հեծյալ գեղում: Նրա անունը, որևէ թարգմանչի, հիշատակվում է նաև հայ մեկնաբանի պաշտոնական գրություններում:

Վազանովը բնակություն է հաստատել Պետերբուրգում, հավանաբար 1780-ական թվականների սկզբներին: Նրա՝ 27 էջից բաղկացած գրքուկը՝ «Ողբ Հայաստանի մասին» (տպագրված 1786 թվականին Պետերբուրգում), Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հանրածանոթ «Ողբ»-ի առաջին ռուսերեն թարգմանությունն է:

Վազանովը սերտորեն կապված է եղել Հովհաննես Լազարյանի և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ, վաշելել նրանց հովանավորությունը: Նրանց օժանդակությամբ նա թարգմանեց ռուսերեն և հրատարակեց Պետերբուրգում 1786 թվականին հեղինակ գաղութի ակադեմիկոս գործիչ Ծահամիր Ծահամիրյանի «Հայոց պատմությունը»:

Իր թարգմանությունը Վազանովը ձոնել է եկատերինյան Ռուսաստանի ամենաակադեմիկոս ու ազդեցիկ գործիչներից մեկին՝ Գ. Ա. Պոտոմկին-Տավրիշեկուն: Գիրքը բացվում է վեցսողանոց մի բանաստեղծական ուղերձով, ուր թարգմանիչը արտահայտում է այն միտքը, որ հայ ժողովուրդը իր պայծառ հույսերը ապագայի նկատմամբ կապել է Ռուսաստանի հետ, որ Ռուսաստանից է նա սպասում օգնություն: Պատահական չէ, որ Վազանովի երկու թարգմանություններն էլ լույս են տեսել այն տարիներին, երբ Պետերբուրգում մույն իշխան Պոտոմկինի անմիջական մասնակցությամբ մշակվում էին հայոց պետականության վերականգնման ծրագրերը:

Թարգմանական աշխատանքներում Վազանովին օգնել են Մակար Բոգդանովիչ Մանիչարը և «Արարատյան դեսպան» Ստե-

փան Պոպովը, որի միջոցով Ամենայն Հայոց կաթողիկոսը կապ է պահպանել պաշտոնապես Պետերբուրգի հետ, փաստաթղթերում ստորագրել է՝ «Հայոց տարկավագ Ստեփան Սահակի որդի Պոպով»: Ժամանակ առ ժամանակ նա եղել է Պետերբուրգում, կաթողիկոսի հանձնարարությունները կատարելիս:

Ուշադրության արժանի է Վազանովի երկրորդ օգնականը՝ Մակար Բոգդանովիչ Մանիչարը (Մարգար Աստվածատուրի Մանուչարյանը): Նրա նախնիները Երևանից են, գաղթել են Պարսկաստան, տեղափոխվել այնտեղից Ռուսաստան: Սկզբում ապրել են Աստրախանում, հետո Մարգար Մանուչարյանը իր երեք եղբայրների հետ միասին բնակություն է հաստատել Պետերբուրգում, ուր «Մոսկովյան» թաղամասում հիմնել է մետաքսյա գուլպաների և ձեռնոցների գործարան: Մարգար Մանուչարյանը Պետերբուրգի հայ գաղութի ակադեմիկոս գործիչներից է, որի մասնակցությունը մշակութային կյանքում չի սահմանափակվել խոշոր դրամական նվիրատվություններով: Նա օժանդակել է Խաչատրյանին՝ տպարանի հիմնադրման գործում, օգնել Վազանովին՝ նրա թարգմանական աշխատանքներում: Ի վերջո նա է եղել Աստրախանի հայկական դպրոցի նախաձեռնողը: Նրա խնդրանքով 1782 թվականին Գիտությունների Պետերբուրգյան ակադեմիայում մշակվել է հայկական դպրոցի ուսումնական ծրագրերի նախագիծը, որը կազմել է ակադեմիայի քարտուղար Ցակով Ծտելինը:

Պետերբուրգի հայ գաղութի մշակութային գործիչներից է և Մակար Խոճենցը (Մարգար Ջաքարի Գեղամյանը), որը, բացի ռուսերենից, տիրապետել է մի շարք այլ օտար լեզուների (ֆրանսերեն, իտալերեն, առաբերեն, պարսկերեն, թուրքերեն): Նա եղել է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մոտիկ գործակիցներից: Խոճենցը 1794 թվականին թարգմանել և հրատարակել է Պետերբուրգում Ֆենելոնի «Տելեմակի արկածները» բարոյախոսական վեպը: Նա թարգմանել է նաև XVI դարի աղբյուրագրական բանաստեղծ Ֆիզուլու «Վարդն ու սոխակը» արևելյան վիպակը, ապա թարգմանել է այն նաև ֆրանսերեն և իտալերեն: Խոճենցը 1817 թվականին մասնակցում է Պետերբուրգի Ս. Գրոց Ընկերության Աստվածաշնչի հայերեն թարգմանության աշխատանքներին:

Հարություն Արարատյանը ևս պատկանում է Պետերբուրգի հայ գաղութի աչքի ընկնող գործիչների թվին, որի գիրքը՝ «Հարություն Արարատյանի կյանքը», լույս է տեսել Պետերբուրգում 1813 թվականին:

Այդ գրքի հիման վրա ռուս ընթերցողը կարող էր որոշ պատկերացում կազմել Հայաստանի ներքին կյանքի, ինչպես նաև XVIII դարի վերջին տասնամյակի անդրկովկասյան կարևոր իրադարձությունների մասին: Թե՛ հեղինակը իր արտակարգ ճակատագրով և թե՛ նրա գիրքը արժանի են հատուկ ուշադրության: Զարմանք կարող է պատճառել թեկուզ այն հանգամանքը, թե ինչպես վաղարշապատցի հասարակ քարտաշի որդուն այդ խառն ժամանակներում հաջողվել է հասնել իր նպատակին՝ ինչ գնով էլ լինի ընկնել Ռուսաստան: Կրեդով բազմիցս գրկանքներ ու տատապանքներ, ի վերջո 1796 թվականին նա բնակություն է հաստատում Պետերբուրգում: Ավելին, նա համառ կերպով սովորում է ռուսերեն, գրում իր կյանքի պատմությունը, արկածներով ու պատահարներով լի, և հրատարակում այն ռուսերեն, Պետերբուրգում, երկու հատորով, մկարագրադ: Արարատյանի գրքով հետաքրքրվել են Պուշկինը և Գրիբոեդովը:

• • •

1815 թվականին Մոսկվայում հիմնադրվեց արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, հայ մշակույթի վառ օջախներից մեկը: Զանգավ տասը տարի, 1824-ին սկսեց գործել Թիֆլիսում Ներսիսյան մոռաշեն դպրոցը: Այս երկու կրթական հիմնարկների դերը հայ ժողովրդի մշակութային վերածննդի գործում անգնահատելի է: Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի սաներն են եղել շատ և շատ անվանի հայ գրողներ, գիտնականներ և հասարակական գործիչներ:

Պետերբուրգյան գաղութը և ա՛յդ ժամանակ չի կորցնում իր նշանակությունը: 1840-ական թվականներին Պետերբուրգի համալսարանում հիմնվում է հայոց լեզվի ամբիոն, որի առաջին վարիչը եղել է Մկրտիչ Բերդյանը: Նրան փոխարինել է Քերովբե Պատկանյանը, առաջին հայ գիտնականը, որին ընտրել է թղթակից-անդամ Գիտությունների Պետերբուրգյան ակադեմիան: Նրա մահից հետո (չիրիմը գտնվում է Լենինգրադի հայկական գերեզմանոցում) հայ-վրացական բաժանմունքը գլխավորել է Նիկողայոս Մառը:

Նույն՝ քառասնական թվականներին Դորպատում (այժմ Տարտու, Էստոնիա) գործում է հայ ուսանողական մշակութային օջախը: Դորպատի համալսարանում են սովորել Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Գևորգ Դողդիսյանը, Ռաֆայել Պատկանյանը և ուրիշներ: Դորպատը

կապված էր Պետերբուրգի հետ: Աբովյանը քանիցս անգամներ այցի է եկել Պետերբուրգ:

Ավելի սերտ կապված է եղել Պետերբուրգի հետ Ռ. Պատկանյանը, ուր նա տվորել է համալսարանում, և ուր լույս են տեսել «Գամառ Քաթիպայի» արձակ և չափածո երկերը, որոնց թվում՝ նշանավոր «Արաքսի արտասուքը»: 1863—1864 թվականներին Պատկանյանը Պետերբուրգում հրատարակել է «Հյուսիս» շաբաթաթերթը:

Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի արևելյան բաժանմունքն է ավարտել (1850 թվականին) Գաբրիել Սունդուկյանը: Իր մկրտվածությամբ թատերական արվեստին, ինչպես խոստովանել է ինքը, Սունդուկյանը «շատ է պարտական» եղել Գոգոլին և ռուս բեմի ակնյախ փայլուն դեմքերին, ինչպիսիք են Օչեպկինը և Կարատիգինը:

1850—1860 թվականներին հայ գրական և հասարակական կյանքում զգալի դեր է խաղացել Մոսկվայի, Պետերբուրգի ու Դորպատի ուսանողությունը: Այդ շրջաններից են դուրս եկել «Հյուսիսափայլ»-ի աշխատակիցներից շատերը:

Այդ ժամանակաշրջանից, բացի հայտնի գրական գործիչներից, հիշատակության արժանի է Միքայել Միանասարյանը: Նա 1868 թվականին Պետերբուրգում հրատարակեց «Քնար հայկական» ժողովածուն, որը անշուշտ երևույթ էր հայ գրականության պատմության մեջ: Միանասարյանը սիրով և ճաշակով ընտրել և գետեղել է իր կազմած գրքում հայ ժողովրդական երգերից, Մեսրոպ Թաղիադյանի, Հարություն Արամյանի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Սմբատ Ծաֆազի, Հ. Ղ. Ալիշանի, Մկրտիչ Պեշկոպաշյանի և այլ հայ հեղինակների երկերից: Նա ներկայացրել է հայ ընթերցողին նաև առանձին մտուշներ ռուս գրականությունից՝ մի քանաստեղծություն՝ Ժուկովսկուց և չորսը՝ Լերմոնտովից, որոնց թվում նրա «Անդրոքոր» (Հովհ. Համազասպյանի թարգմանությամբ) և «Մարգարեն» (Սո. Նազարյանի թարգմանությամբ):

Մ. Միանասարյանի «Քնար հայկական»-ը իր ժամանակին եղել է հայ ընթերցող հասարակության, առանձնապես պատանիության սիրելի գրքերից մեկը:

1830—1890-ական թվականներին հրատարակվել է Պետերբուրգում Ս. Գյուլամիրյանի «Արաքս» գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսը: 1889 թվականին «Արաքս»-ում պետք է տպագրվեր Ալեքսանդր Ծատուրյանի «Անտեր գերեզման» (սերբական երգերից) հայերենասիրական

բանաստեղծությունը: Վերջինս արգելվեց գրաքննչական մարմինների կողմից և միայն երկար տարիներ հետո տպագրվեց Ծատուրյանի «Բանաստեղծություններ»-ի երկրորդ հատորում (1898 թ.):

Ծատուրյանից հետո, արդեն XX դարում, սլավոն ժողովուրդների հերոսական անցյալին դիմեցին Հովհ. Թումանյանը (սերբական էպոսից) և Ավ. Իսահակյանը («Ժողովրդի քնարը» սերբական լեգենդներից):

XIX դարի վերջերին ուս մամուլը միջնորդ է հանդիսացել հայ և սլավոնական ժողովուրդների միջև (սերբերի, բուլղարների) գաղափարական ու մշակութային կապերի զարգացման գործում:

1892 թվականին Պետերբուրգում լույս տեսավ սերբերի ազատագրական շարժման գործիչ, բանաստեղծ-նկարիչ Զուրա Յակչիչի «Ծերունի Մարկոն» պատմվածքի ուսերեն թարգմանությունը: «Ահա հինգ դար է,—ասում է պատմվածքի հերոսը,—ինչ մենք արյուն ենք թափում հանուն հայրենիքի ազատության»: Չանցավ երկու տարի, Յակչիչի պատմվածքի հայերեն թարգմանությունը ներկայացվեց Պետերբուրգի գրաքննչական կոմիտեին, որը արգելեց հրատարակությունը: Եվ միայն 1895 թվականին


Յակչիչի պատմվածքը լույս տեսավ Թիֆլիսում, «Ժողովրդական գրադարան»-ի գրքաշարքում:

Պետերբուրգի հայ ուսանողության ջանքերով տպագրվեցին հայերեն առանձին գրքույկներով բուլղար անվանի գրող և հասարակական գործիչ Լյուբեն Կարավելովի պատմվածքները (թարգմանված ուսերենից)՝ «Բուլկար ավազակապետը», «Նեդա», «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում» (Պետերբուրգ, 1887), բուլղար ժողովրդական-ազատագրական շարժման կարկառուն գործիչ Վասիլ Լևսկու կենսագրությունը և նրա քաղաքական ծրագիրը (Պետերբուրգ, 1890):

Պետերբուրգյան հայ գաղութը չի դադարեցրել իր գործունեությունը XX դարի ըսկզբներին ևս, երբ հայ-ուսական հարաբերությունները թևակոխեցին իրենց նոր փուլը, երբ հայ ժողովրդի ազատագրական պայքարը միաձուլվեց ուս և Ռուսաստանում ապրող մյուս ճնշված ժողովուրդների պայքարի հետ:

Լեոնիդ Գրադ,

8 փետրվարի 1979 թ.



ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՀԱՎԱՆԱԿԱՆԸ

Է դարի հայ եկեղեցական ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոց տաճարի մասին շատ է գրվել:

Մեծանուն ճարտարապետ Թորոս Թորամանյանի համաբերել կոախումներով պատրաստած վերականգնված գծագրերը երկրորդ կշանք պարզեցին նրա բազմադարյան փյառակներին: Ուստի դժվար է այլևս այդ մասին ունե մի նոր բան գրել:

Թե ո՞վ է եղել նրա մեծատաղանդ ճարտարապետը, որոշ ժամանակ տարակուսական ենթադրությունների հարց էր դարձել: Նույն ինքն՝ Թորամանյանը սկզբնապես խոսում է միայն Ներսես Գ Օհնող կաթողիկոսի մասին, որպես հեղինակի և կառուցողի, գրելով.

«Ով որ արվեստագիտական աչքով կդիտե առօրվան մեր ձեռքը հասած Զվարթնոցի ավերակները և անոր ճարտարապետական բեկորները, կտեսնե, որ ամեն մի բարի փրա առանձնապես դրոշմված են գեղագիտական հմտությամբ օժտված դեկավարի մը շնորհքը և Ներսեսի հատուկ ճաշակը»¹:

Իսկ ո՞վ էր բուն ճարտարապետը: Թորամանյանը սկզբնապես այդ մասին չէ արտահայտվել: Անցողակի կերպով հիշատակում է այն քանդակը, որ գետնոված է եղել շենքի առաջին հարկի պատուհանների կամարադեղների ձևացրած եռանկյունաձև միջոցներում գետնոված շինարար վարպետների քանդակների շարքում, գրելով.

«Մասնավորապես ուշագրավ է պատկեր մը, որում գլխի վեղարը ցուց կուտա, թե եկեղեցական մըն է, որը մեկ ձեռքով բահ և մյուս ձեռքով բրիչ բռնած է, և որո գլխում շուրջը գրված է «Յոհան» անունը»²:

Այդ քանդակը գետնոված է եղել տաճարի արևմտյան ճակատի գլխավոր մուտքի վերևում:

Հետագայում, սակայն, «սկզբնական տարակուսանքից հետո, այժմ արդեն հաստատվելով ընդունված է, որ Յոհանը Զվարթնոցի գլխավոր ճարտարապետն է եղել (Թորամանյան, Լեոնյան, Տոկարսկի, Ղաֆադարյան, Առաքելյան և ուրիշներ)»³ (Նկ. 1):

Այս հոդվածով, սակայն, իմ նպատակն է մի պահ վերաբարձել հիշատակը եկեղեցական այն մեծ դեմքի՝ Ներսես Գ Օհնող կաթողիկոսի, որ, ինչպես ներկայացրած է Թորամանյանը, նախաձեռնողն ու հեղինակըն է հանդիսացել ինքնատիպ և հույակապ այդ շինության, և որի դիմաքանդակը կարծում եմ գտած լինել Զվարթնոցի շինարար վարպետների շարքում:

Վերջերս, երբ վերամշակում էի իմ «Հայկ. տարազ» աշխատությունը, Բ տպագրության պատրաստելու համար, Դ—Է դարերի որպես արհեստավորի ժողովրդական տարազի նմուշներ, վերցրել էի Զվարթնոցի յոթ շինարար վարպետների եղծված քանդակները, որոնցից պատրաստել էի նրանց վերականգնած նկարները: Դրանցից 5-րդը այն ժամանակ համարել էի շարքային մի կդերական, քանի որ թիկունքին քաջառապես շուրջառ էր կրում (նկ. 2): Այս անգամ, սակայն, ավելի ուշադիր զննելով, հանկարծ անդրադարձա իմ սխալին և մի գուտ անողի ուրախությամբ նրանում ճանաչեցի Ներսես Գ Օհնող կաթողիկոսի կերպարը, քանի որ գլխին շուրջ քաջառապես ունի լուսապսակ, ձախ ձեռքը քարոզչական ձևով վեր պարզած, իսկ աջով մուրճ

¹ Թորոս Թորամանյան, Հայկ. ճարտ., Ա հատոր, Երևան, 1942, էջ 257:

² Նույն, էջ 249:

³ Սեդրակ Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 28:

բռնած, որպես խորհրդանիշ շինարարի իր հանգամանքին, ինչպես ավելի հստակորեն տեսնվում է մեր փոքր-ինչ մաքրագծումից ստացված նկ. 3-ում:

Իմ փաստարկներն այսքանով վերջանում են: Ես ուրախ կլինեմ, եթե իմ ենթադրությունները շատերի կողմից ևս հավանական նկատվեն, ու մենք մի փոքր պատկերացումը ունենանք այդ մեծագործ, սակայն անտեսված եկեղեցականին, որի մասին Թորամանյանը դառնությամբ գրել է.

ճառը մասամբ պարզվում է կղերական մատենագիրների ակնարկներից: Հավիտենական դատապարտության տակ է դրվում այդ մեծ մարդը, որ մի հանցանք է գործել հանդեպ եկեղեցական օրինաց. այն է՝ Բյուզանդական Կայսեր ներկայությամբ հունաձես պատարագ մատուցանել թույլ է տվել Դրվա եկեղեցու մեջ և ինքն ալ հունաձես հաղորդություն է առել իր եկեղեցականներով: Հետո, ավելացնում է. «Մեր օրերի փիլիսոփա վարդապետների համար ևս արժեք




«Այս մեծ մարդը ճանցնալու միակ աղբյուրը պետք է լինեն մեր հայ պատմագիրներ. սակայն, դժբախտաբար, պատմագիրներ դարուց ի դարս խոսում են անոր մեծագործության մասին և լիաբերան ներբողում են բանաստեղծական նկարագրություններով, այնուամենայնիվ վերին աստիճան ժյառ և սակավախոս են կանգնողի անձի և արժանիքների մասին: Անշուշտ առանց պատճառի չէ այս երևույթը, և պատ-

շունի այն փաստը, որ մի հունաձես հաղորդություն առնելով, այդ միջոցին փրկեց բովանդակ հայ ժողովրդին ֆիզիքական գոյությունը և ազատեց սրակոտոր լինելն՝ արտակարգ կատաղությամբ և վրեժխնդրությունով լեցված, մեծ բանակով Հայաստան եկող կայսեր ձեռքեն...»⁴:

ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ

⁴ Թորոս Թորամանյան, նույն, էջ 259—260:





ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՇՈՒՇԻԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Շուշին դիտակետի է նման, որը տիրա-
բար նստել է միանգամից ելնող սարահար-
թի բարձունքին և իշխող դիրք ունի բոլոր
չորս կողմերի վրա: Ներքևում, դեպի հյու-
սիս և արևելք՝ դաշտերն են, այգիները,
հյուսիս-արևելյան կողմում Ղարաբաղի
կենտրոն Ստեփանակերտն է: Շուշին հա-
րավից բոլորող ձորով հոսում է Կարկառ
գետը, որն իր անունն ստացել է հունի
բնույթից՝ քարքարոտ է:

Ոմանք կարծում են, թե Շուշին իր անու-
նը ստացել է Շոշ անունով գյուղից, որն
այժմ էլ գոյություն ունի քաղաքի հարավա-
յին կողմում: Լեռն անվանական էր համա-
րում այս ծագումնաբանությունը, գտնելով,
որ «ընդհակառակը, գյուղը բերդից պիտի
ստացած լինի իր անունը, իսկ բերդը, հա-
վանորեն, գոյություն է ունեցել հին ժամա-
նակներում»¹:

Լեռից հիսուն տարի հետո շուշեցի ակա-
դեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը գրել է.
«Մեր կողմից հրապարակվող փաստաթղ-
թերը լրիվ հիմք են տալիս հաստատելու,
որ Շուշվա բերդապարիսպների հիմքերը
դրել է... Ավան հարյուրապետը՝ դեռևս 1724
թվականին, եթե ոչ դրանից առաջ»²:

¹ Լեռ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական
հոգևոր դպրոցի, Թիբլիս, 1914, էջ 80:

² Армяно-русские отношения в первой трети
XVIII века. Сборник документов, т. II, ч. I. Ере-
ван, 1964, стр. XLI («Историческое введение»)
Իրոք որ Շուշին հիշվում է 18-րդ դարից շատ ա-
ռաջ, վկայում է նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի

Անվանի գիտնականի ակնարկած փաս-
տաթղթերը տեղ են գտել Հայկական ՍՍՀ
ԳԱ պատմության ինստիտուտի հրատարա-
կած վավերագրերի ժողովածուի մեջ 199,
200, 212 և այլ համարների տակ: Նշված
վավերագրերից 199-րդը կազմվել է 1724
թվականի հունվարի 4-ին, 200-րդը՝ հուն-
վարի 12-ին, իսկ 212-րդը՝ փետրվարի
22-ին: Առաջին երկու վավերագրերը ստո-
րագրել են Ավան և Միրզա հարյուրապետ-
ները, իսկ վերջինը՝ Թարխանը, Փանին,
Պաղին և Սատեղը: Երկու հարյուրերորդ
վավերագիրը գրվել է «Շոշոյ տղամխումն

անվան Մատենադարանի № 4375 ձեռագրի 264
էջում տեղադրված հիշատակարանը. «Ի Փոսա նա-
հանկ, գաւառս Վարդնթոյ, ի գաղս, որ կոչի Շու-
շոյ, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոս ... ի թվականիս
ՌԻԻ» (1575 թ.): Դեռ ավելին, ներկայիս Շոշ գյու-
ղի հին գերեզմանատան (13—17-րդ դարերից մնա-
ցած) տապանագրերում բազմիցս կրկնվում է «Շո-
շոյ» տեղանունը: Մատենագիտական և վիճագրա-
կան նորահայտ այս հաստատուն տեղեկությունները
հիմք են տալիս նշելու, որ «Վարդնթոյ-Վարանդայի,
Շոշոյ—այժմյան Շոշու կամ Շուշիքենդ գյուղն է,
որից իր անունն է ստացել Շուշի բերդաքաղաքը»
(տես Բ. Ուլուքարյան, նշվ. աշխ., էջ 348):

Կարծում ենք, որ Շուշի անունն առաջացել է շոշ
բառից: Տեղական դարաբաղյան բարբառով ջանել,
սլացիկ, մատղաշ ծառին անվանում են շոշի ծառ,
իսկ հոգնակի թվով՝ շոշոտ: Հավանաբար, բերդա-
քաղաքի և Շոշու գյուղի զբաղեցրած տարածություն-
ները հնում ծածկված են եղել շոշի ծառերով, ան-
տառներով: Իսկ բուսաբան Վ. Պետրովի վկայու-

թիվն հայոց ԱՌԾՀԳ (1724) լուսնարի ամսունմ³:

18-րդ դարի սկզբներին Իսրայել Օրու, հայոց մելիքների, հարյուրապետների, առաջադեմ հոգևորականների եռանդուն գործունեության շնորհիվ, Ղարաբաղի հայերի ինքնապաշտպանությունը վերածվեց ազգային ազատագրական ծավալուն շարժման, որը նպատակ ուներ Ռուսաստանի օգնությամբ թոթափել պարսկա-թուրքական լուծը և քաղաքական անկախություն ձեռք բերել ազգովին:

Ղարաբաղի երկրամասը դառնում է ազգային-քաղաքական զարթոնքի օրրանը, որ ստեղծվում են ռազմական ճամբարներ՝ սղնախներ:

Այդ սղնախներից մեկն էլ Ավան հարյուրապետը կառուցում է 1719—1724 թթ., ներկայիս Շուշի քաղաքի տեղում:

Շուշի սղնախի հիմնադրման ու կառուցման հանգամանքները տեղ են գտել նաև ռուս գեներալ Մատուշկինի 1725 թ. դեկտեմբերի 19-ին գրած նամակում: Ռուսական արքունիքին հղած այդ նամակի մեջ նշված է, որ «Ավան հարյուրապետը անստով Ղարաբաղի բնակչության խնդրանքին, իր 10.000 մարդկանցով չի գնում Գիլան, մնում է սղնախում և բերդ կառուցում»⁴:

Ժամանակի ականավոր մի այլ գործիչ՝ Իվան Կարապետը, Գյանջայի, Ղարաբաղի

և Վրաստանի⁵ դրության առթիվ գրած իր գեղույցում (1724 թ. փետրվարի սկզբներին) դարձյալ հաղորդում է Շուշի սղնախի և նրա տերերի՝ հայ մելիքների ու հարյուրապետների մասին⁶:

Նույն աղբյուրները վկայում են, որ Շուշի սղնախի առաջին պարետը եղել է Թարխան հարյուրապետը: Նշված փաստաթղթերի ժողովածուի բազմաթիվ վավերագրերում ժայռոտ սարահարթը անվանվում է «Շուշի դալա» կամ «Քար», «Քերդ» իմաստով:

Սկզբնական այս «քար» («քերդ»)-ից է առաջացել նաև Քարին տակ գյուղի անունը, գյուղ, որ մինչև օրս էլ պահպանվում է և գտնվում է բերդի ստորոտում, հարավային կողմում, Կարկառի ափին⁷:

Հազմաթիվ աղբյուրագիտական տվյալների առկայությամբ հերքվում է ուրիշ ռուսոմասիրողների կողմից տարածված այն թյուրիմացությունը, որի համաձայն՝ իբր թե Շուշի բերդի հիմնադիրն է եղել Փանահ Ալի խանը⁸:

Շուշի բերդը կամ քարը գտնվում էր Վարանդայի մելիքության տարածքում, հետևաբար և պատկանում էր Վարանդայի տեր Մելիք-Ծահնագարյաններին: 18-րդ դարի կեսերին Վարանդայի մելիք Ծահնագար երկրորդի և Ղարաբաղի մյուս մելիքների միջև առաջացած գծությունները մելիք Ծահնագարին ստիպում են, հարևան մելիքների վրա ազդեցություն ձեռք բերելու համար, ռազմական դաշինքի մեջ մտնել Ծահ-Բուլաղում ամրացած քոչվոր մի ցեղապետի՝ Փանահ Ալիի հետ: Վերջինս Նադիր շահի սպանությունից հետո իր թափառական-խաշմարած ցեղակիցների գլուխն անցած՝ հասել էր Ղարաբաղի մատույցներ:

թյամբ «...սկզբնական շրջանում մարդն այստեղ (Ղարաբաղում—Շ. Մ.) ընդհարվել է անտառների համատարած զանգվածների հետ» (տես В. Петров, ука. раб. стр. 17).

Հիշենք, որ Ղարաբաղի մասին ժամանակին նույն կարծիքն են հայտնել նաև Ստրաբոնը, պարսիկ և արաբ ճանապարհորդները, ինչպես նաև մեր միջնադարի պատմիչները:

Այսօր էլ դժվար չէ բազմաթիվ օրինակներով ցույց տալ, թե ինչպես Ղարաբաղի տասնյակ բնակավայրերի անուններն արտահայտում են տեղանքի բնույթը, տվյալ վայրի բուսական ծածկի տեսակներին: Ավելի հիմնավոր լինելու համար բերենք մի քանի օրինակ: Գյունե, Ղուզե Կալեր, Կանաչ Թալա, Եղծահող, Խունկըթալա, Ծմակահող, Ծաղկածոր, Ղալախան, Թթոտ, Կաղնոտ, Պեխի (բոխի) աղբյուր, Քարազուխ, Քարին տակ, Քարաղբյուր, Սարուշեն, Մոշխմատ և այլն:

³ Армяно-русские отношения в первой трети XVII века. Сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, стр. 57.

⁴ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1958 թ., էջ 121:

⁵ Շուշիի ամրոցի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում վրացական աղբյուրները: 1789 թ. վրաց Հերակլ թագավորի կազմած «Վրաստանին ու Կախեթին մերձակա երկրների նկարագրության մեջ» Ղարաբաղի հայկական իշխանություններին վերաբերվող բաժնում խոսվում է նաև այն մասին, որ «...այստեղ (Շուշի սղնախում—Շ. Մ.) եղել է հինավուրց բերդ, ամրոց, որը հետագայում զավթել է Զիվանշեր ինքնակոչ Փանահ խանը» (Տես А. А. Цагарели, Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, СПб., 1891, стр. 434—435).

⁶ Армяно-русские отношения... т. II, ч. II, стр. 69.

⁷ Армяно-русские отношения... стр. XIII.

⁸ Ф. Шуминский, Шуша, Баку, 1968, стр. 4, Э. Авалов, Архитектура города Шуша. Баку, 1977, стр. 20—24.

րը⁹ և նպատակ ուներ դառնալ այդ բերդի և պաշտպանական տեսակետից բավականին հարմարություններով օժտված մարզի ինքնիշխան տերը: Մելիք Ծաֆնազարի և քոչվոր ասպատակիչի շահերը ժամանա-

բեջանցիներն անվանում են «Գյավոր դալա», այսինքն՝ անհավատի կամ Հալկական բերդ:

1750-ական թվականներին Փանահ խանը տեղափոխվում է Ծոշվա բերդը: Սակայն



Ծոշի քաղաքի կենտրոնական եկեղեցիների թաղամասը (XX դ. սկիզբ):
Առաջին պլանում Խանդամիրյանի թատրոնի շենքը

կավորապես համընկնում են: Մուհամեդ Հասան Կաջարի հետապնդումներից փրկված Փանահ Ալին համոզում է մելիք Ծաֆնազարին, որ նա իրեն թույլ տա տեղափոխվել և ամրանալ իրենց կողմից «Գյավոր դալա» կոչված Ծոշվա անմատչելի բերդում: Ի դեպ, Ծոշիի վերին, ամենաբարձրադիր մասին հնուց ի վեր, մուսուլման ալիմ էլ աղըր-

իր վիճակով այն զորեղ հակառակորդներից պաշտպանվելու հույս չէր ներշնչում: Ահա թե ինչու Փանահ խանը սկսում է տղմախի վերակառուցումը: 1750—1752 թվականներին տևած վերակառուցումների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է պարունակում Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող «Պատմություն գավառին Արցախու» ձեռագիր աշխատությունը¹⁰:

Հակոբ սարկավազ Պողոսյան-Ջաբար-

⁹ Այդ ժամանակաշրջանում Ղարաբաղում տիրող բաղադրական իրադրությունների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կան հետևյալ աշխատություններում.

ա) Платон Зубов, Карабахский астролог, Москва, 1834 г.

б) Ахмедбек Джаваншир, История Карабахского ханства (1747—1805 гг.) Баку, 1961 г.

գ) Րաֆֆի, Խամսայի մեկնություններ, Թիֆլիս, 1895 թ.:

դ) В. Потто, Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества (Мелик Вани и Акоп Юзбашин Атабековы) Тбилис, 1902.

¹⁰ Մատենադարան, ձեռ. 2734:

Առաջին անգամ այս ձեռագիրը գրավել է Ա. Տեր-Գրիգորյանի ուշադրությունը: Նա թարգմանել է այն ռուսերեն և հանձնել Ադր. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտին: Հետագայում պատմաբան Ռ. Տիտանյանը ուսումնասիրել է ձեռագիր աշխատությունը և հանդես եկել «Նորախանութ ցույթեր 1783—1795 թթ. Ծոշիքերդի ներսական պաշտպանության մասին» հոդվածով (տես ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Լրաբեր», 1966, № 9, էջ 28—41):

յան-Շուշեցիին հետաքրքիր ձևով է ներկայացրել Շուշիի բերդի վերակառուցումներն ու դարաքաղցիների ծանր աշխատանքն այդ կառույցի վրա¹¹:

Հակոբ Շուշեցիին բերդավանի առաջին բնակիչների մեջ հիշում է նաև Նախիջևանի Ղազանչի, Ագուլիս և Սյունիքի Մեղրի բնակավայրերից գաղթած հայերին: Շուշի եկող այդ նոր բնակիչները, գրում է նա, օգտվում էին մի շարք արտոնություններից: «Որք ի բնակությունն եկեացեն ընտանեօք ի քաղաքս նորաշէն՝ ազատ են յամենայն հարկաց և ծառայութեանց»¹²:

Լեոն միանգամայն ճիշտ է նկատել, որ «Այն ժամանակ, երբ Փանահ խանը բերդ էր դարձնում ժայռե հսկայական պարիսպներով շրջապատված Շուշին, Արաքսի հովտի այն մասերում, ուր գտնվում են Նախիջևանը, Գողթանը, տեղի ունեցան մի քանի նշանավոր դեպքեր: Ղազանչի գյուղը կոչվում էր Շահկերտ: Բնակիչները պղնձագործներ էին, այդ արհեստից էլ գյուղն ստացել է իր անունը (Ղազանչի՝ կաթսա շինող): 1750 թվին մենք տեսնում ենք այդ գյուղը ապստամբական դրության մեջ. ամրացել է գյուղի մոտ գտնվող սարի վրա, դիմադրում է Նախիջևանի պարսից խանին՝ Հեյրաթ անունով, վրդովված նրա արարքներից»¹³:

Ավելի ծանր դրության մեջ էր գտնվում նույն գավառի Ագուլիս քաղաքը: 18-րդ դարի վերջին քառորդի սկզբին պարսից Ագատ խանը հարձակվում է առևտրական նշանավոր այդ կենտրոնի վրա, հիմնահատակ կործանում քաղաքը և կոտորածից փրկված ագուլեցիներին վաճառքի հանում արևելյան շուկաներում¹⁴:

Պատերազմական այս ավերիչ գործողություններից հետո «հասկանալի է դառնում, թե ինչու ագուլեցիք և ղազանչեցիք ուրախությամբ էին թողնում իրենց բնակավայրերը և հեռանում էին Շուշի՝ ապահովություն գտնելու ակնկալությամբ»¹⁵:

Շուշիի նախնական ազգաբնակչության մի զգալի մասը կազմում էին Լեոնային Ղարաբաղի (հատկապես Վարանդա գավառի) հայ գյուղացիները: Դա ինքնըստինքյան հասկանալի իրողությունն է. նախ այն պատճառով, որ բերդավանը գտնվում էր Մեղիք Օսմանագարի տիրության մեջ՝ Վարանդայի և Խաչենի մելիքությունների սահմանագրվ-

խին, սակավահող գյուղական խիտ բնակավայրերի շրջապատում, հետո էլ Շուշին Շուշի չէր դառնա, եթե չստանար քաղաքամերձ գյուղերի նյութական և քարոյական աջակցությունը: Աճող և զարգացող քաղաքը գյուղից ստանում էր ոչ միայն սննդամթերքներ, անհրաժեշտ հումքի պաշարներ, այլև շինարարներ, ռազմիկներ և այլ կարգի սպասարկողներ: Իսկ թե Շուշիի վերակառուցման ժամանակ որքան հայեր կային Ղարաբաղում, Հակոբ Շուշեցու պատմությունից տեղեկանում ենք հետևյալը. «Հայազգի բնակիչք վիճակին Ղարաբաղու եօթանասուն հազար հոգի թուին ընդ ձեռամբ վիճակաւոր առաջնորդին Բաղդասարայ արքեպիսկոպոսին ի ցեղէն մեծ իշխանապետին Աղուանից Հասան Զալալեանց»:

Շուշիի բնակչության էթնիկական կազմի մասին հավաստի տեղեկություններ է հաղորդում նաև Մեսրոպ Թաղիադյանը իր «Ծանապարհորդությունն ի Հայս» աշխատության մեջ. «Բնակիչք նորա հայք և թուրք: Հայքն հաւուռ էին լինել 500 տունք և ունէին եկեղեցիս երիս, զԱգուլեցոց՝ զՂարաբաղցոց՝ զՂազանչոց այլ քարակերտ և զմեծ եկեղեցիս ի նորոյ շինեցին յայնժամ երկոքին եղբայրքն Թառութեանք՝ Զոհրաբ և Մարկոս»¹⁶:

Շուշիի պաշտպանական համակարգի մեջ առաջնակարգ դեր են խաղացել այստեղի բազմաթիվ քարանձավները: Բերդաքաղաքի հարավային կողմի՝ Հունոտի մեղ և խոր կիրճը, որով աղմկում է արագահոս Քարին տակի կամ ինչպես ռուսներն են անվանել Շուշինկա¹⁷ գետը, երկու կողմերում ունի վիմահերձ քարձր ժայռեր: Քարե այդ հսկա «պատերի» մեջ լուսամուտների պես բացվում են Հունոտի կարան, Ավանա կարան, Ալեքսանա դուզուն, Եղունիկի կարան և Ամարաթներ կոչվող քարայրերը: Ուշ քարեդարյան շրջանի այս բնակավայրերը պատերազմների ժամանակ տեղական հայության կողմից օգտագործվել են որպես ապահով ապաստարաններ, քողարկված թաքստոցներ:

Նշված «...քարայրերս նշանաւոր դեր կատարած են ժամանակին մէն մի անառիկ բերդի չափ օգնած է Արցախի հայոց: Տափաին անհետացած չէ ժողովրդեան յիշողութիւնից և աւանդութիւնիցն քարայրերիս պատմութիւններն: Հունոտի քարայրում նախ երկար ժամանակ մնացած է Աւան-Իզրաշին, որոյ անունը գովութեամբ է յի-

¹¹ Մատենադարան, ձև. 2734, էջ 3:

¹² Մատենադարան, նույն տեղում:

¹³ Առ, նշվ. աշխ., էջ 63:

¹⁴ Հ. Մ. Զաւյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 207:

¹⁵ Ռ. Տիտանյան, նշվ. աշխ., էջ 32:

¹⁶ Մեսրոպ Թաղիադյան, Ծանապարհորդութիւնն ի Հայս, 1848, էջ 226:

¹⁷ Хаджи Мурат Мургуев, Буйный Терек, Орджоникидзе, 1967, стр. 399.

շում Աղուանից Եւայի կաթողիկոսն: Ապա 1826 թուի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ բնակում է քարայրում: Թարխանեան Սափարի Իզբաշին իր քաջերով և շարունակ ալիք հասցնելով Շուշին ա-

Հայ և օտար մատենագրությունը հարուստ տվյալներ է բովանդակում հայ ժողովրդի դարաբաղյան հատվածի հերոսական սիրանքների մասին, նաև այն մասին, որ «...պատմական ոչ մի ժամանակահատվածում



Շուշի. Ղազանչեցոց ա. Ամենափրկիչ եկեղեցին

զատում սովից: Ահա այսպես օգտակար եղած են քարայրներն, այսպես և Ասանայ և Ամարաթներն այրերն»¹⁸:

¹⁸ Մակար Լպ. Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 423:

օտար նվաճողներին երբեկցե չի հաջողվել տիրել Ղարաբաղին»¹⁹:

Ղարաբաղին տիրելու վերջին փորձը

¹⁹ Մ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրամքի պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 659:

ձեռնարկվել է 1826 թ. պարսկական թագաժառանգ Աբաս Միրզայի կողմից: Նա իր 60 հազար ընտիր բանակով նույն թվականի հուլիս-օգոստոս ամիսներին պաշարել է Ծուշին: 48 օր է տևել Ծուշիի հերոսական պաշտպանությունը: Երկրամասի հազարավոր գյուղացիներ, ռուսական փոքրաթիվ զինվորների հետ միասին, 48 օր շարունակ տասնապատիկ ավելի թշնամուն կանգնեցրել են Կարկառի ձորում, Ծուշիի հզոր պարիսպների տակ: Այդ ժամանակամիջոցում Թիֆլիսիում գտնվող ռուսական զորամասերը հնարավորություն են ունեցել նախապատրաստվելու և լայն ճակատով հարձակման անցնելու:

Հայ գյուղացիները, որոնք թշնամու հալածանքներից օր առաջ եկել և ամրացել են Հուճուտի ձորի անձավներում, ոչ միայն անտիկ պահեցին Ծուշի քերդի հարավային թեր, այլև կրակի տակ վերցրին դեպի կիրճը բարձրացող կաճանները (արահետները) ու ժայռե սողանքները: Նրանք անխափան պահեցին ձորակում աշխատող ջրաղացները, որտեղ օրնիքում հացահատիկ էր աղացվում և պաշարված քերդաքաղաքի հազարավոր մարդկանց փրկում վերահաս սովից:

Ռուսական հրամանատարների զեկուցագրերից ու պատերազմական գործողությունները նկարագրող պատմաբանների աշխատություններից երևում է, որ երկրամասի բնակչությունը Ծուշիի պաշտպանության ամենածանր օրերին անգամ գերադասել է զոհվել հայրենի քերդերում, վանքերում, կիրճերում, նվիրական սրբավայրերում, քան գերի ընկնել և մեռնել ստրկության մեջ:

Իժբախտաբար, մինչև օրս հայ պատմաբանասիրության մեջ լրստ արժանվույն չի լուսաբանված Ծուշիի հերոսական պաշտպանությունը, հայ աշխարհագրափնների և ռուս զինվորների ցուցաբերած անթափանց փառքը, կատարած խիզախություններն ու անսահման տոկունությունը²⁰:

Երախտապարտ ժողովուրդն իր փրկարարի՝ ռուս զինվորի հիշատակը հավերժացնելու համար հուշարձաններ է կանգնեցրել, «ռուս» և ռուսական ծագում ունեցող այլ քառերով է կոչել հարազատ երկրամասի բազմաթիվ բնակավայրեր, հանդամներ և աղբյուրներ:

Թվե՞նք դրանցից մի քանիսը. ռուս զինվորի սպանության վայրում, Մարտունուց 7 կիլոմետր դեպի Աղղամ, խճուղու աջ թմբի

²⁰ Այս բացը որոշ չափով լրացրել է օսեթ գրող Հաջի-Մուրադ Մուզուրը իր պատմավեպում, որի մի գլուխը նվիրված է Ծուշիի պաշտպանությանը:

վրա վեր է խոյանում արձանագրություն պարունակող մի հուշատապանաքար: Ռուս անհայտ զինվորի պատվին կանգնեցված անմահության հուշարձաններ կան Ստեփանակերտում, Հաղորդում, Խծաքեղ գյուղի Զիման լեռան ստորոտում:

Իսկ տեղանուններից հիշատակության արժանի են «ռուսեն բըղաղեն (դրոշի) խութ»-ը (Հաղորդի շրջանի Արփագյաղուկ լեռնային գյուղից դեպի հյուսիս), «ռուսեն տուն»-ը (Ստեփանակերտի շրջանի Բաղարա գյուղի մոտ), «ռուսեն դուզ»-ը կամ «ռուսեն դաշտ»-ը (Ստեփանակերտի շրջանի Խընձրիստան գյուղի հանդամասում), «Ռուսներ» կամ «Սունջիկա»-ն (Ստեփանակերտից դեպի արևելք, Տրագետի աջ ափին), «Ռուսեն ժամ»-ը, «Ռուսեն ախպուր»-ը, «Կուրապատկինո»-ն (Մարտունու շրջանի Թաղավարդ, Ղզղալա, Գեորգավան բնակավայրերի մոտ), դարձյալ «Ռուսեն ախպուր»-ը (Մարտակերտի շրջանի Թարթառ գետի աջ ափին, բոխու թափուտ անտառի կրծքում), «Սալդաթ քար» քարայրը (Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում) և այլն:

Հետաքրքիր է այն, որ այդ տեղանուններից մի քանիսի վերաբերյալ պահպանվել են գեղեցիկ ավանդություններ ու ավանդական գրույցներ: Այդօրինակ ավանդություններ ու գրույցներ շատ կան հատկապես աղբյուրների մասին, որոնց հետ ժողովուրդը կապում է իր ամենամիփրական իղձերն ու զգացմունքները խաղաղության, ազատության, երկար կյանքի, սիրո և այլ բանասանությունների հետ²¹:

ՂԱԶԱՆԶԵՑՈՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՑԻՆ

Լեռնային Ղարաբաղում 17—19-րդ դդ. եկեղեցիները հիմնականում կառուցված են բազիլիկատիպ, առանց գմբեթի: Այս երկրային գլխավոր պատճառը տնտեսական ու քաղաքական ծանր դրությունն էր: Երկրամասը, ճիշտ է, դարեր տևող ավերածություններից հետո, Խամսայի մելիքությունների ժամանակ օգտվել է կարճատև խաղաղությունից, որի շնորհիվ էլ վերակառուցվում էին ավերված աշխարհիկ և պաշտամունքային շենքերը, և նույնիսկ, նորերն էին կառուցվում: Սակայն դրանք ունեին համեմատաբար պարզ հորինվածքներ և

²¹ Ծան օգտակար գործ է կատարել բանահավաք Մ. Առաքելյանը, հավաքելով և գրի առնելով այստեղի ռուսական ծագում ունեցող տեղանունները և դրանց հետ կապված ավանդություններն ու գրույցները:

իրականացվում էին քիչ ծախսերով, և կառուցումն ավարտելու համար էլ կարճ ժամանակ էր պահանջվում:

Հարաքաղում (հիշյալ դարերում) կառուցված բոլոր հուշարձանների մեջ հան-

Այս կառույցներում էլ դարաքաղցի շինարարները օգտագործել են հին ավանդույթը և վերադարձել գմբեթավոր կառուցվածքների տիպին, որն ամենատարածվածն էր հայ ճարտարապետության մասերի շրջա-



Ծուշի. Հազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցու ներսից մի հատված

դիպում ենք միայն վեց գմբեթավոր եկեղեցու, որից հինգը՝ Ծուշի քաղաքում: Դրանցից մեկը Հազանչեցոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցին է: Իսկ մյուսները՝ Կանաչ-ժամ, Ագուլեցոց, Մեղրեցոց ու Կուսամաջ եկեղեցիներն են:

Շուրջ 9—14-րդ դարերում: Ընդամենը, հենց այս կառույցներում հայ քարգործ վարպետները դրսևորեցին խոշոր ճարտարապետական գլուխգործոցներ ստեղծելու իրենց ընդունակությունը, որ քաղաքական ու տնտեսական դաժան ժամանակներում ժողովուր-

ղը պահել էր իր ներսում՝ անթեղած կրակի պես:

Ծուշվա պարծանքն է հանդիսանում Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ տաճարը: Այդ հոյակապ կոթողի հատկանշական կողմերից մեկն է շրջապատի ու տեղանքի հետ ունեցած նրա սերտ կապն ու ներդաշնակությունը:

Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցին խոշոր չափերի ճարտարապետական հուշարձան է, որի ճակատները երեսպատված են տեղական սրբատաշ կաթնագույն կրաքարով: Փառահեղ գմբեթը հենված է չորս զանգվածիչ պուլների վրա: Արտաքին ձևերը շքեղ են, զարդաքանդակներ են արված ամենուրեք, հատկապես դռների, լուսամուտների կամարների վրա:

Տաճարի հարավային դռան գլխամասում կա հետևյալ շինարարական արձանագրությունը.

«Ծնունդիս և ողորմութեամբ ամենագործին Աստուծոյ կառուցեալ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ և տրօք բարեպաշտօն ժողովրդեանց սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցոց Ծուշի քաղաքիս, որոյ շինութիւնն սկսեալ ի 1868 ամի... աւարտեցաւ ի 1887 ամի...»²²:

Ավելի քան 34,7 մետր երկարություն, շուրջ 33 մետր լայնություն ունեցող ուղղանկյուն հատակագծով այս կոթողի չորս ճակատներում դուրս են գալիս բազմաճիտ արքիդներ, որոնք հուշարձանին տալիս են խաչաձև: գմբեթավոր հորինվածք: Չորս մույթերի վրա բարձրացող գմբեթը տեղադրված է ճիշտ դահլիճի կենտրոնում: Եկեղեցին ունի միատեսակ և մուգ չափերի երեք մուտք՝ արևմուտքից, հարավից և հյուսիսից: Դռների վերևում բացվող փոքրիկ լուսամուտները խաչաձև են և կերտված են սրբատաշ քարերից: Դռների վերնամասում մեկ ամբողջական քարից կերտված շրջանակի ներսում կան պատկերաքանդակներ: Լուսամուտներից յուրաքանչյուրը հինգ մետր բարձրություն և մեկ մետր լայնություն ունի:

Թմբուկի թեթևացման, նրա ծավալին սլացիկ տեսք տալու համար 16 միստերը մշակված են ուղղաձիգ համաչափություններով, իրար մեջ ներգծված պատուհաններով: Իսկ միստերն իրենց հերթին վերևում ավարտվում են ճակտոններով, որոնց գագաթներից սկսվում են գմբեթի բրգաձև սրածայր ծավալի կողերը:

Ամառանոցային քաղաքի ուղիղ կենտրոնում նա իր վեհատեսիլ կառուցվածքով զգալիորեն բարձր է բոլոր շենքերից և շըր-

ջապատի կանաչապատ բլուրների խորքապատկերի վրա իշխում է ոչ միայն սարահարթին, այլև իր «տիրապետության» սահմաններն է տարածում Կարկառի ընդարձակ հովտի վրա:

Եթե համեմատենք գմբեթի և ամբողջ հուշարձանի բարձրությունների հարաբերությունները, հայ ճարտարապետական գմբեթավոր բազիլիկների դասական ներկայացուցիչներից մեկի՝ Էջմիածնի ս. Գալանե եկեղեցու համապատասխան հարաբերության հետ, կտեսնենք, որ Ղազանչեցոց եկեղեցու հորինվածքում գերիշխողը գմբեթն է, և ամբողջ կառուցվածքը ծառայում է պատվանդան՝ անսովոր մեծության գմբեթի համար: Իզուր չէ, որ նա համարվում է Հայաստանի ամենախոշոր պաշտամունքային կառուցվածքը:

Գմբեթը (ինչպես երևում է նկարից) ոչ թե ճնշում է հուշարձանի հիմնական ծավալին, այլ պոկվում է նրանից և իր նագելի տեսքով վեր է խոյանում: Այսպիսի տպավորությունն արդյունք է առաջին հերթին գմբեթի վրա օգտագործած շինանյութի: Թմբուկի կաթնագույնը, հակադրության մեջ մտնելով եկեղեցու տանիքի գորշականաչավուն կտրված ծավալի հետ, ստեղծում է թեթևություն, կենսուրախության տպավորություն:

Ղազանչեցոց եկեղեցուց փոքր-ինչ հեռու, նրա արևմտյան մասում վեր է խոյանում եռահարկ զանգակատունը: Առաջին հարկի վերնամասի անկյուններում դրված են չորս քարակոփ, մարդահասակ արձաններ, «...որի ահարկու տեսլամբ փշում են փողերը»²³: Չանգակատունը կառուցել է շուշեցի Մկրտիչ Խանդամիրյանը:

Այստեղ, եկեղեցու արևմտյան մասում է գտնվում շուշեցի հայտնի քարեգործ Թադևոս Թամիրյանցի գերեզմանը՝ սև, հրդկված գրանիտյա տապանաքարով հանդերձ: Ծուշի քաղաքի տարբեր կողմերում կան հայկական վեց գերեզմանոցներ՝ տաարանագրեր պարունակող մահարձաններով:

*
*
*

Քաղաքի մյուս հետաքրքիր հուշարձանը ադրբեջանական ճարտարապետական արվեստի նմուշ հանդիսացող մզկիթն է, որը կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Մզկիթը վերջին տարիներին հիմնովին վերանորոգվել և դարձել է Ծուշի քաղաքի պատմության թանգարանը:

Քաղաքի պատմական հուշարձանների մեջ համեմատաբար լավ են պահպանվել


²² Արցախ, էջ 138:

²³ Արցախ, էջ 142:

Ռեալական, Հայոց թեմական, Մարիամյան դպրոցների շենքերը, հին ջրամբարները, աղբյուր-հուշարձանները, Կանաչ ժամ եկեղեցին, երկհարկանի իջևանատունը, Ագուլեցոց եկեղեցին (առանց գմբեթի) և այլ

են եղել Հայաստանի մյուս շրջաններում, հատկապես Մեղրիում և Գորիսում:

Ծուշիի շինարարների զգալի մասը մեղրեցի, ագուլեցի և Զանգեզուրի այլ բնակավայրերից եկած լավագույն վարպետներն



Ծուշի. Կանաչ ժամ եկեղեցին հարավ-արևմտյան մասից

հարտարապետական շենքեր, որոնք 1905, 1920 թթ. ավերածությունների չեն ենթարկվել: Հիմնականում 19-րդ դարից հուշ մնացած նշանավոր այս հուշարձանները Հայաբաղի հազարավոր քարգործ վարպետների տաղանդով կերտված ստեղծագործություններ են: Այս կարևոր հանգամանքն է, որ ոչ հեռու անցյալում անտեսվել է Ծուշիի քաղաքաշինարարության և ընդհանրապես պատմությամբ զբաղվող որոշ հեղինակների կողմից:

Ծուշիի (բազմասեռնյակ, սպիտակ կրաքարից կառուցված) բնակելի շենքերը հիմնականում եղել են 2—3 հարկանի: Շենքերն իրենց բակային պատշգամբների և լանջավոր ծածկերի հետ ուղղանկյուն հատակագծով պրիզմատիկ ծավալներ ունեին, որոնք երկարությամբ տեղադրված էին փողոցներին ուղղահայաց:

Հարկ է նշել, որ Ծուշիի շինարարական, հարտարապետական աշխատանքների կատարման օրերներն ու ձևերը տարածված

էին: Վերջիններս դարաբաղի շինարար վարպետների հետ միասին կառուցելու իրենց փորձը, հմտությունն ու եռանդը ներդրել են Ծուշիի քարգավաճման գործին: Գրավոր վկայություններից երևում է, որ Ծուշիի շատ բնակելի շենքեր կառուցվել են առանց նախագծի, շինարար վարպետների մտահղացմամբ: Կարելի է ասել, որ այդ շենքերը գուտ ժողովրդական ստեղծագործություններ են:

Հետագայում, սովետական իշխանության տարիներին, Ստեփանակերտ քաղաքի կառուցապատման ընթացքում օգտագործվել են Ծուշիի քաղաքաշինարարական հարուստ ավանդույթները:

Ծուշին 19—20-րդ դարերի սահմանագրվելից Անդրկովկասի ամենաձաղկուն ու ամենաշեն քաղաքներից մեկն էր հանդիսանում: Այն հայտնի էր որպես համահայկական մշակութային և թատերաբաժնետանկան կենտրոններից մեկը:

1897 թ. Ծուշին ուներ 33,252 բնակիչ:

Հայերի թիվը հասնում էր 20.584-ի, մահ-մեղականներին՝ (աղբբեջանցիներ) 12.668-ի²⁴:

Մինչև Օուշի քաղաքի ավերումն այստեղ լույս էր տեսնում 22 անուն թերթ, որից 20-ը հայերեն, 2-ը ռուսերեն: Բացի դրանից, քաղաքի երեք տպարաններից դուրս է եկել մեկ 150 անուն գիրք և բրոշյուր: Առաջին հայերեն գիրքը Օուշիում տպագրվել է 1828 թվականին²⁵:

19-րդ դարի վերջին քաղաքում գործում էին վեց դպրոցներ և ուսումնարաններ: Առաջին խոշոր դպրոցը՝ Հայոց թեմականը, բացվել է 1848 թվականին, քաղաքայինը՝ 1875 թ., ռեալականը՝ 1881 թ., օրիորդաց Մարիամյան արքունական ուսումնարանը՝ 1894 թ., աղբբեջանականը՝ 1896 թ. և այլն²⁶:

Հայոց բարեգործական ընկերության տեղական ճյուղը 1889 թ. քաղաքային ակումբում, կամ ինչպես այն ժամանակ շուշեցիներն էին ասում՝ «կլուբ»-ում²⁷ ստեղծում է գրադարան-ընթերցարան, որտեղ կենտրոնացվել էր շուրջ 10 հազար կտոր տարբեր բնույթի գրքեր, ամսագրեր:

Ի դեպ, շուշեցիների հանգստի և ժամանցի սիրված վայրն էր համարվում «Թուխանի» (այդպես էր կոչվում քաղաքի հրապարակը) վրա կառուցված եռահարկ գեղեցիկ ակումբը: Քաղաքն ուներ մեծ գրոսայգի, որտեղ հավաքվում էին հիմնականում հարուստները, իսկ մյուս խավերը գրում էին մահատակի գերեզմանը և մոտակա ուխտատեղիները²⁸:

Թատերա-երաժշտական կյանքի աշխուժացմանը նպաստեց մեծ 1891 թվականին Օուշիում կառուցված թատրոնի շենքը: Այն կառուցվել է մրա ղեկավար Մկրտիչ Խանդամիրյանի կազմած միջազմով:

Հանդիսատեսը 350 տեղ ուներ:

Թատրոնի բացումը տեղի է ունեցել 1891 թվականի հուլիսի 7-ին: Տեղի ինքնագործ թատերական խմբի մասնակցությամբ ներկայացվել է Մուրացանի «Ռուզան» պատմական դրաման:

Խանդամիրյանի թատրոնը մոտ 15 տարի շարունակ գրավել է այն ժամանակվա մեր բոլոր հայտնի դերասանների և թատե-

րական խմբերի ուղադրությունը, որոնք մեծ սիրով ամեն տարի եկել են Օուշի և ներկայացումներ տվել՝ նպաստելով ժողովրդի լուսավորության գործին և զարգացնելով նրանց գեղարվեստական ճաշակը:

Օուշվա ծաղկած թատրոնը, 1905 թվականի ընդհարումների ժամանակ, մեկ օրվա մեջ կողոպտվեց քաղաքի ամբողջ կենտրոնի հետ միասին, թողնելով միայն խղճուկ ավերակներ:

1920 թ. մարտի 23-ի գիշերը մուսավաթական խումբների ձեռքով կործանվեց Օուշի քաղաքի մեծ մասը՝ հայկական հատվածը: Ավերվեցին, մոխրակույտների վերածվեցին մոտավորապես չորս հազար բարեկարգ, երկհարկանի տներ, տասնյակ մշակութային, վարչական գեղեցիկ շենքեր, ամալացան սալահատակ փողոցները, շարքից դուրս եկավ Անդրկովկասում առաջինը կառուցված քաղաքային կոյուղին, այրվեցին ու թալանի ենթարկվեցին հարուստ գրադարանները, տպարանները, ուսումնական հաստատությունները, հարյուրավոր խանութներ ու պահեստներ:

Մի գիշերվա ընթացքում քաղաքի ազգաբնակչությունը 65 տոկոսով պակասեց: Հետագայում այդ ամենի մասին մեծ դառնությամբ է հիշել Սերգո Օրջոնիկիձեն, որը անձամբ 1920 թ. մայիսին եղել է Ղարաբաղում, տեսել է Օուշիի ավերակները: «Այսօր ես սոսկումով եմ հիշում այն պատկերները, որ մենք տեսել ենք 1920 թվականի մայիսին, Օուշիում: Հայկական գեղեցիկ քաղաքը եղել է հիմնահատակ ավերված, կործանված...»²⁹:

*
*
*

Օուշիի լավագույն հուշարձանների շարքին են դասվում քաղաքի տարբեր մասերում գտնվող քարակոթի աղբյուրներն ու կարգավորիչ ջրամբարները: Դրանք բոլորն էլ կերտված են սրբատաշ տեղական կաթնագույն կրաքարից, հայկական աղբյուր-հուշարձանների ճարտարապետական մոտիվներով: Շուրջ 100 տարի է, ինչ շուշեցիներն իրենց ջրի պահանջները բավարարելու համար դիմում են այդ աղբյուրներին: Քաղաքի հնագույն ջրատարն անց է կացվել 1871 թ. Խուրշուդ հանու մաթալանի միջոցներով, Հայրապետ Փիրյանցի և Աղաջան Դանիելյանցի միջոցով ու նրանց անմիջական ղեկավարությամբ: Առաջին երկու աղբյուր-հուշարձանները կառուցվել

²⁴ Տե՛ս Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1897 թ., էջ 31, Թ. Տեր-Վասպարյան, Օուշվա բնակչությունը 18-րդ դ. մինչև մեր օրերը, ՀՍՍՀ ԳԱ, «Տեղեկագիր», 1969 թ., № 9, էջ 74:

²⁵ Թվերը քաղված են Ա. Ավագյանի Նյութեր Ղարաբաղի մամուլի պատմությունից, Երևան, 1969 թ.:

²⁶ Վարանդա, էջ 16:

²⁷ Նշվ. աշխ., էջ 28:

²⁸ Նշվ. աշխ., էջ 28:

²⁹ Прием делегации Сов. Азербайджана руководителями партии и правительства в Кремле, Партиздат ЦК ВКП—(6), 1936, стр 60—63.

են նույն տարում, մեկը «Եկեղեցիների հրապարակում» հայկական քաղաքամասում, իսկ մյուսը խանական պալատի մոտ՝ աղըր-բեջանական հատվածում: Այդ ժամանակ հիմնվել են նաև ութանկյունի երկու գեղեցիկ ջրամբարներ: Սակայն աճող ու զարգացող քաղաքի համար երկու աղբյուրների ջուրը շատ քիչ էր և այդ բացը լրացվեց 1896 թ.: Շուշեցի առևտրական Թաթևոս Թամիրյանի կողմից հատկացված 100 հազար ոսկի դրամով անց է կացվում ավելի քան 18 կմ երկարություն ունեցող երկրորդ ջրատարը:

Այդ առթիվ «Կովկաս» թերթը գրել է. «1896 թ. սեպտեմբերի 8-ին մեծ բազմության ներկայությամբ քաղաքի իշխանությունները միանգամայն հանդիսավոր իրադրությամբ մեծարեցին Թամիրյանին, որի միջոցներով կառուցված ջրատարը պարիսպներից ներս մտավ քաղաք, իր հետ բերելով լեռնային աղբյուրների կենսարար ջուրը»³⁰:

Հնուց ի վեր շուշեցիների հանգստի ամենամիլիարական տեղերից մեկն է համարվել Պեխի հոշակավոր աղբյուր-հուշարձանը: Այն գտնվում է Բոխու թավուտ անտառի խորքում, բարձրադիր ու վեհաշուք լեռան ստորոտում, քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում, մոտ 2—3 կմ հեռավորության վրա:

Անցյալ դարի կեսերին շուշեցի Իսահակ անունով մի վարպետ բարեկարգում է այդ աղբյուրը, կառուցում հուշարձան, բնդարձակում ջրավազանը, թողնում արձանագրություն: Երախտապարտ շուշեցիները աղբյուր-հուշարձանը կոչեցին Իսահակի աղբյուր:

³⁰ Газета «Кавказ», 1896, № 249.

Արցախի լեռնաշղթայի կենտրոնական հատվածի արևմտահայաց փեղերին են գտնվում Կանաչ թալա, Եղցահող, Դարաղբշլաղ, Հին շեն գյուղերը:

Շուշվա շրջանի այս հատվածում Կանաչ թալայի տարածքում, հուշարձանները դարձյալ բազմաքանակ ու բազմաձև են:


Ահա Լիսագոր բնակավայրի հարավ-արևելյան մասում է գտնվում «Օջախի քար» կոչվող կամարակապ կամուրջը: Տեղացիների ավանդությունների համաձայն այն կառուցել է Թաղունց Զոնգի անունով մի հաղթանազամ մարդ:


Տաշտահող (դաշտահող) տեղամասում կան երկու դամբարանաբլուրներ, որոնցից մեկի մասնակի պեղման ժամանակ հայտնաբերվել են կավե անոթներ, ուլունքներ, մարդու և կենդանու ոսկորներ:

Մեծ Բերդաձոր (այժմ՝ Կիրով) գյուղի հարավային մասում վեր է խոյանում մի հիանալի եկեղեցի: Դռան ճակատակալ քարի վրա գտնվող արձանագրության համաձայն այն կառուցվել է 12-րդ դարում: Եկեղեցու շրջակայքում գտնվում է հին, բայց բավական մեծ գերեզմանոցը, որի համար էլ վայրը կոչվում է «Կլըրըզմանոտ»:

Այդ նույն գյուղի հյուսիս-արևելյան մասում է գտնվում Պարին Պիժ (Պարոն բժիշկ) կոչվող կոթողը: Իսկ դրանից 300 մետր հեռավորության վրա շինված է մեկ ուրիշ՝ Ծաֆադա անունով հուշարձան: Դրանք 17-րդ դարի շինություններ են, որոնք ծառայել են իբրև սրբավայրեր:

Այսօր Դարաքաղը ինքնավար մարզ է և մտնում է Ադրբեջանական ՍՍՀ կազմի մեջ՝





ՍԻԱՄԱՆԹՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳՐԱԿԱՆ—ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ
ԾԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Սույն թվականի մարտի 23-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում արևմտահայ մեծանուն բանաստեղծ Միամանթոյի (Ատոմ Յարճաճյան) ծննդյան 100-ամյակին նվիրված գրական-երաժշտական երեկո:

Երեկոն կազմակերպել էին հոգևոր ճեմարանի ավարտական Գ լսարանի սարկավագ ուսանողները:

Երեկոյին ներկա էին Վեհափառ Հայրապետը, տ. Սիոն և տ. Հուսիկ արքեպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հյուրեր:

Երեկոն սկսվում է խմբովին արտասանված «Հայր մեր»-ով: Ապա ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է «Ճեմարանի քաղերգ» խմբերգը:

Այնուհետև երեկոյի բացման խոսքով հանդես է գալիս Գ լսարանի ուսանող Վաչագան արկ. Ավետիքյանը, որը նշում է.

«Վերջերս մեր ժողովուրդը մայր հայրենիքում և սփյուռքում մեծ ոգևորությամբ տոնեց իր վաստակաշատ գավակ, արևմտահայ գրականության պանծալի դեմքերից մեկի՝ բանաստեղծ Միամանթոյի ծննդյան մեկուարտ հոբելյանը:

Այնուամենայնիվ, գրական մկրտությունը Կ. Պոլսում ստացած և Ապրիլյան եղեռնին

զոհված մեծ բանաստեղծը, որպես մի երեկույթ, որպես մի լուսատու աստղ, հայտնվեց հալ գրականության երկնակամարում և իր ստեղծագործական վաստակով հայրենասիրական շունչ ու ոգի հաղորդեց հայ սերունդներին:

Իր գրական ստեղծագործության բովանդակությամբ, իր տաղանդի հզորությամբ և շքեղությամբ արևմտահայ գրականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Միամանթոն:

«Բոցավառ տաղանդ»,—այսպես է բնութագրել Միամանթոյին հայ անվանի վիպասան Ալ. Ծիրվանզադեն: Նա իր ստեղծագործական վարպետությամբ դարձավ մեր ինքնատիպ քերթողական արվեստի պալծառ ներկայացուցիչներից մեկը:

Մեծանուն բանաստեղծը այսօր մեզ հետ է: Նրա ստեղծագործության լավագույն ավանդները ապրում են՝ արգասավորելով սերունդների գրական աշխատանքը: Սերունդները չեն կարող մոռանալ այս տաղանդաշատ բանաստեղծին, որն իր բոցեղեն արվեստով դարերի համար քանդակել է ազգային տառապանքի պատկերը, երգել հալ ժողովրդի տառապանքն ու հայրենասիրական ոգին:

Բացման խոսքից հետո հրավիրվում է օրվա բանախոս, հոգևոր ճեմարանի Գ լսարանի ուսանող Հովսեփ արկ. Պալըզյանը,

որը սպառիչ կերպով ներկայացնում է Միամանկության կյանքը, նրա ստեղծագործական հարուստ ժառանգությունը, միաժամանակ վերլուծելով բանաստեղծի «Հույսի ճամփան», «Դարերու վրեժը», «Մահվան տեղիք», «Դաշույն», «Որդին իր հորը», «Ափ մը մոխիր հայրենի տուն», «Գյուտին փառքը» և մի շարք այլ ստեղծագործություններ:

Բարեշնորհ սարկավազը իր բանախոսությունը ավարտում է Միամանկության ուղղված մեծարման հետևյալ խոսքերով.

«Իրոք անմահ է Միամանկոն, մի մշտավառ հուր-հոգի է նա, մի հզոր շունչ, իր մտքով, հույզերով, բանաստեղծական տարերքով և վարպետությամբ զարմանալի մի անհատականություն: Դարեր շարունակ փայլելու է նրա տաղանդն ու արվեստը, հայ մտքի պատվանդանի վրա և ասելու՝ իր խոսքը: Նահատակ բանաստեղծի մահվանից տասնյակ տարիներ են անցել, տակայն այդ տարիները եղել են ոչ թե մոռացումի, այլ նրա գեղարվեստական երկերի տարածման տարիներ»:

Բանախոսությունից հետո գեղարվեստական բաժնում կատարվում են արտասանություններ Միամանկության մի շարք ստեղծագործություններից: Այսպես՝ Վաչագան արկ. Ավետիքյանը (Գ լսարան), Հայկ Չիլինգարյանը (Բ լսարան), Պետրոս Ասողկյանն ու Թորոս Մելեկիչյանը (երկուսն էլ Գ դասարան) և Վիգեն Քեչեջյանը (Ա դասարան) հաջորդաբար արտասանում են «Գյուտին փառքը», «Նամակ, եղբայրն իր եղբորը», «Հարսին երագը», «Ափ մը մոխիր հայրենի տուն» և «Արցունքներս» բանաստեղծությունները:

Երեկոյի երաժշտական բաժնում կատարվում են խմբերգեր, մեներգեր և դաշնամուրալին նվագներ:

Խմբերգերից՝ Կոմիտաս վարդապետի

«Ով մեծաքանչ դու լեզու», «Ով հայկազունք», «Բամ փորոտան» և Մակար Եկմալյանի «Տէր կեցո» ստեղծագործությունները կատարում են ճեմարանի ուսանողները՝ դեկավարությամբ ճեմարանի ելույթական երաժշտության դասախոս, հանրապետության վաստակավոր արտիստ Խորեն Մելիսանեջյանի:

Կոմիտաս վարդապետի «Անտունի», «Լե լե լաման», «Ծրն էր ուրբաթ», «Կարալիկ» և Մ. Եկմալյանի «Կեցցե Զեյթուն» մեներգերը հաջորդաբար կատարում են Վահրամ արկ. Տերտերյանն ու Վաչագան արկ. Ավետիքյանը (երկուսն էլ Գ լսարան), Հայկ Չիլինգարյանը (Բ լսարան), Արա Դաքեայանը (Գ դասարան) և Արա Բոյաջյանը (Ա դասարան):


Արամ Խաչատրյանի «Տոկատուն», Բախի «Ֆա մաժոր ֆուգան», «Հայկական պար» և «Ֆրանսիական երգ» ստեղծագործությունները դաշնամուրի վրա կատարում են Խաչիկ արկ. Մարտիրոսյանը (Գ լսարան), Թորոս Մելեկիչյանն ու Արա Դաքեայանը (երկուսն էլ Գ դասարան) և Սարգիս Գոտուզյանը (Ա դասարան):

Երեկոյի ավարտից առաջ, Վեհափառ Հայրապետի անունից, իր օրհնության և գնահատանքի խոսքն է ասում տ. Միոն արքեպ. Մանուկյանը՝ ուղղված ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին, ուսանողներին և հատկապես գրական-երաժշտական հաճելի երեկոն կազմակերպող Գ լսարանի սարկավազներին՝ ցանկանալով նրանց հարատևող ուժ, կորով և հույս՝ իրենց կյանքի և հատկապես Հայաստանից եկեղեցու ծառայության նվիրական օրծի ճանապարհին:

Երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԱՉԱԳԱՆ ԱՐԿ. ԱՎԵՏԻՔՅԱՆ





ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԻԼԽԱԶՅԱՆԻ
(1897—1979)

1979 թ. հունվարի 25-ին Թբիլիսիում, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց տ. Գրիգոր ավագ քհն. Իլխազյանը:


Տ. Գրիգոր ավագ քահանան (ավագանի անունով՝ Ռուբեն) ծնվել է 1897 թ. Կիրովաբադում, արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական վարժարանում և վաղ հասակից ծառայել իրենց գյուղի եկեղեցում և մասնակցել կրոնական արարողություններին:

1954 թ. ա. Հոփսիսիմե վանքում ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ տ. Սահակ արքեպ. Տեր-Հովհաննիսյանի, և ուղարկվել Վրաստան՝ Թբիլիսիի Էջմիածնեցվոց ա. Գևորգ եկեղեցի, որպես հոգևոր հովիվ:

1973 թ. Վրաստանի հայոց թեմակալ առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանի միջնորդությամբ իր եկեղեցական գործունեության համար Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի կոնդակով տ. Գրիգոր քահանային շնորհվում է ավագության պատիվ:


Ա/թ. հունվարի 28-ին, Կիրակի օրը, Թբիլիսիի Էջմիածնեցվոց ա. Գևորգ եկեղեցում կատարվում է հանգուցյալ քահանայի վերջին օծման և թաղման կարգը՝ նախագահությամբ տ. Գևորգ եպիսկոպոսի և մասնակցությամբ հոգևորականաց դասի և ժողովրդի:

Հանգուցյալի կյանքի և եկեղեցական գործունեության մասին դամբանական է խոսում սրբազան հայրը՝ վեր հանելով տ. Գրիգոր ավագ քահանայի ծառայությունները եկեղեցում և իր հավատացյալ ժողովրդին:




Թաղումը կատարվում է Թբիլիսիի Պետրե-Պավլե գերեզմանատանը:

Հանգիստ տ. Գրիգոր ավագ քահանայի անյուններին:



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—(Գրախոսություն) Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Համարիստոնէական սուրբեր, Իսթանպուլ, 1978, 233 էջ	3
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ, ՊԱՐԳԵՎ ՇԱՀԱԶՅԱՆ—Նոր Կտակարանի գրաբար ընագրից կատարված արևմտահայերեն նոր թարգմանության հրատարակությունը	11
Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը Մայր Աթոռում	12
ՄՅՈՒՌՈՒՆ ԱԲԵՂԱ ԳԸՎԸԳՅԱՆ—Ուխտի անդրանիկ քարոզ	13
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	15
ԱՐՏԱԿ ՔԶՆ, ՍԻՄՈՆՅԱՆ—(Գրախոսություն) Պատմության համար, Եկեղեցականի մը կենանքի հանգրուանները	18
Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ—Յակոբայ Սրճեցույ «Լարք արքայն Դանիելի Գալաշացույ»	22
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ—Պետերբուրգ-Լենինգրադ	41
ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ—Ենթադրությունից դեպի հավանականը	48
ՇԱՀԵՆ ՄԿՐՏՅԱՆ—Շուշիի պատմական հուշարձանները	50
ՎԱՀԱԳԱՆ ՍՐԿ, ԱՎԵՏԻՔՅԱՆ—Սիամանթոյի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական-երաժշտական երեկո հոգևոր ճամարանի հարկի տակ	61
Հանգիստ արժանապատիվ տ. Գրիգոր ավագ քահանա Ելիազյանի	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ
«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26.03.1979 թ.: Ստորագրված է տպագրության 23.04.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 261

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.